



ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՅԻ  
(Հողվածների ժողովածու)

# ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ

Հոդվածների ժողովածու

Երևան  
Լուսակն  
2026

ՀՏԴ 929:27(082)

ԳՄԴ 86.37g43

Մ 792

**Ժողովածուն փպագրության է երաշխավորել  
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Բանասիրական ֆակուլտետի խորհուրդը**

**Խմբագիր՝ Մայա Գրիգորյան**

*Բանասիրական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն*

**Մխիթար Սեբաստացի: Հոդվածների**

Մ 792

Ժողովածու.- Եր.: Լուսակն, 2026.- 100 էջ:

*Հոդվածների ժողովածուն նվիրված է Վենետիկի Ս. Ղազար  
կղզու Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաս-  
տացու կյանքի ու գործունեության առանձին դրվագներին:*

*Նախատեսված է հայ գրականությունը դասավանդող ուսու-  
ցիչների և բանասիրական ֆակուլտետների ուսանողության ու  
ընթերցող լայն լսարանի համար:*

ՀՏԴ 929:27(082)

ԳՄԴ 86.37g43

ISBN 978-9939-979-86-1

© Լուսակն, 2025

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՆՎԻՐՎՈՒՄ Է  
ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԱՅՈՐԴԻ,  
ՎԵՆԵՏԻԿԻ Ս.ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒ  
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴԻՐ  
ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՅՈՒ ԾՆՆԴՅԱՆ  
350-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ



## ՆԱԽԱԲԱՆ

Այս տարի լրանում է հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկի՝ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու ծննդյան 350-ամյակը:

Մխիթար Սեբաստացու կյանքն իր ազգին ու քրիստոնեությանն անմնացորդ նվիրված աներևակայելի կամքի ու խիզախության տեր մարդու հրաշքներով լի պատմություն է: Ծնվել է Սեբաստիայում՝ ապահով վաճառականի ընտանիքում: Մանուկ հասակից տարվել է քրիստոնեական վարդապետությամբ, անհագորեն ընթերցել գրքեր՝ երբեք չբավարարվելով ձեռք բերածով: Գրեթե պատանի՝ հայտնվել է Սուրբ Էջմիածնում, հետո գնացել Խոր Վիրապ՝ Գրիգոր Լուսավորչի տանջարանը, այնուհետև հայտնվել Սևանա կղզու վրա գտնվող եկեղեցում, ուր ներանձնացած աղոթքի ժամանակ նրան է երևացել Աստվածամոր տեսիլը, որը խոստացել է, թե նրան մշտապես օգնելու է բոլոր դժվար պահերին: Ուսման անհազ ծարավը Մխիթար Սեբաստացուն բազում փորձություններից հետո հասցնում է Վենետիկի Հանրապետություն, ուր քաղաքի դոժերից կազմված սենատը նրան հանձնել է Ադրիատիկի ծոցում գտնվող փոքր կղզին՝ Սուրբ Ղազար անունով և թույլատրել հիմնել հայկական հոգևոր միաբանություն: Դա 1717 թ. էր: Մխիթար Սեբաստացին իր աշակերտ միաբանների հետ լծվել է կղզում միաբանական շինություններ կառուցելու, այն կանաչապատելու ու բարեզարդելու գործին: Միաբանության օրինակելի վիճակի սկիզբը համարվում է 1740 թ.:

Իր անձանձիր կյանքի ընթացքում Սեբաստացին պատրաստել է ընտիր կրթություն ստացած միաբաններ, որոնք շարունակել են նրա սրբազան գործն առ այսօր: Մխիթար Սեբաստացին և Մխիթարյան միաբանությունը համոզված էին, որ լուսավոր կրթությամբ հայ ազգը կունենա ապագա: Առաջնորդվելով այդ հավատով՝ նրանք ջանադիր ձևով սկսել են տպագրել Ոսկեդարի ու հետագա դարերի պատմիչների գործերը, կատարել համաշխարհային գրականության նշանավոր երկերի մեծարժեք թարգմանություններ: Միաբանությունը

հրատարակել է նաև հին աշխարհի ու միջնադարի այն նշանավոր օտարազգի հեղինակների գործերը, որոնց բնագրերը, ստեղծված օտար լեզուներով, կորած են: Այսօր պահպանվել են միայն դրանց հայերեն թարգմանությունները: Եվրոպայում Մխիթարյան միաբանությունն ունեցել է մեծ հեղինակություն. այն մեծ նպաստ է բերել աշխարհում հայագիտության զարգացմանը:

Թե՛ Ս. Ղազար կղզու և թե՛ Վիեննայի Մխիթարյան միաբանություններն արժանացել են քրիստոնյա Եվրոպայի կրթված հասարակության հիացմունքին:

Այս ժողովածուն Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին ու միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի և բանասիրական ֆակուլտետի մի քանի դասախոսների հարգանքի տուրքն է՝ ուղղված հայ ժողովրդի արժանավոր զավակի հիշատակին:

***Պրոֆեսոր Աելիպա Դուլխանյան***

## ПРЕДИСЛОВИЕ

В этом году исполняется 350 лет со дня рождения одного из достойных сынов армянского народа, основателя Мхитаристской конгрегации Мхитара Себастиаки. Жизнь Мхитара Себастиаки — человека, беззаветно преданного своему народу и христианству и обладавшего невообразимой волей и отвагой, являла собой историю, полную чудес.

М. Себастиаки родился в Себастии, в семье состоятельного купца. С детских лет он увлекся христианским учением, любил читать, и, движимый тягой к знаниям, не останавливался на достигнутом. Почти юношей он побывал в Святом Эчмиадзине, затем отправился в Хор Вирап — место мученичества Григория Просветителя, а после он посетил церковь Севанаванк, где во время уединенной молитвы ему явилось видение Богоматери, которая обещала, что придет на помощь в трудные минуты жизни. После тяжелых испытаний неутолимая жажда знаний привела его в Венецианскую республику, где городской Сенат, состоявший из дожей, передал ему небольшой остров в Адриатике — остров св. Лазаря с позволением основать на нем армянскую духовную конгрегацию. Это было в 1717 году. Мхитар Себастиаки вместе со своими учениками приступил к возведению построек и озеленению территории конгрегации. 1740-ой год является годом начала деятельности конгрегации.

В течение всей своей неутомимой жизни Себастиаки воспитал целое поколение мхитаристов, получивших отличное образование. И мхитаристы продолжают его священное дело по сей день. Мхитар Себастиаки и конгрегация были убеждены, что путём просвещения армянский народ обретет будущее. Мхитаристы стали издавать труды армянских историков Золотого века и последующих столетий. Члены конгрегации также издавали переводы значимых произведений мировой литературы на армянском языке. Ими были опубликованы известные сочинения иностранных авторов древнего мира и

средневековья, оригиналы которых впоследствии были утеряны и сохранились лишь их переводы на армянский язык. Мхитаристская конгрегация снискала славу в Европе и пользовалась большим авторитетом, способствовала развитию арменоведения в мировом масштабе. Мхитаристская конгрегация как на острове св. Лазаря, так и в Вене являлась предметом восхищения образованной части общества христианской Европы. Настоящий сборник подготовлен группой преподавателей кафедры древней и средневековой армянской литературы филологического факультета АГПУ как дань уважения памяти достойного сына армянского народа.

***Профессор Аэлига Долуханян***

## FOREWORD

This year marks the 350th anniversary of the birth of one of the worthy sons of the Armenian people, the founder of the Mekhitarist Congregation, Mekhitar Sebastatsi. The life of Mekhitar Sebastatsi — a man selflessly devoted to his people and to Christianity, and possessing unimaginable will and courage — was a history full of miracles.

M. Sebastatsi was born in Sebastia, into the family of a wealthy merchant. From childhood, he was drawn to Christian teaching, loved to read, and, driven by a thirst for knowledge, never rested on his laurels. As a young man, he visited Holy Etchmiadzin, then traveled to Khor Virap — the place of martyrdom of Gregory the Illuminator — and afterwards he visited the church of Sevanavank, where, during solitary prayer, he had a vision of the Mother of God, who promised to come to his aid during difficult moments in life. After severe trials, an unquenchable thirst for knowledge led him to the Republic of Venice, where the City Senate, composed of Doges, granted him a small island in the Adriatic — the Island of St. Lazarus — with permission to found an Armenian spiritual congregation upon it. This was in 1717. Mekhitar Sebastatsi, along with his students, began the construction of buildings and the landscaping of the congregation's territory. The year 1740 marks the beginning of the congregation's activities.

Throughout his tireless life, Sebastatsi raised an entire generation of Mekhitarists who received an excellent education. And the Mekhitarists continue his sacred work to this day. Mekhitar Sebastatsi and the congregation were convinced that the Armenian people would find a future through enlightenment. The Mekhitarists began to publish the works of Armenian historians from the Golden Age and subsequent centuries. Members of the congregation also published translations of significant works of world literature into the Armenian language. They published famous compositions by foreign authors from the ancient world and

the Middle Ages, the originals of which were subsequently lost and only their Armenian translations were preserved.

The Mekhitarist Congregation gained fame in Europe and enjoyed immense authority, contributing to the development of Armenian Studies on a global scale. The Mekhitarist Congregation, both on the Island of St. Lazarus and in Vienna, was a subject of admiration for the educated part of Christian European society. This collection has been prepared by a group of professors from the Department of Ancient and Medieval Armenian Literature of the Philological Faculty of ASPU (Armenian State Pedagogical University) as a tribute to the memory of the worthy son of the Armenian people.

***Professor Aelita Dolukhanyan***



## ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Արույանի անվան ՀՊՄՀ  
հայ հին և միջնադարյան  
գրականության և նրա դասավանդման  
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
Բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր*

## ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ԸՍՏ ՍՏԵՓԱՆՈՍ ԱԳՈՆՑ ԳՅՈՒՎԵՐԻ

### ***Ներածություն***

Մխիթար Սեբաստացին և Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստատված նրա հոգևոր միաբանությունը հավերժորեն հիշատակվելու են հայ ժողովրդի պատմության մեջ: Արդեն հինգերորդ դարից հայ քրիստոնեական գրականությունը հայ մատենագրություն ներմուծեց վարքագրությունը՝ իրական մարդկանց հավերժորեն հիշելու անհրաժեշտությունը հետագա սերունդների համար: Այդ հեռահար գիտակցությամբ Մխիթարյան միաբանության արքահայր Ստեփանոս Ագոնց Գյուվերը 1810 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հրատարակեց «Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացոյ Բարունապետի եւ Աբբայի» մեծարժեք գիրքը, որը դարձավ սկզբնաղբյուր հետագա դարերի բոլոր այն մասնագետների համար, որոնք հետազոտության թեմա դարձրին Մխիթար Սեբաստացու կյանքն ու գործը, նաև ուսումնասիրություններ գրեցին Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների մասին:

Մխիթարյան երկու միաբանությունների վերաբերյալ գիտական աղբյուրներում կան հսկայածավալ նյութեր հայերեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն և այլ լեզուներով: Այդ գրքերի ոչ

ամբողջական մատենագիտությունը հրատարակել է հայր Լևոն Ջեքիյանն իր «Հայերը Վենետիկ նահանգին և քաղաքին մեջ» հրաշալի գրքում<sup>1</sup>: Հայր Ջեքիյանի գիրքը գրվել է իտալերեն, ապա թարգմանվել է հայերեն: Նա Մխիթարյանների վերաբերյալ գրքեր ունի նաև անգլերենով ու իտալերենով՝ ա) Zekiyan Fr. L., *The Armenian Renaissance in the eighteenth century, "Hye Endanik"* (periodical, Venice-St. Lazaro) 1983, N 6-8, pp. 47-50, բ) Zekiyan Fr. L., *"Mechitar rinnovatore e Pioniere, Venezia, S. Lazaro, 1977:*

Ստեփանոս Ազոնց Գյուվերը Մխիթարյան միաբանության երևելի դեմքերից է ու թողել է հարուստ գրական ու գիտական ժառանգություն<sup>2</sup>: Դրանք պատմաաշխարհագրական, ճարտասանական, կրոնաբարոյախոսական աշխատություններ են:

Ազոնցի աբբահայր եղած ժամանակ էլ՝ 1810 թ., Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանությունը Նապոլեոն Բոնապարտի հատուկ հրամանագրով կոչվում է ակադեմիա և ստանում է ֆրանսիական կառավարության հովանավորությունը:

«Հայերի Վենետիկը» արժեքավոր գրքում իտալացի հեղինակները մանրամասներ են պատմում Նապոլեոն Բոնապարտի՝ դեպի հայերն ունեցած հատուկ համակրանքի մասին: Կայսրը Եգիպտոսի մամլուքներից որոշ հայերի ընդգրկում է իր բանակի մեջ: Հայ մամլուք էր նաև նրա հավատարիմ Ռուստամը, որը Նապոլեոնի թիկնապահն էր և նրան ուղեկցում էր ամենուր, բացի Ս. Հեղինե կղզուց, ուր քստրվեց Նապոլեոնը<sup>3</sup>: Վերջինս ասել է, թե Ռուստամն իր պահապան հրեշտակն է: Ռուստամի մասին պատմական ստույգ

---

<sup>1</sup> Լ. Ջեքիյան, Հայերը Վենետիկ նահանգին և քաղաքին մեջ, Վենետիկ, Ս. Ղազար, 1990, էջ 144-150:

<sup>2</sup> Ով ով է, հայեր. կենսագրական հանրագիտարան, հտ. 1, Երևան, 2005, էջ 25:

<sup>3</sup> Ս. Հերմետ, Պ. Կ. Ռատտի դի Դեզիո, Հայերի Վենետիկը: Տասնվեց դար պատմության և առասպելի միջով, Երևան, 2000, էջ 242:

աղբյուրների հիման վրա հետաքրքիր ծավալուն պատմավեպ է գրել Հարություն Ամիրխանյանը՝ այն հրատարակելով Մոսկվայում<sup>4</sup>:

Նապոլեոնը, որը փակել էր տվել Վենետիկի կաթոլիկ բոլոր հաստատությունները, Մխիթարյան միաբանությանը արտոնեց շարունակել իր աշխատանքները:

1810 թ. սեպտեմբերի 10-ին Ս. Ղազար հասավ երիտասարդ Պետրոսը՝ բերելով Նապոլեոնի հրամանագիրը, ըստ որի Մխիթարյան միաբանությունը պահպանում է իր կարգավիճակը. «Ֆրանսիայի հյուպատոսի միջոցով աբբահայր Ագոնցը պաշտոնապես տեղեկացավ, որ Ս. Ղազարի միաբանությունը, համարվելով գիտությունների կաճառ, միշտ կվայելի կայսեր բարյացակամությունը»<sup>5</sup>: Նա Հռոմի պապի կողմից ձեռնադրվում է արքեպիսկոպոս Սյունյաց աշխարհի. «Ճիշտ այն ժամանակը, երբ Սյունիքում ոչ մի կաթոլիկ չկար»<sup>6</sup>:

Սա Հռոմի միարարական ծրագրի դրսևորումն էր՝ Արևելյան Հայաստանում կաթոլիկություն տարածելը: Սակայն այդ քաղաքական ձեռնարկները բնավ չէին համապատասխանում Մխիթարյան միաբանության ներքին տրամադրություններին ու գործելակերպին: Մխիթարյան միաբանությունում Ագոնցի աբբահայրության օրերին իրենց գիտական ու ազգագուտ գործն էին շարունակում Մխիթար Սեբաստացու ազգապահպան գաղափարներով սնված այնպիսի նշանավոր հոգևորականներ, ինչպիսիք էին Միքայել Չամչյանցը, Ղուկաս Ինճիճյանը, Մկրտիչ Ավգերյանը, Մանուել Զախչախյանը, Գաբրիել Ավետիքյանը, Իգնատիոս Փափագյանը, Մինաս Բժշկյանը և ուրիշներ:

---

<sup>4</sup> А. Амирханян, Наполеон, каким его знал телохранитель-оруженосец Рустам, Москва, 2007, 496 с.

<sup>5</sup> Ա. Հերմետ, Պ. Կ. Ռատտի դի Դեզիո, Նշվ. աշխ., էջ 243:

<sup>6</sup> Ա. Երիցյանց, Վենետիկի Մխիթարյանք, Թիֆլիզ, 1883, էջ 55:

## ***Մխիթարի կյանքը և գործունեությունը մինչև Վենետիկ մեկնելը***

Ազոնցը Մխիթար Սեբաստացու կյանքի և գործունեության մասին նյութերը քաղել է դեռ կենդանի նրա մի քանի աշակերտներից՝ օգտվելով նաև գոյություն ունեցող փաստաթղթերից:

Գիրքն սկսվում է ներբողական բնույթի առաջաբանով, որը գրված է կլասիցիստական ոճով: Մխիթար Սեբաստացու կենսապատումը ներկայացվում է ծննդից մինչև մահ: Ինչ-որ առումով նման է Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» աշխատությանը: Գիրքը բաժանված է ԻԷ (27) գլուխների միջև, և յուրաքանչյուր գլխում համառոտ ներկայացնում է գլխի բովանդակությունը:

Առաջին գլուխը կոչվում է «Ծնունդ և սնունդ մեծի Մխիթարայ»: Մխիթարը ծնվել է 1676 թ. փետրվարի յոթին բարեպաշտ ծնողների ընտանիքում. հոր անունը Պետրոս էր, իսկ մորը՝ Շահրիստան: Արու զավակի ծնունդը մեծագույն ուրախություն էր ոչ միայն ծնողների, այլև երկու հորեղբայրների համար: Հայրը՝ Պետրոսը, եղել է վաճառական: Հայտնի չէ, թե որտեղից է պատմաբան Լեոն որոշել, թե Մխիթարը ծնվել է աղքատ վաճառականի ընտանիքում. «Պետրոսը ունևոր վաճառականներից չէր»<sup>7</sup>:

Ի տարբերություն Լեոյի, իտալացի կենսագիրները Պետրոսին համարում են հարուստ վաճառական: Տեղին է իտալացիների գրքից ընդարձակ մեջբերում կատարել. «Ծնվել է 1676 թ. փետրվարի տասնյոթին պատմական Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում (այսօր Սվաս), Պետրոսի և Շահրիստանի առաջնեկը, որին Հիսուս Մանկան պատվին անվանեցին Մանուկ: Հայրը հարուստ և խոհուն վաճառական էր, մտադրվել էր ներգրավել որդուն առևտրական շահաբեր գործի մեջ: Սակայն տղայի ձգտումները բոլորովին այլ հակվածություն ունեին: Նա շարունակաբար կրկնում էր, որ պետք է ճգնավոր դառնա: Եվ սա լրկ մանկական խանդավառություն չէր»<sup>8</sup>:

<sup>7</sup> Լեո, Երկերի ժողովածու, հտ. V, Երևան, 1986, էջ 347:

<sup>8</sup> Ա. Հերմետ, Պ. Կ. Ռատտի դի Դեգիո, Նշվ. աշխ., էջ 215:

Հնգամյա հասակում, ինչպես վկայում է Ազոնցը, Մանուկը հանձնվում է երկու կույսերի, հետո մի քահանայի միջոցով սկսում է գրել ու կարդալ սովորել՝ ցուցաբերելով իր տարիքի համար արտասովոր ընդունակություններ: Փոքրիկ տղան սկսում է անհագորեն կարդալ սրբախոսական գրականություն և հավատալ հրաշքներին: Նա փոքր հասակից ատում է ազահությունն ու ընչաքաղցությունը. սա վկայում էր, որ նա ապահով ընտանիքում է ծնվել:

1684 թ. Մխիթարը դպիր էր Սեբաստիայի Սուրբ Նշան վանքում, իսկ 1691 թ. Սուրբ Նշան վանքում Անանիա եպիսկոպոսը նրան օժում է սարկավագ: Նա սկսում է ճամփորդել Մեծ Հայքի վանքերում՝ միաժամանակ շարունակ կարդում էր սրբախոսական գրականություն ու պերճաբան քարոզում էր՝ զարմացնելով ունկնդիրներին: Թեպետ նրա թափառական կյանքի ժամանակ կարիքը հետապնդում էր նրան, սակայն, իր կոչմանը հավատարիմ, չէր տրտնջում:

Աշխատության Ե. գլուխը պատմում է պատանի Մխիթարի Էջմիածին կատարած այցելության մասին: Ղազար անունով մի վաղապետի հետ գնում է Էջմիածին, սակայն Էջմիածնի վանքում չի գտնում իր ուսումնատենչությունը հագեցնող մթնոլորտ ու մեկնում է Խոր Վիրապ: Այդ սրբավայրը ևս չի բավարարում նրա հոգևոր պահանջները ու գնում է Սևանի անապատ՝ հուսալով, թե այնտեղ կհագեցնի հոգևոր կրթության ծարավը: Սևանի միաբանները համոզում են պատանուն մնալ իրենց մոտ, սակայն ներքին ձայնը նրան հուշում է թողնել նաև Սևանա ծովակի միաբաններին: Մի օր, առանձնանալով եկեղեցում, սկսում է աղոթել Աստվածամոր պատկերի առաջ. «Եւ ահա երևացաւ նմա օրհնաբանեալ կոյս Մարիամ Աստվածածինն յայտնի և պայծառ տեսեամբ»<sup>9</sup>: Հրաշագեղ Աստվածամայրը խոստանում է նրա բոլոր ցանկությունները կատարել: Այս խոստումը տալուց հետո Աստվածամոր տեսիլն անհետանում է, և Մխիթարը ողջ կյանքում խոր հավատով ապավինում է Աստվածամոր խոստմանը:

---

<sup>9</sup> Ստ. Ազոնց Գյուվեր, Նշվ. աշխ., էջ 48:

Բասենում եղած ժամանակ ժանտախտ է բռնկվում: Նա ևս հիվանդանում է, որովհետև նրան հազգրել էին ժանտախտից մեռած մարդու զգեստներ<sup>10</sup>: Հենց Բասենի վանքում Մխիթարի կարդացած քարոզների մասին կենսագիրը գրում է. «Ձոր և առնէր նա պերճ և յորդառատ բանիք. մինչև զարմանալ յոյժ ժողովրդոց, որք խոռոնընթաց դիմէին ի լուր Աստուածուսոյց բանից նորա, որպէս բազմօրեայ ծարաւիք յաղբիւր ականակիտ ջրոյ և հոգևորական օգուտ բազում յանձինս ձգէին»<sup>11</sup>:

1693 թ. Մխիթարը վերադառնում է Սեբաստիա: Նա իր անձանձիր ընթերցանության ընթացքում կարդում է նաև կաթոլիկ Կղեմես Գալանոսի երեք մասից բաղկացած գիրքը հայ եկեղեցին Հռոմի մեծ եկեղեցուն միացնելու մասին<sup>12</sup>:

Թվում է, թե Աստվածաշնչի Հին Կտակարանի Հոբ Երանելու նման Աստված նոր փորձություններով ստուգում է Մխիթարին: Նա կուրանում է, սակայն չի հուսահատվում: Սեբաստիայում՝ ծնողների տանը ստանում է անհրաժեշտ խնամք, իսկ մի հմուտ բժիշկ 40 օրում բուժում է նրա կուրությունը<sup>13</sup>:

Սեբաստիայից Մխիթարը մեկնում է Բերիա՝ Հռոմ գնալու մտադրությամբ: Նա հայտնվում է Կիպրոսում, ուր և ծանր հիվանդանում է: Այստեղ, բացի հիվանդանալուց, նաև հալածվում է որոշ հոգևորականներից:

Կիպրոսում Մխիթարը նորից ծանր հիվանդանում է. ոչ ոք նրան սնունդ չի տալիս, անգամ՝ ջուր: Բարեբախտաբար մի անցորդ եպիսկոպոս, լսելով Մխիթարի աղերսները, նրան կերակրում է: Ընդհանրապես, Ագոնցի նկարագրած Մխիթար Սեբաստացու կյանքի ընթացքը հիշեցնում է Մաշտոցի անվան Մատենադարանում պահ-

---

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 57:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 72:

վող ձեռագրերում այնքան հաճախ պատահող սրբախոսական գրականությանը, որի մի մասն անշուշտ համաքրիստոնեական բնույթի է:

Կիպրոսից հետո Մխիթարը վերադառնում է Բերիա, այնտեղից մեկնում Սեբաստիա՝ ծնողների տուն, ուր ամրապնդում է իր առողջությունը:

Մի քանի տարի անց Մխիթարը հայտնվում է Կոստանդնուպոլսում և հանդիպում է Խաչատուր Կարնեցի վարդապետին, որը սովորել էր Հռոմում և որպես քարոզիչ ուղարկվել էր Կոստանդնուպոլիս: 1697 թ. Մխիթարն արդեն Կոստանդնուպոլսում էր: Ամենուր նա փնտրում է համակիրներ ու շուրջն է հավաքում աշակերտներ՝ նպատակ ունենալով ստեղծել իր երազանքի միաբանությունը:

Երբ Մխիթար Սեբաստացին երկրորդ անգամ գնում է Կոստանդնուպոլիս, արդեն վարդապետ էր, և ժամանակակիցները նրան համարում էին «իբրև զմի ի մեծաց հոգեհանճար վարդապետաց»:

Նրան հանճարեղ համարողները բնավ չեն չափազանցրել: XIX դարի մեր երկու լուսավորիչները՝ Խաչատուր Աբովյանն ու Միքայել Նալբանդյանը նույն կարծիքն են ունեցել: Խ. Աբովյանի երազանքն էր կրթվել Վենետիկի Մխիթարյանների մոտ, ստանալ այն գիտելիքները, որոնք Մխիթարի աշակերտները ջանադիր ու նվիրումով ուսուցանում էին իրենց սաներին: Խ. Աբովյանը 1832 թ. հունվարի 13-ին Ֆ. Պարրոտի տանը խոսում է Մխիթար Սեբաստացու մասին՝ շեշտելով, թե որքան կուզենար լինել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում: Պարրոտը Մխիթարին «աշխարհի մեծ մարդկանց» թվին կդասեր, եթե չլիներ Մխիթարի կրոնափոխությունը: Աբովյանը նկատում է. «Մխիթարն յանօգնականութեն է հակեալ ընդունիլ զպապական կրոնս և հեստի<sup>14</sup> ի մէջ»<sup>15</sup>:

Միքայել Նալբանդյանը՝ աշխարհաբարի ջատագովը, շատ բարձր է գնահատում Մխիթար Սեբաստացու ծառայությունները հայ

---

<sup>14</sup> Հեստել-անհնազանդություն ցուցաբերել:

<sup>15</sup> Պ. Հակոբյան, Ա. Հակոբյան, Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն, հտ. Ա. 1809-1833, Երևան, 2024, էջ 474:

դպրության բնագավառում: Նա նշում է, թե հայ դպրությունը «բորբոքեցաւ վերստին ի կայծէ, զոր ելոյց Մխիթար Սեբաստացի *հանճարեղ* մտացն ծննդականութեամբ»<sup>16</sup>:

Մխիթարը, կաթոլիկ եկեղեցու հետևորդ դառնալով, իր դեմ լարում է հայ առաքելական եկեղեցու սպասավորներին: Այդ հալածանքը հասնում է ֆիզիկապես ոչնչացնելու վտանգին: Նա զգեստափոխված գնում է Ֆրանսիայի դեսպանի տուն ու թաքնվում այնտեղ:

Գրքի ԺԶ (XVI) գլուխը պատմում է, թե ինչպես է Մխիթարը իր աշակերտների հետ տեղափոխվում Մոռա ու հաստատվում այնտեղ՝ հայտարարելով, թե իր միաբանության անդամները որդեգրվել են կոյս Աստվածամորը:

Երբ Մխիթարը հեռանում է Կոստանդնուպոլսից իր տասնվեց աշակերտների հետ, ձեռքին ուներ ընդամենը 400 դահեկան: Այդ գումարով անհնար էր օտար երկրում օրինակելի վանք կառուցել ու հոգալ միաբանության կարիքները: Սակայն համառ կամքն ու մեծ ձգտումները անհնարը դարձնում են հնարավոր: Մոռայի Մեթոն բերդաքաղաքում Մխիթարը կարողանում է ստանալ հողատարածք, պարեն, Հռոմի եկեղեցու քաջալերումը, որից հետո սկսում է իր միաբանական շինությունների կառուցումը: Որպեսզի իր միաբանության աշխատանքներն արդյունավետ լինեին, երկու տարեց ու բանիմաց միաբանների ուղարկում է Հռոմ՝ Կղեմես ԺԱ Պապի մոտ՝ իր հաստատության սահմանադրությունը ներկայացնելու համար<sup>17</sup>:

Մխիթարը մեծ դժվարությամբ և պարտքերով կառուցում է միաբանության շինություններն ու եկեղեցին: Այդ ընթացքում միաբաններին նեղում էր նաև սննդի պակասը: Ստիպված Մխիթարը դիմում է երկրի իշխանին՝ Անջելո Էմոյին, որը բարեպաշտ մարդ էր և հրամայում է զինվորների սննդից բաժին հանել միաբաններին<sup>18</sup>:

---

<sup>16</sup> Ս. Դարոնյան, Միքայել Նալբանդյան, Երևան, 1979, էջ 111:

<sup>17</sup> Կղեմես ԺԱ (XI) Պապը գահակալել է 1700-1721 թթ.: St' u Petit Robert-2, Paris, 1988, p.417:

<sup>18</sup> Ստ. Ազոնց Գյուլվեր, Նշվ. աշխ., էջ 179-180:

Երեք տարի կարիքի մեջ գտնվելուց հետո բարեպաշտ իշխան Էմոն այնքան է կապվում Մխիթարի հետ, որ ցուցաբերում է նաև դրամական օգնություն: Արդեն պատրաստ էր եկեղեցին, իշխանը գնում է այնտեղ, հանդիպում միաբաններին, ու ամենուրեք գովեստի խոսք ասում Մխիթարի հասցեին:

Տեսնելով հայկական միաբանության ծաղկուն վիճակը՝ տեղի հույն եպիսկոպոսը փորձում է Մխիթարի ձեռքից խլել միաբանության շենքերն ու կալվածքը<sup>19</sup>:

Հռոմը պաշտպանում է Մխիթարին. նա իր եկեղեցու հիմքում դնում է սուրբ Բենեդիկտոսի կանոնները, որոնք արդեն ծանոթ էին հայ հոգևորականներին և սկսում է առաջնորդվել դրանցով: Հռոմը Մխիթարին տալիս է արբահայր լինելու իրավունքը:

### ***Մխիթար Սեբաստացին տեղափոխվում է Վենետիկ***

Մխիթարը դոժերի սենատից խնդրում է տեղ հատկացնել միաբանության համար: Քանի որ նա հույս չուներ, թե քաղաքում տեղ կգտնվի, խնդրում է տարածք տալ քաղաքին մոտիկ կղզիներից մեկում: Ընտրվում է Սուրբ Ղազարը, որը մեծությամբ չափավոր էր, դիրքով՝ բարձր, կլիման՝ բարեշունչ, քաղաքից հեռու չէր և միանգամայն անմարդաբնակ էր: Կղզու վրա կար հնաշեն մի եկեղեցի՝ Քրիստոսին բարեկամ Սուրբ Ղազարի անունով, մի քանի հին ու ավերված բնակարաններ և երկու ջրհոր: Վենետիկի ծերակույտը, Մխիթարի աղաչանքները լսելով, նրան է հանձնում կղզին. «Ահա ի նմին ժամանակի ելաներ հրովարտակ ի ծերակույտ ժողովոյն Վէնէտկոյ, որով շնորհէր զցանկացեալ կղզին սրբոյն Ղազարու ի մշտնջենաւոր բնակութիւն միաբանութեան մերոյ՝ յամի տեառն 1717, ամսեանն սեպտեմբերի, ի բարեպատեհ աւուր ութերորդի»<sup>20</sup>:

Ընդհատելով Մխիթար Սեբաստացու կենսապատումը՝ Ազոնցը անդրադարձ է կատարում իր ժամանակներին: Իտալիան նվաճելուց հետո, Նապոլեոնը նոր քաղաքականություն է կիրառում երկ-

---

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 215:

րի կրոնական միաբանությունների նկատմամբ, որը բոլորովին չի վերաբերում Մխիթարյան միաբանությանը: 1810 թ. օգոստոսի 17-ին Նապոլեոնը վճիռ է ուղարկում Իտալիայի փոխարքա Եվգենիոսին Մխիթարյան միաբանության վերաբերյալ: Այդ հրովարտակը փոխանցվում է Արցախի Որորակ գյուղում ծնված, ազգությամբ հայ սենեկապան Պետրոսին՝ Մխիթարյան միաբաններին տալու համար<sup>21</sup>: Վերջինս հրամանագիրը ցնծությամբ հանձնում է նրանց:

Ազոնցը նշում է, թե Մխիթարի նկատմամբ շարունակվում են ամբաստանությունները, և նա ստիպված գնում է Հռոմի պապի մոտ, արդարացնում է իրեն ու հաղթանակած վերադառնում է Սուրբ Ղազար կղզի:

Մխիթարի գերագույն ցանկությունն էր՝ ունենալ ամենալավը, ինչին հասնելու համար աշխատում էր անսահման նվիրվածությամբ՝ առաջնորդվելով միաբանությունը ծաղկուն տեսնելու մղումով: Նա օրինակ էր միաբանների համար: Մշտարթուն ձևով հսկում էր բոլոր միաբաններին, գիտեր, թե նրանք ինչով են զբաղված: Նա հավասար վերաբերմունք ուներ միաբանության հին ու նոր անդամների նկատմամբ: Այնպես էր դաստիարակել միաբաններին, որ նրանք եղբայրասեր էին, միմյանց կարիքների հարցում ուշադիր, կարեկից, անկեղծ, պարկեշտ ու իրենց վարքագծում զգուշավոր: Այնքան օրինակելի էր միաբանությունը, որ նրա հեղինակությունը հիացմունք էր պատճառում Վենետիկի բոլոր խավերին: Եվրոպացիները խնդրում էին, որ Մխիթարն իրենց մանուկներին ընդունի միաբանություն՝ սովորելու:

Գրքի ԻԴ գլուխը հավաստում է, թե Մխիթարը բոլոր տառապանքները կրում էր հանուն իր ազգի, թեև շատերը քննադատում էին նրան: Նրա համար օրինակ էր Գրիգոր Լուսավորիչը<sup>22</sup>:

Պատահական չէ, որ Մխիթարի հոգևոր ու գիտական սիրանքը ներկայացված է անգամ օտարալեզու ոչ մեծ հանրագիտա-

---

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 217:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 238:

րաններում: Բերենք երկու օրինակ: 1932 թ. Փարիզում լույս տեսած «Petit Larousse»-ում կարդում ենք. «Մխիթար-հայ գիտնական, ծնված Սեբաստիայում, հիմնադիր Մխիթարյան միաբանության, որը ձեռնարկել է հայ գլխավոր մատենագիրների գործերի հրատարակումը»<sup>23</sup>: Դարձյալ Փարիզում 1988 թ. լույս տեսած «Petit Robert-2»-ում գրված է. «Մխիթար (Պետրոս, Մանուկ, կոչված Մխիթար, որ ֆրանսերենով նշանակում է Սփոփիչ) վանական և աստվածաբան, Մխիթարյան միաբանության հիմնադիր (Սիվա, Անատոլիա-1670,<sup>24</sup> Վենետիկ, 1749), վարդապետ 1696-ին: Նա հիմնել է իր միաբանությունը 1712-ին<sup>25</sup> Պապի հովանավորությամբ՝ փափագելով վերակենդանացնել ու ճանաչել տալ հայ գրականությունը: Մխիթարը հրատարակել է մի քերականություն և հայերենի մի բառարան (1717) և տպագրել է հայերեն Աստվածաշնչի նոր հրատարակություն»<sup>26</sup>:

Մխիթարի նպատակն էր պատրաստել ընտիր հոգևորականներ՝ զարգացած, հոգևոր կոչմանը հավատարիմ, ամեն տեսակի գիտությունների մեջ հմուտ, և նրանց ուղարկել Հայաստան աշխարհի տարբեր գավառները, նաև այն երկրները, որտեղ հայեր էին ապրում:

Իր հիմնած տպարանում Մխիթարը հրատարակել է միաբանության համար առաջին անհրաժեշտության մի շարք գրքեր՝ Թովմաս Գեմբացի, Մեկնություն հայտնության, Երգ երգոց, Կրթության աղոթքների, առաքինությունների և մոլությունների, Ալբերտ, Հայկական Քերականություն, նաև աշխարհաբար և թուրքերեն, Աստվածաշունչ, Մեկնություն Ժողովողի, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, Բառարան և այլ գրքեր:

Միաբանությունը մեծանում էր. կարիք կար կառուցելու նոր շինություններ, վերանորոգել հները: Մխիթարն ապրում էր աղքատ

---

<sup>23</sup> Nouveau petit Larousse illustré, Paris, 1932, p. 1532.

<sup>24</sup> Մխիթարը ծնվել է 1676-ին:

<sup>25</sup> Մխիթարյան միաբանությունը հիմնվել է 1701 թ.:

<sup>26</sup> Petir Robert-2, Paris, 1988, p. 1184.

տության մեջ, սակայն նրա ձեռնարկները մեծ քանակի դրամ էին պահանջում: Նա կարողանում է իրականացնել նոր շինությունների կառուցումը, 1740 թ. մենաստանը ստանում է վայելուչ տեսք<sup>27</sup>:

Սեղանատան դռան վրա Մխիթարը հայերենով ու լատիներենով նշում է, թե մենաստանը շինվել է 1740 թ.՝ Մխիթար Սեբաստացի վարդապետի արքայության ժամանակ<sup>28</sup>:

Ազոնցը բացատրում է, թե որքան մեծ էր նրա սերն ազգի, հոգևոր արժեքների նկատմամբ, նույնքան անտարբեր էր նա իր անձի և նյութական բարիքներ հավաքելու հարցում: Նույնը սովորեցնում էր իր աշակերտներին՝ բացատրելով՝ եթե ունես կերակուր, հանդերձանք, ապա այդ խիստ բավարար է, իսկ վաղվա օրը կհոգա Աստված, ինչպես հոգում է երկնքի թռչունների համար<sup>29</sup>:

Նույն գաղափարախոսության կրողն էր նաև XV դարի նշանավոր հոգևոր գործիչ, մեծ մարդասեր և բանաստեղծ Մկրտիչ Նաղաշը.

Մայի հասրաթ մի լինիր, մեծութիւն քեզ չի պիտի,

Ունիս կերակուր, հանդերձ, աւելին քեզ ցավ կու լինի<sup>30</sup>:

Նմանատիպ մտքեր կան թե՛ XIV-XV դարերի փիլիսոփա Գրիգոր Տաթևացու աշխատություններում և թե՛ XX դարի տարբեր ազգերի գրողների մոտ, ինչպես օրինակ՝ Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսում կամ XX դարի երկրորդ կեսի ֆրանսուհի գրող Թալի դը Մոլենի «Իմ անունն է Արիկիոմարի» վիպակում, որը ներկայացնում է Հնդկաստանի մի աղքատ գյուղի կյանքը: Երբ հնդիկ երեխաները քաղաքում տեսնում են շքեղ տներ, հարստություն ու զմայլվում են դրանցով, նրանց ուղեկցող երբեմնի հարուստ իմաս-

---

<sup>27</sup> Ստ. Ազոնց Գյուվեր, Նշվ. աշխ., էջ 252:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 254:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 257:

<sup>30</sup> Մկրտիչ Նաղաշ, աշխատասիր. էր. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 126:

տուն ծերուկը բացատրում է, թե հարուստները հաճախ բոլորովին էլ հետաքրքիր մարդիկ չեն<sup>31</sup>:

Մխիթարը շատ ուշադիր էր աղքատների նկատմամբ: Երբեմն կղզու շուրջը նավակներով հայտնվում էին աղքատներ ու ողորմություն խնդրում: Վանքի դռնապանին հրահանգ էր տրված նրանց ձեռնունայն չվերադարձնել:

Ագոնցի գիրքն ավարտվում է Մխիթարի մահվան տեսարանով: Նա հանգչում է 1749 թ. ապրիլի 27-ին՝ շրջապատված իր սիրելի աշակերտներով և թաղվում է վանքի ներսում:

### ***Եզրակացություն***

XX դարի երկրորդ կեսի մեծ բանաստեղծ Պարույր Սևակը մեր նշանավորների մասին ասել է, թե նրանք ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած, այլ գալիս են ճիշտ ժամանակին: Ճիշտ ժամանակին ծնվեց Մխիթար Սեբաստացին: Նա իր առաջադիմական, նվիրյալ գործունեությամբ լուսավորյալ Եվրոպայից հայ ժողովրդին ներկայացրեց նրա երբեմնի, շատ քաղաքակիրթ անցյալը: Նրա ջանքերով սկսվեց համահայկական լուսավորական շարժումը: XVIII-XX-րդ դարերի միջակայքում Վենետիկի Սուրբ Ղազար կղզում միաբանության ջանքերով տպագրվել են այնպիսի կարևոր գրքեր, որոնք այսօր էլ շարունակում են ծառայել հայագիտությանն իրենց եզակի փաստերով ու ճշգրտված դրույթներով:

Մխիթար Սեբաստացին Ադրիատիկ ծովի Ս. Ղազար կղզում ստեղծեց իր պաշտելի Հայաստանի փոքրիկ մանրակերտը: Այսօր Վենետիկում Ս. Ղազար կղզու տոմսերը վաճառող դրամարկղի վրա իտալերենով ու անգլերենով գրված է՝ «Հայերի կղզի»: Իսկ երբ գրոսաշրջիկներով լցված նավը մոտենում է Ս. Ղազար կղզուն, ապա եկվորների աչքին առաջին հերթին երևում է մի հսկա պաստառ, որի վրա գրված է՝ «Բարով եկաք Հայաստան»:

---

<sup>31</sup> Թալի դը Մոլեն, Իմ անունն է Արիկիոմարի, թարգմ. Ա. Դոլովսյանյան, Գարուն, Երևան, 1995, թ. 8, էջ 80:



## ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Խ. Արոյանի անվան ՀՊՄՀ  
բանասիրական ֆակուլտետի դեկան,  
Բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր*

### ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍԱՅՈՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվաբանական ուսմունքների պատմության համատեքստում հայ լեզվաբանական միտքը սկիզբ է առնում ոսկեդարից: Հետագա դարերում, ըստ էության, արձանագրվում են հայկական միջնադարյան համալսարանների նվաճումները, ինչպես նաև գրչության կենտրոնների առաջընթացը: 17-րդ դարից սկսած՝ կարևորվում են նաև լատինատիպ և ինքնուրույն քերականական ուսմունքները: Արժևորվում է Մխիթարյան միաբանության հայագիտական գործունեությունը:

Հայոց լեզվի ուսումնասիրության ասպարեզում Մխիթար Սեբաստացին նշանակալի ավանդ ունի: Նա եղել է ոչ միայն հոգևորական, այլև մեծ հայագետ, ով իր ողջ կյանքը նվիրաբերել է լեզվի, գրականության և կրթության զարգացմանը: Նրա անմիջական դեկավարությամբ կազմվել և հրատարակվել է «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր աշխատությունը, որը ժամանակին դարձել է գրարի ուսումնասիրության կարևոր աղբյուրներից մեկը:

1717 թ. նրա ջանքերով Վենետիկում հիմնվել է հայ մշակույթի կենտրոն, որը մեծ դեր է խաղացել գրական աշխարհաբարի կանոնարկման և մշակման գործում: Ուղիղ տասը տարի հետո՝ 1727 թ., Սեբաստացին լույս է ընծայել «Դուռն քերականության աշխարհա-

բար լեզուին հայոց» հայատառ թուրքերեն աշխատությունը, որը գրական լեզվի արևմտահայ տարբերակի առաջին քերականությունն է: Արքահոր աշխարհաբարի քերականությունն իրավամբ համարվում է արևելահայ աշխարհաբարի քերականական օրենքների համապարփակ ուսումնասիրություն՝ բնավ չերկրորդելով Շրյոդերի՝ աշխարհաբարի քերականությանը, չնայած որ որոշ լեզվաբաններ այս մարզում առաջնության դափնին վստահում են Շրյոդերին: Նա տվել է «քաղաքացիական հայերենի» համառոտ քերականությունը՝ բարբառագիտական թռուցիկ տեղեկություններով: Մենք այն կարծիքին ենք, որ Շրյոդերը լայն իմաստով չէր կարող աշխարհաբարի քերականության առաջին շարքում դասվել՝ հաշվի առնելով մի քանի հանգամանք.

1. Շրյոդերը պարզապես շարադրել է հայերենի մեկ խոսակցական լեզվատարբերակին՝ «չորրորդ գաւառականին» բնորոշ քերականական ձևերը՝ պահպանելով ժամանակին տարածված լատինաբանությունները:

2. Շրյոդերի քերականությունն, ի տարբերություն Մխիթար Սեբաստացու աշխատության, ամբողջական պատկերացում չի տալիս ժամանակի լեզվական հարացույցների վերաբերյալ:

Մխիթար Սեբաստացու աշխարհաբարի քերականությունը, ձևաբանական հարցերից բացի, ներառում է նաև խոսակցական լեզվին բնորոշ իրողություններ, որոնք դիտարկվում են գրաբարյան

---

<sup>1</sup> Յոհան Յոսիմ Շրյոդերը երկար տարիներ վարել է Մարբուրգի համալսարանի արևելյան լեզուների ամբիոնի հայագիտության բաժինը: «Արամեան կամ հայոց լեզվի գանձ» աշխատության (Ամստերդամ, 1711 թ.) մեջ տեղեկություններ է հաղորդել հայերի և հայերենի մասին: Ըստ Շրյոդերի՝ հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է, գուցե զիջում է միայն եբրայերենին, ուստի այն ինքնուրույն լեզու է և չի սերվել որևէ այլ լեզվից: Շրյոդերը ներկայացրել է գրաբարի և աշխարհաբարի հնչյունաբանությունը, ուղղագրությունը, քերականությունը, կատարել ստուգաբանություններ, անդրադարձել հայերենի բարբառների առաջացմանը, հայ երաժշտության ու տաղաչափության հարցերին: Ունի նաև հայերեն-լատիներեն բառարան, որն անտիպ է:

ծներին զուգահեռ: Գրական աշխարհաբարի աշխուժացումը պայմանավորված էր լեզվաաշխարհագրական լայն ընդգրկման հաշվառումով: Նրա կարծիքով քերականությունն իր առարկայի՝ մարդկային խոսքի մեջ կարող է մտցնել բանական (ռացիոնալ) բարեփոխումներ, ուղղել և կարգավորել այն՝ համաձայն իր ունեցած կատարելության գաղափարի:

Այս աշխատանքը նախորդ՝ գրաբարի քերականության նման հստակ ունեցել է իր գործնական նպատակը, այն է՝ խոսակցական հայերենի հանդեպ ժողովրդի մեջ սեր և հարգանք վայելելու մշակույթի ձևավորումը: Նշելի է, որ առաջադիր աշխատանքին լծվելը բավական դժվարություն էր ներկայացնում և մեծ հանձնառություն էր պետք, հատկապես որ ժամանակի խոսակցական լեզուն միատարր չէր և բազմաթիվ բարբառների և խոսվածքների համապատկերում հայությունն առանձին վայրերում խոսում էր ժամանակի թուրքերենով:

Մխիթար Սեբաստացին «Դուռն քերականության աշխարհաբար լեզուին հայոց» աշխատությամբ շարունակում էր օժանդակել գրական աշխարհաբարի զարգացմանն ու կատարելագործմանը: Նա առաջ էր քաշում աշխարհաբարի «մաքրման», կանոնակարգման հիմնախնդիրը, դիմում որոշակի գործնական քայլերի<sup>2</sup>: Այստեղ խոսակցական հայերենը իր պասիվ վիճակից վերածվում է կիրառական գործածության և նպաստում է ժողովրդի մեջ աշխարհաբարի հանդեպ հարգանք սերմանելուն:

Վերջնարդյունքին հասնելու համար Սեբաստացին առաջադրում է մի համապարփակ ուղեցույց, որի համառոտ տարբերակը ներառված է իր աշխատանքի առաջաբանում: Այդ ամփոփ ծրագրի համաձայն Սեբաստացին ուսուցման գործը սկսում է Փոքր Հայքի հայությանը խոսակցական և գործնական հայերենի մասին նախագիտե-

---

<sup>2</sup> Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990, էջ 104:

լիքներ հաղորդելուց՝ միջնորդ լեզուն համարելով հայատառ թուրքերենը: Այնուհետև փորձում է խորացնել հայերենի իմացությունը՝ նպաստելով խոսակցական ձևերի կանոնակարգմանը: Սեբաստացին կարևորում է և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի իմացությունը՝ մեկը մյուսին չճառայեցնելու ձգտումով: Այս մասին է վկայում արբահոր հետևյալ բանաձևումը. «Թէ այս լեզուովս խօսիք, թէ այն լեզուովն, ամենքն թող ի փառս Աստծոյ լինին, և այնէ ամենէն լան»:

Տարաբնույթ տեսակետներ են շրջանառվել Սեբաստացու աշխարհաբարի քերականության վերաբերյալ: Ոմանք այն կարծիքին են, որ նրա քերականության հիմքում մեծ հաշվով ընկած է Սեբաստիայի բարբառը (Հայր Մատթեոս վարդապետ Գարագաշյան, Հայր Ներսես վարդապետ Ակինյան և ուրիշներ): Սակայն Արսեն Այտընյանն այն շահեկան տեսակետն է շրջանառել, որ Սեբաստացու աշխարհաբարի քերականությունը գրվել է լեզվական-բառաշխարհագրական լայն ընդգրկումով, այսինքն՝ արևմտահայ բարբառների և խոսվածքների լեզվական տվալների խոր գնահատությամբ:

Խնդրո առարկայի քննությունը ցույց է տալիս, որ առավել ճշգրիտ են երկրորդ տեսակետի կողմնակիցները: Գևորգ Զահուկյանն ընդգծում է, որ Սեբաստացու քերականության մեջ տեղ գտած քերականական ձևերը արևմտյան խոսվածքների մեծամասնության հետ շատ ընդհանրություններ ունեն<sup>3</sup>: Սեբաստացու քերականության մեջ քննվող որոշ անուններ հոգնակին կազմում են *լաններ* ցուցիչով՝ էշ-իշլաններ, *կին* բառի հոգնակին կազմվում է *տիք* (կնքտիք) վեջավորությամբ: Այս երևույթներն առկա են ինչպես Սեբաստիայի, այնպես էլ *կը* ճյուղին պատկանող շատ խոսվածքներում (Կարնո, Խոտորջուրի, Մշո, Վանի, Տիգրանակերտի և այլ բարբառախմբերում): Անձնական դերանունների սեռականը կազմվում է *ի* մասնիկով՝ Եսինձի, մենք-մեզի, դուք-ձեզի և այլն: Այս խոսուն երևույթը հատուկ է տարբեր բնակավայրերի խոսվածքներին:

---

<sup>3</sup> Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

Ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական հարցեր քննելիս Մխիթարը քննադատական վերաբերմունք է ցույց տալիս լատինաբան նորամուծությունների հանդեպ՝ փորձելով գտնել և շրջանառել «նախնեաց» ձևերը: Շարահյուսական հարցերից համաձայնության և խնդրառության քննության մեջ նա հենվում է իր անմիջական նախորդների դրույթների վրա՝ ընդամին տարբերվելով նրանցից քննության մանրամասներով և ամբողջական մեկնաբանությամբ:

Սեբաստացու աշխարհաբարի քերականական ձևերի մեծ մասը ավելի ուշ համապատասխանեց գրական արևմտահայերենի կանոնական ձևերին: Նրա ստեղծած համապարփակ ծրագիրը ներառված է եղել նաև աշխարհաբարի ողջ քերականության հիմքում: Նրա քերականական ժառանգությունը հիմք հանդիսացավ վրացական քերականության սկզբնավորման համար: 1753 թ. վրաց Անտոնի կաթողիկոսը Մխիթարի հետևողությամբ կազմեց վրացերենի առաջին քերականությունը՝ շատ տեղերում կատարելով բառացի թարգմանություններ և հայաբան փոփոխությունները մտցնելով վրացերենի քերականության մեջ<sup>4</sup>:

Մխիթար Սեբաստացու գործունեության շնորհիվ Մխիթարյան միաբանությունը դարձավ աշխարհի հայագիտական կենտրոններից մեկը, իսկ նրա աշխատանքները կարևոր աղբյուր հանդիսացան լեզվաբանների և պատմաբանների համար: Նրա «Դուռն քերականության աշխարհաբար լեզուին հայոց» աշխարհաբարի առաջին դասագիրքը հայ քերականագիտության մեջ էական ներդրում ունի: Կարծում ենք՝ հայ լեզվաբանական միտքը պարտավոր է պատշաճ արժևորել աբբահոր քերականական ժառանգությունը, հատկապես նրա աշխարհաբարի քերականությունը՝ այն դարձնելով բանասիրական ֆակուլտետների ուսանողների ուսումնասիրության աղբյուր:

---

<sup>4</sup> Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 211:



## ՆԱԻՐԱ ԽԱԶՆՏՐՅԱՆ

*Խ. Արույանի անվան ՀՊՄՀ  
բանասիրական ֆակուլտետի փոխդեկան,  
Վաչե Պարպիզունու անվան հայ նոր և  
նորագույն գրականության և  
նրա դասավանդման մեթոդիկայի  
ամբիոնի դոցենտ,  
Բանասիրական գիտությունների թեկնածու*

### **ՊԱՏՐԱՆՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿՂԶԻՆ Գեղարվեստական էսսե**

*Օտար ջրերում հայացյալ Կղզի  
Հայոց հին լույսն է քեզնով նորանում...  
Գիտեմ տքնում ես, այս է դարից դար,  
Հայրենիքից դուրս՝ հայրենյաց համար:  
Հովհաննես Շիրազ*

Սիրում եմ ճանապարհորդել, սակայն, տարբեր պատճառներով, ինձ չէր հաջողվում լինել Վենետիկում, և, որ ավելի ցանկալի էր, Սուրբ Ղազար կղզում<sup>1</sup>: Առաջին անգամ ինձ բախտ վիճակվեց այցելել այնտեղ՝ Իտալիա կատարած երկրորդ ճանապարհորդությանս ընթացքում, երբ իտալական քաղաքների (Հռոմ, Սան Մարինո, Նեապոլ, Ռիմինի, Պոմպեյ, Սիենա, Պիզա, Ֆլորենցիա) շարքում կանգ էինք առնելու նաև Վենետիկում: Չէի կարծում, որ դժվար է Վենետի-

---

<sup>1</sup> Սուրբ Ղազար կղզին փոքր կղզի է Վենետիկի ծոցի մերձավոր ջրերում, Լիդո կղզուց անմիջապես դեպի արևմուտք: Այն 1717 թվականից պատկանում է Մխիթարյան միաբանությանը և միաբանության մայրավանքն է:

կից Սուրբ Ղազար հասնելը, քանի որ ըստ քարտեզի՝ գիտեի, որ ընդամենը քառասուն բոպեի ճանապարհ է, սակայն պարզվեց, որ որոշակի ժամերի միայն կարելի է այցելել միաբանություն: Վենետիկի հայտնի Սան Մարկո հրապարակի մերձակայքում գտնվող Սան Զաքարիա կանգառից մեկ ժամ առաջ վապորետոյով, որի արժեքը մեկ անձի համար կազմում էր 19 եվրո, արդեն մեկնել էր այդ օրվա զբոսաշրջիկների խումբը: Որոշեցինք ջրային տաքսի վերցնել և անպայման այցելել կղզի, որովհետև հաջորդ օրն արդեն Վենետիկում չէինք լինելու:

Որքան մոտենում էինք կղզուն, այնքան հրապուրիչ էր դառնում կանաչախիտ թագուհին: Այն կարծես կանչում էր դեպի իրեն՝ գմբեթների մետաղյա ոսկեդեղինը շողարձակելով Վենետիկյան ծոցի կապտականաչագույն անկնճիռ ջրերում: Եվս մի քանի բոպե, և նավակն անհանգիստ ճոճվում էր՝ կոհակներ ցայտելով ավամերձ սանդղքների:

Թախանձագին խնդրեցինք բացել Սուրբ Ղազար մտնող միակ ելքի ուղեփակոցը և ներս թողնել մեզ, մինչև զբոսաշրջիկների վերջին խումբը կավարտի էքսկուրսիան՝ խոստանալով նրանց հետ հեռանալ կղզյակից:

Երբ ոտքս դրեցի երեքհարյուրամյակից ավելի սրբացած հայոց հողին, հայտնի առասպելի նման կարծես երևակայական ուժ ստացա, միտքս անէանալով՝ տարավ ինձ դարերի խորքը: Վերանալով իրականությունից՝ աչքերիս առջև հառնեցին կարդացած ու լսած պատմական, գեղարվեստական, գիտական ու վավերագրական բոլոր պատմությունները Մխիթարյանների մասին՝ շաղախվելով երևի թե գենետիկ հիշողությանս ու երևակայական տեսիլներիս՝ պարուրված խնկահոտ ու մեռոնամոմաբույր անուրջներով: Ոտքիս տակ զգալով հայրենի հողի ուժը՝ միանգամից տեղափոխվեցի անցյալ՝ փորձելով վերհիշել բոլոր այն պատմությունները, որոնք համահունչ

Էին երկու կարևոր գաղափարների՝ «ծուխը ծխանի»<sup>2</sup> ու «հանգանակը հավատո»<sup>3</sup>:

Կղզու մուտքի աջ կողմում Մխիթար Սեբաստացու բարձրադիր արձանն էր՝ թաքնված տերևախիտ ծառերի ստվերում, որ կարծես ողջունում էր այցելուներին ու հսկում շրջակայքի անդորրը: Միայն սրբավայրերում հանդիպող խորհրդավոր խաղաղություն էր ամենուր, որն ուղեկցվում էր, երևի թե միայն սեփական ունկերումս հնչող Սեբաստացու «Տաղարանի» և շարականների մեղմանուշ պատրանքով: Ես լռություն էի լսում...

Հայացքով տնտղում եմ շուրջս ու կանգ առնում արձանի առջև...

Ժամանակն ապացուցել է, որ անհավանական թվացող պատմությունը կարող է դառնալ իրականություն, որ Սեբաստիայում ապրող տասը տարեկան Մանուկը, ով ճգնավորությամբ Աստծուն մոտենալու հավատով ընկերոջ հետ փախել էր տնից իր կրոնամոլ ուսուցիչների՝ Մանասե և Մարիամ քույրերի երազների մեկնությամբ, դառնալու էր ազգային արժեքների, հավատի ու դպրության, արվեստի ու հայրենիքի պահպանողն ու զարգացնողը: Հալածված լինելով սեփական եկեղեցու որոշ հետադեմ սպասավորների կողմից, հայրե-

---

<sup>2</sup> «...Ո՞վ կտար ինձ ծուխը ծխանի / Եվ առավոտը Նավասարդի...»: Այս խոսքերն Արտաշես արքայի վերջին բառերն են, երբ նա օտար հողի վրա մահացու վերք ստանալով դարան մտած թշնամիներից, ընկնում է ձիուց ու կնքում իր մահկանացուն: Մեր գրականության մեջ, որպես ինտերտեքստ (միջտեքստայնություն), բազմիցս է կիրառվել «ծուխը ծխանի» արտահայտությունը՝ որպես հայրենի օջախ: Օրինակ՝ «...Որ օջախ էր, խաղաղ կյանքում խաղաղ օջախ՝ / Թոնրի կրակ, ծխանի ծուխ, կերոն ու ջահ (Պարույր Սևակ): Կամ՝ «...Ու երբ լույսի սյունի մը պես կամբառնա ծխանի ծուխ, / Ամեն աչքե կարծես դարե՛ր, իրենց շիրիմին քարը նետած, / Կարփողջունեն առաջին նա՛վն հայրենադարձ»( Վահե Վահյան):

<sup>3</sup> «Հավատո հանգանակ» արտահայտությունը կրոնական հավատի հիմնական դոգմաների բանաձևումն է: Հավատացյալն արտասանում է այն՝ իբրև իր հավատի խոստովանություն:

նի հողի վրա չգտնելով աջակիցներ ու կարեկցողներ, Աստծո կամոք ու ողորմածությանը հաղթահարում է անմարդկային չարչարանքներ: Նա կաթոլիկ եկեղեցու թևի տակ շարունակում է ընդունել ու սիրել առաքելական եկեղեցին ու իր գործը ծառայեցնում համայն հայության կրոնական տարածայնությունների վերացմանն ու միասնակա- նությանը:

Անառարկելի է Մխիթար Սեբաստացու վաստակը դպրու- թյան, հայագիտության, գրականության զարգացման և ազգային բազմաթիվ հարցերի կարգավորման բնագավառներում, անգնահա- տելի՝ քրիստոնեական հայացքների տարակարծության պատճառով թշնամանքի դատապարտման ու հաշտեցման տեսակետից: Այս ազ- գափրկիչ պատգամն է նաև Մխիթարյան կրթանոցի սաներից Մկրտիչ Պեշկեթաշյանի եղբայրական հորդորը՝ ուղղված հայոց կա- թոլիկ ու առաքելական, ազնվական ու ռամիկ, մտավորական ու թերուս համասփյուռ հայերին.

*Մեկտեղ լացինք մենք ի հընում...  
Եկեք դարձյալ հար անբաժան  
Խառնենք զարտոր եւ ըզխնդում,  
Որ բազմածնունդ ըլլա մեր ջան.  
Ընդ աստեղոք ի՛նչ կա սիրուն  
Քան զանձկալի Եղբայր անուն<sup>4</sup>:*

Մի աղավնի թառել է արձանացյալ Սեբաստացու ուսին ու հանկարծ թևում է, իջնում դեպի ինձ ու սրընթաց ոստոստալով՝ մտնում կամարակերպ մուտքից ներս: Ակամա հետևում եմ ճերմա- կավոր ուղեկցիս: Ներսում աստվածահաճ լռություն է, ավետաբեր թևավորը ճախրել է, չգիտեմ՝ թե ուր, և ինձ թողել Մխիթար աբբահոր գիտակցվող ներկայությունը: Որոնող հայացքով նայում եմ շուրջս՝ տեղանքում կողմնորոշվելու համար: Եվ հանդիպակաց պատից արևի ոսկեգույնով օծված ժպտում է ինձ իմ հարազատ,

---

<sup>4</sup> Մ. Պեշկեթաշյան, Տաղեր, Երևան, 1961, էջ 27:

արյունակից, իմ ապավեն, հայի ու հայկականության խորհրդանիշ  
ուտրբ լեառը Մասիս ...

*Շարժի՛ր, ա՛հ շարժի՛ր դուն ալ Նահապետ,  
Մասյաց սարերուն շընչիկն առ մեկ հեպ...  
Ահա շարժեցավ ծեր Նահապետն ալ.  
Ո՛վ դեպի Մասիս յուր հեպ կառնու քայլ<sup>5</sup>:*

Ես գտնում եմ ինձ, տեղում եմ, հայրենիքում, և ոչ մի օտար ու  
անհաճո երևույթ չի կարող շփոթեցնել ինձ...

Երբևիցե միստիկ չեմ եղել, սակայն անբացատելի թեթևությո-  
ւունն ինձ կառավարում էր այդ պահին: Չեմ կարող պնդել, որ շուրջս  
ոչ ոք չկար: Լսվում էր մայրավանքի զբոսավար Հայր Վրթանեսի  
մեկնաբանող ձայնը: Ես այնքան էի անէացել, որ շատերի շարքում  
տեսնում էի նաև ծանոթ ու հարազատ դեմքեր. օտարախոս ու օտա-  
րադեմ, ժպտացող ու հիացած զբոսաշրջիկների մեջ գծագրվում են  
Ղևոնդ Ալիշանի հեզ ու բարեհամբույր դիմագծերը՝ անառարկելի հե-  
ղինակությամբ: Նա նայում էր ինձ միջանցքում տեղադրված կի-  
սանդրուց, կամ գու՛ցե նստած էր քիչ հեռու տեղադրված նստարա-  
նին: Ես այդ պահին ոչ մի շնչավորի ներկայության կամ ինչ-որ բանի  
բացատրության կարիք չունեի, ավելին, համոզված էի, որ միշտ եղել  
եմ այստեղ, և ամեն ինչ ծանոթ է ինձ: Տեղավորվելով Նահապետի  
կողքին՝ աղոթքի նման շնջածայն հեգում եմ «Հայ հանճարի» մար-  
գարեացած բարբառը.

*Կերդնու Նահապետ, կանչե ձեզ, Հայե~ր,  
Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք,  
Մեծ, պզտիկ՝ այտոր սիրով վառվեցեք:...  
Ծագե՛, հայ հանճար, փայլե՛ բյուր բոցեր,  
Իմանան ազգեր՝  
Թե Հայք չե՛ն անցեր<sup>6</sup>:*

<sup>5</sup> Ղևոնդ Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 35:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 69:

Մտովի տեղափոխվելով ժամանակի մեջ՝ հայտնվում եմ արտակարգ լույսով բացված մայիսյան այն առավոտին, որից ընդամենը երկու տարի առաջ էր, որ նենգամիտ Սուլթան Մուհամեդ Բ-ի հրովարտակով Թուրքիայի սահմաններում ապրող բոլոր հայ կաթոլիկներին աքսորից հետո ներում էին շնորհել և իրավունք տրվել վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը, այդ թվում՝ Պոլիս: Վենետիկից ժամանել էր հայկաբան Մկրտիչ Ավգերյանը՝ Բերայի վերաբացված Վրթանես Չալըխյանի «Վիենայի Մխիթարյան հարց» դպրոցի լավագույն սաներին, փոխադարձ համաձայնությամբ, Սուրբ Ղազար տանելու նպատակով: Մխիթարյան հայրերը, կարևորելով դպրության տարածման գործը հայոց մեջ, սիրահոժար շրջագայում էին աշխարհի հայաշատ բոլոր կենտրոններում՝ հայագգի ընտանիքներից շնորհալի պատանիներին հավաքագրելու, գերազնիվ Մխիթար Սեբաստացու կողմից հիմնադրված դպրոցում սովորելու համար, որը բազմահարուստ գիտելիքներ ուսուցանելու պատճառով կոչվում էր ակադեմիա: Այդ առաքելությամբ էր, որ Մկրտիչ Ավգերյանը Բոսֆորի հրաշագեղ ափից իր հետ տարավ Պետրոս և Թագուհի Ալիշանյանների որդիներին՝ Քերովբեին և Սերովբեին<sup>7</sup>, ովքեր հայագիտության բնագավառում Մասիսի և Սիսի պատկերավոր համադրությամբ գազաթներ էին լինելու: Հատկապես Քերովբեն՝ Ղևոնդ Ալիշանն, իր հոգևոր ծառայությամբ, մանկավարժական, խմբագրական, գիտական ու գեղարվեստական քանքարով, պսակելու էր հայագիտության խութաշատ ուղիները՝ դառնալով լույսի փարոս ու առաջնորդող ուժ:

Քառանկյուն հատակագծով և կամարակապ ծածկերով կառուցված երկհարկանի շինությունների դիմացի տաղավարների մեջտեղում վարդաբույր ու բազմագույն բացօթյա բուրաստանն էր, անկյուններում սրածայր ու մատղաշ դրախտանոճիներով, որոնք եզերված էին գնդաձև ու ուղղանկյուն մշտադալար թփերով: Ամենուր

---

<sup>7</sup> Տե՛ս Ս. Սարգսյան, Ալիշան, Երևան, 1978, էջ 20-22:

զգացվում էր խնամող ձեռքերի մշտակա առկայությունը: Այնքան լուսավոր ու ջերմացնող էր միջավայրը, որ անմիջապես ճանաչում եմ Սուրբ Գրքից ինձ ծանոթ դրախտն ու փառավորվում վիճակիս համար:

Ահա հուշիկ քայլերով, «Դարապատում»-ի վերջին հատորյակը մտազբաղ թերթելով, համաչափ խուզած դափնեթփերի շարքերին զուգահեռ ճեմում է Ղուկաս Ինճիճյանը՝ անվանի աշխարհագետը, պատմաբանը, բանասերն ու բանաստեղծը:

Քիչ հեռու՝ կամարի տակ, արևմտյան խոյակի ստվերում, գրասեղանին կոթնած աշխատում է Արսեն Բագրատունին. գու՛ցե «Հայկ դյուցազն»-ի հերոսական տողերն են ծնվում, որից դեմքը ստացել է խրոխտ ու հաղթական կեցվածք, կամ էլ կարդում է իր սիրասուն սան Մկրտիչ Պեշիկթաշյանի բանաստեղծություններն ու ուղարկված նամակով դեռատի Սրբուհու ստեղծագործական թոթովանքները՝ կանխազգալով ապագա վիպասանուհու ստեղծագործական թռիչքների մասին ու երիցս հուսավառվում հայոց գրի հարատևման տեսիլքով:

Հարավային կողմը տանող միջանցքի վրա բացված պատուհանից ականջիս են հասնում խոսակցության ձայներ: Լարելով լսելիքս՝ մտաբերում եմ Գաբրիել Ավետիքյանին, Խաչատուր Սյուրմելյանին և Մկրտիչ Ավգերյանին: Նրանք հավանաբար մտահոգված են, որ Մխիթար Սեբաստացու՝ դեռևս 1749-1769 թթ. կազմած «Բառագիրք հայկազեան լեզուի» երկհատոր բացատրական բառարանի հիմքի վրա ստեղծված «Նոր բառագիրք հայկազեան լեզուի» տասներկու հատորները նյութական միջոցների սղության պատճառով հարկադրված են սեղմել այնքան, որ տպագրվի ընդամենը երկու հատոր: Սակայն կատարված աշխատանքն այնքան արժեքավոր է, որ 1836-1837 թթ. տպագրվելուց ի վեր դարձել է բառամթերքի անփոխարինելի շտեմարան ու սեղանի գիրք յուաքանչյուր հայ մտավորականի համար:

Այսպիսի մի անխոնջ աշխատանոց է եղել և կա Հայոց Սուրբ Ղազարը, որն իր դրոշմն է դրել հայագիտության լուսապսակ ճակատին: Մխիթարյանները չէին գործում որպես ճգնավորներ, առանձնացած կղզում, այլ շրջագայելով հայաբնակ զանազան վայրերում՝ հոգիներ էին փրկում՝ զուգահեռ կորստից փրկելով նաև հայ մտքի վաղնջական արժեքները՝ անցյալի հայ գրականության, ձեռագրերի տեսքով, որոնք ցանուցիր էին վանքերում, եկեղեցիներում կամ, որպես ընտանեկան սրբացված մասունքներ, որոշ անհատների տնե-րում: «Մխիթարյան վարդապետները մեղվի պես հավաքում էին ազգաշահ մշակույթի ծաղկահյուսած, խնամքով տանում Իտալիա՝ Վենետիկի առջև գտնվող կղզու վրա պահել-պահպանելու համար... Սուրբ Ղազարը մի փոքրիկ, մանրանկարչական Հայաստան դարձավ, մի Հայաստան, որ ավերանքների ու ստրկության հայրենիք չէր, այլ գրքերի հայրենիք»<sup>8</sup>:

Ափսոս, արդեն մեկնելու ժամանակն էր, և մենք կրկին այցելելու վճռականությամբ վերադարձանք Վենետիկ:

Երկրորդ այցելությունս ութ տարի անց էր: Արդեն գնալու էինք ուղիղ Վենետիկ՝ Սուրբ Ղազարում Երևանից մեր սիրելի Գոհարիկ և Նյու Յորքից՝ Նարեկ սանիկների պսակադրության վկան լինելու: Խորհուրդը շատ բովանդակալից էր. աշխարհասփյուռ հայության տարբեր ծագերից եկած հայերը ձևավորում էին մի ընտանիք, որը Սուրբ Ղազարի հանգույն չէր տարբերակելու կաթոլիկ ու առաքելական հավատացյալներին:

Սուրբ Ղազար եկեղեցու որմնանկարները, քանդակները, գույները, կամարակապ սյուները, գավիթը նման էին Գյումրիի Յոթվերք և Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցիներին, որոնք ևս աշխարհասփյուռ քրիստոնյա հայերի աղոթքներին են ունկնդիր:

Ձուտ հայկական առաքելական եկեղեցական ծեսին համապատասխան կատարված հրաշալի ու բովանդակալից պսակադրու-

---

<sup>8</sup> Լեո, Երկեր տասը հատորով, հտ. 3, Երևան, 1973, էջ 502:

թյան արարողությունից հետո դիտեցինք թանգարանային հատվածները, հատկապես հիացանք գրադարանով ու պատկերասրահով: Ամենուր պատերին բովանդակություն տվող գեղանկարները վկայում էին հայոց արվեստի ու հոգևոր միասնության անկասելի ուժի ու փոխադարձորեն միմյանց լրացնելու կարևորությունը:

Ես ինձ հետ գրքեր էի տարել՝ նվիրելու միաբանությանը: Հանդիպեցի հոգևոր հայրերի հետ, զրուցեցինք մեր համալսարանի, բանասիրական ֆակուլտետի և Մխիթարյան միաբանությանը հետաքրքրող մի շարք հարցերի շուրջ: Ինձ հետ տարած գրքերից հատկապես հետաքրքրվեցին Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների և Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Աելիտա Դուլուխանյանի վերջին տարիներին հրատարակած մի շարք գրքերով, այդ շարքում՝ «Ներսես Շնորհալի», Մխիթարյան միաբանության 300-ամյա հոբելյանին նվիրված հոդվածների ժողովածուները, «Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր», «Ղևոնդ Ալիշանը հանրագիտակ», «Ֆրեդերիկ Մակլերը հայագետ», «Նաղաշ Հովնաթան», «Անանիա Շիրակացի» և այլն: Պսակող քահանան Սուրբ Ղազարի Մխիթարյան միաբանության վարդապետ Հայր Համազասպ Քեշիշյանը չէր, այլ Հայր Ներսես Հարությունյանը, ով հրավիրվել էր Միլանի հայոց եկեղեցուց և զրույցի ընթացքում պարզվեց, որ Միսիանից է և Համո Սահյանի պոեզիայի սիրահար:

Ոգևորությունս ու ակնածանքս բազմապատկվեց, երբ Սուրբ Ղազար մայրավանքի վարդապետներից մեկն առաջարկեց տեսնել Ղևոնդ Ալիշանի սենյակը՝ որպես նվեր իմ հայագիտական նվիրումի ու Միաբանների հետ փոխադարձ համախոհության: Այն զբոսաշրջային հատված չէր և արգելված էր լուսանկարել:

Այնքան խորհրդավոր էր Հայր Ալիշանի առանձնասենյակը, այնքան հյուրընկալ ու խնամված, որ թվում էր՝ նա դուրս է եկել մի

քանի ընդհատվել է շրջագայելու իր իսկ նախաձեռնությամբ Սուրբ Ղազարում Վանա լճի հատակագծով կառուցված լճակի ափին:

Ամենուր գրքեր, մատյաններ, ձեռագրեր ու խորհրդավոր, խոսող, պատմող մի լռություն: Համեստորեն հարդարված մահճակալն էր միայն հուշում, որ այստեղ ապրել է գուցե բոլորովին էլ ոչ շարքային, սակայն սովորական մի մահկանացու: Պատի տակ՝ գրապահարանների դիմաց, գրասեղանն էր, անկյունում՝ թանաքամանի մեջ դրված սրածայր գրիչով, որ ամեն վայրկյան սպասում է այն մեծ գիտնականին ու սրբացված հանճարին, որի տեսակն է, որ այսօր անգամ շարունակում է լուսավորել հային...

Հետ եմ գնում հիշողությամբ... ու հառնում է մտքիս օգոստոսյան մի լուսահիշատակ օր, երբ երիտասարդ Դանիել Վարուժանը՝ հայ բանաստեղծության ասպետ-նահատակը, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում սովորելու նպատակով շոգենավով Կ. Պոլսից հասնելով Վենետիկ, աճապարում է Սուրբ Ղազար...<sup>9</sup>: Երկյուղածությամբ մոտենալով Ադրիականի ափին հանգչող Ալիշանի շիրիմին, ծնկաչոք պաշտելիությամբ համբուրելով նվիրական հողը՝ բացականչում է<sup>10</sup>.

*Օ՛հ, Ասրվա՛ծ իմ- ի՛նչ ըղեղ էր արիկա՛  
Որ Տիեզերքին քամեց երակը համայն,  
Հենած մարդուն, ճառագայթին, խաչին վրա,  
Գրրկեց Այրին, որ կը կոչեն Հայաստան՛!*

Լիացած բովանդակալից օրվա երկնահաճ խորհրդով հրաժեշտ տվեցինք միաբանության անդամներին ու ավելի ու ավելի հարգատ դարձած Սուրբ Ղազար կղզուն:

Հետահայաց տնտղելով Զանգակատան գմբեթի երկու խաչերը՝ կաթոլիկ ու առաքելական, կրկին համոզվեցի, որ հայության

<sup>9</sup> Հ. Հակոբջանյան, Առկայծ ճրագ, Գյումրի, 2004, էջ 29:

<sup>10</sup> Ա. Շարուրյան, Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, 1984, էջ 24, 33-35, 38-39, 140, 155:

<sup>11</sup> Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, Երևան, 1986, էջ 127:

ապագան միասնականության, գիտության, լեզվի ու մշակույթի ուժով է հաղթելու՝ վկա մեր սուրբ հավատն ու արարումով ապրելու կամքը:

Չեմ կարող չհավատալ Հովհաննես Ավգերյանի սան, Մխիթարյան միաբանության հավատարիմ բարեկամ, անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնի խոսքերին. «Թերևս դժվար է գտնել որևէ այլ ազգի կենսագրություն, որն առավել զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թուլությունները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպես էլ լիներ նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ որ լինի ապագայում, նրանց հայրենիքը պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը...»<sup>12</sup>:

Սուրբ Ղազարի զորությամբ կաթոլիկ և առաքելական հայերի միասնական աղոթքներն առ Աստված հասնեն՝ վկա Ջանգակատան գմբեթի երկու խաչերը, որ ջրերի հայելու մեջ օրորվելով, կարծես հրաժեշտ էին տալիս ուխտավորներին...

Ես ինձ հետ տարա ի լուր հայության ամբողջ աշխարհի մի ափի մեջ տեղավորվող սրտաչափ կղզի, փոքրիկ մի հայրենիք, որտեղ միաձուլվ են մշակույթն ու գիտությունը, ուր ամեն ինչ հնաբույր է, բայց ոչ հնացված, օտարի հողում, բայց ոչ օտարոտի... Ս. Ղազար կղզին հայոց հավատի ու հոգևոր-մշակութային ոսկեձուլ մանյակի թանկագին քարն է և կիկնակի արժեքավոր, քանզի հայրենիքից հեռու պահել է ինքնությունը՝ օրինակ դառնալով հայրենի հողի վրա ապրողներին...

---

<sup>12</sup> Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Զրուցարան, Երևան, 1991, էջ 526:



## ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ  
 հայ հին և միջնադարյան գրականության և  
 նրա դասավանդման մեթոդիկայի  
 ամբիոնի դոցենտ,  
 Մաշտոցի անվան Մատենադարանի  
 Ձեռագրագիտության բաժնի  
 ավագ գիտաշխատող,  
 Բանասիրական գիտությունների թեկնածու*

### ՄԻՒԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑՈՒ «ՏԱՂԱՐԱՆԸ»

#### **Ներածություն**

Հանճարեղ Մխիթար Սեբաստացին հայ մշակույթի վերանորոգման իր բազմաշերտ ծրագրի մաս է համարել նաև երաժշտությունը<sup>1</sup> հանդես գալով թե՛ որպես բանաստեղծ, թե՛ որպես տեսաբան-ուսումնասիրող<sup>2</sup>: Կենսագիրներն ու ուսումնասիրողները հաճախ շեշտում են երաժշտության նկատմամբ Մխիթարի սերը, որի արտահայտությունը հեղինակի բանաստեղծական ժառանգությունն

<sup>1</sup> **Հ. Ղևոնդ Վ. Տայեան**, Մխիթար Աբբահայր երաժիշտ (իր շարադրած երգերով հանդերձ), Վենետիկ, 1954, էջ 20-30: **Ն. Թահմիզեան**, Մխիթար Սեբաստացին եւ վերանորոգության շարժումը հայ հոգեւոր երգարուեստում, «*Բազմավէպ*», Վենետիկ, 1977, թ. 3-4, էջ 205-214: **Մ. Ղևոնդյան**, Մխիթար Սեբաստացու «Քրիստոնէականներ»-ը որպես կրթադաստիարակչական դասագրքի նմուշ, Բանբեր Մատենադարանի, Երևան, 2021, թ. 32, էջ 164-165:

<sup>2</sup> Երաժշտության տեսական հարցերին են վերաբերում Մխիթար Սեբաստացու «Յաղագս մաթեմատիքայի» աշխատության «Յաղագս երաժշտութեան, որ է չորրորդ մասն մաթեմատիքայի», «Յաղագս երաժշտութեան ըստ որում են առ լաթինսն» գլուխները, որոնք տպագրված են. տե՛ս **Ղ. Տայեան**, Նշվ. աշխ., էջ 16-18, ծնթ. 14: Ուսումնասիրողների կարծիքով այս աշխատությունը Մխիթարի գործընկեր և գաղափարակից Խաչատուր Էրզրումեցու «Համառօտական իմաստասիրութիւն» չափածո երկի դասագրքի վերածված արձակ վերաշարադրանքն է. **Հ. Պ. Համելեան**, Մխիթար Աբբահօր «Յաղագս մաթեմատիքայի» դասագիրքը եւ անոր նշանակութիւնը, «*Բազմավէպ*», Վենետիկ, 1949, թ. 7-12, էջ 222-229:

ամփոփող «Տաղարանն» է<sup>3</sup>: Սույն հոդվածի խնդիրն է «Տաղարանի» հիմքի վրա<sup>4</sup> պարզել բանաստեղծի ստեղծագործական ազդակ- (ներ)ը, քննել տաղերի հյուսվածքի առանձնահատկությունները:

### ***Մխիթարի ստեղծագործական ազդակները***

Մխիթարի փոթորկահույզ ու խիզախումներով լի կյանքի և մեծահավատ սրտի գեղարվեստական արտահայտությունն է «Տաղարան»-ը: Կենսագիրների վկայությամբ Մխիթար Սեբաստացու երաժշտական-հոեւտորական ծիրքը դրսևորվել է տակավին մանուկ հասակից<sup>5</sup>. նա ուներ երգչային ձայն, նուրբ լսողություն, հազվագյուտ հիշողություն, հանկարածաբանելու կարողություն, ստեղծագործական և մանկավարժական ունակություններ, սեր և աշխատասիրություն: Այս ձիրքերն արտահայտվել և ամրապնդվել են երիտասարդ տղայի հետ տեղի ունեցած, հետագայում ստեղծագործական որո-

---

<sup>3</sup> Գիրք քրիստոնէականի վարդապետութեան: Շարադրեցեալ աշխարհաբառիւ լեզուաւ աշխատասիրութեամբ Տեառն **Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ Աբբահայր** կոչեցելոյ: Ընդ որում եւ Երգք Տաղից առադրին, որք ի վաղնջուց ժամանակաց շինեցեալք են ի նոյնոյ Վարդապետէ: Տպագրեցեալ յամի Տեառն 1727, մարտի 7, ի Վենետիկ, Ի տպարանի Անդօնի Պօղօսի, 132 էջ: Մխիթարի կենդանության օրոք իր աշակերտների ձեռքով ընդօրինակված անտիպ տաղերը 11-ն են, որոնց ցանկը՝ **Հ. Սահակ Ճեմճեմեան**, Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը, Վենետիկ, 1980, էջ 136-137: Վեց տաղեր **Մխիթար Սեբաստացիի** հոգեւոր Երգարանէն ի պատիւ ամենասուրբ Կուսին եւ Ս. Անտոն Անապատականի, իտալերէն թարգմ.՝ **Յովսէփ Ֆրասսոն**, Մխիթար Աբբահօր ծննդեան երեքհարիւրամեակին առիթով, 1676-1976, Վենետիկ-Ս. Ղազար, 1977:

<sup>4</sup> Սույն հոդվածի մեջ կիրառել ենք **Մխիթար Սեբաստացի**, Գիրք քրիստոնէական վարդապետութեան, Տաղարան, Վենետիկ, 1732, 203 էջ (այսուհետև՝ «Տաղարան», էջերը՝ շարադանքին կից՝ փակագծերում):

<sup>5</sup> Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացոյ րաբունապետի եւ աբբայի, յօրինեալ Տեառն Տեառն Ստեփաննոսի Գիւվեր Ագոնց արհիեպիսկոպոսի Աբբայի (այսուհետև՝ Վարք Մխիթարայ Աբբայի), Վենետիկ, 1810. տակավին պատանի՝ «ուսանէր գեղանակս շարականաց» (էջ 29), Սեբաստիայում եղած ժամանակ հյուսում է «գերգն գովեստից եւ պաղատանաց առ ամէնօրինեալ Աստուածամայրն», որը Մխիթարի այլ «նորագիտ երգերի» հետ «ցայսօր երգեն ուրեք-ուրեք» (էջ 68-69):

նումների համար էական դարձած միջադեպերի արդյունքում. Սևանի անապատում աղոթքի պահին հայտնվում է Մարիամ Աստվածածինը՝ հավերժորեն դառնալով ոչ միայն Մխիթար Սեբաստացուն, այլև Մխիթարյան միաբանությունն ուղղորդող անտեսանելի ուժը<sup>6</sup>:

1727 թ. Սեբաստացին խիզախում է՝ աշխարհաբարով «Դուռն քերականութեան» աշխատությունից երկու ամիս անց հրատարակելով «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» դասագիրքը, որին կցված էր նաև «Տաղարանը»<sup>7</sup>: 1732 թ. վերահրատարակվեց՝ դառնալով ուղենիշ արևմտահայ աշխարհաբարի տարածման գործում<sup>8</sup>: Ժողովրդի մեջ գործունեություն ծավալած, մանկավարժական աշխատանքի մեջ հմտացած Մխիթարը հրաշալիորեն գիտակցում էր, որ դասագիրքն իր նպատակին չի ծառայի, եթե հնարավորություն չի տալիս գիտելիքի մատուցումը դարձնել հետաքրքիր և բովանդակալից: Այդ պատճառով, 1727 թ. վերահրատարակված «Քրիստոնեական վարդապետութիւն» դասագրքին կաթոլիկ դասագրքերի օրինակով<sup>9</sup> կցում է իր իսկ քերթվածները պարունակող «Տաղարանը»,

---

<sup>6</sup> Մխիթարի մարեմասիրության ամենատպավորիչ արտահայտությունն այն է, որ միաբանությունը Պոլսում ոչ պատահականորեն հիմնադրվեց 1700 թ.՝ Աստվածամոր Ծննդյան օրը՝ սեպտեմբերի 8-ին, 1717 թ. նույն օրը միաբանության անդամները տեղափոխվեցին-հաստատվեցին Ս. Ղազարում. **Մ. Հայունի**, Սեբաստացի Մխիթար Աբբաօր մարեմականութիւնը, Այնճար, 2007, էջ 38, 46-47:

<sup>7</sup> Առաջին անգամ հրատարակվել է 1725 թ.՝ գրաբարով, առանց տաղային միավորների: Հաջորդիվ՝ 1727, 1732 թթ.՝ Մխիթարի կենդանության օրոք, աշխարհաբարով, 1771 թ.՝ հետմահու: Առաջին երկուսը հեղինակի կամքն արտահայտող բնագրեր են, տաղերն ընտրվել ու դասդասվել են Մխիթարի կողմից և սկզբնագրի արժեք ունեն: Տե՛ս **Կ. Հարոյան**, Հայերեն երգարանների մատենագիտություն (1513-1921), Երևան, 2014, էջ 528-530:

<sup>8</sup> **Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան**, Մխիթարի նպաստը աշխարհաբարի կազմութեան, «*Քազմավէպ*», Վենետիկ, 1977, թիւ 3-4, էջ 302:

<sup>9</sup> Արդեն 15-րդ դ. կաթոլիկ Քրիստոնեականներում կիրառվում էին տաղային միավորներ. տես **М. Корзо**, Украинская и белорусская катехетическая традиция конца XVI-XVII вв., становление, эволюция и проблема заимствований, Москва, 2007, ст. 3-13. հղումը՝ **Մ. Ղևոնդյան**, Նշվ. հոդվ., էջ 164:

որը հնարավորություն էր տալու մանուկներին հեշտությամբ յուրացնել աստվածաբանական բարդ և խրթին նյութը: Ս. Ճեմճեմյանի պրպտումները Վենետիկի Մխիթարյան մատենադարանի դիվանում վկայում են, որ դասագիրքը մեծ պահանջարկ է վայելել, և ողջ տպաքանակը սպառվել է գրեթե անմիջապես<sup>10</sup>:

Երաժշտության դերի ու նշանակության Մխիթար Սեբաստացու ըմբռնումներն ուղիղ կապ ունեն «Տաղարանի» (նաև ժողովածուի մեջ չմտած հեղինակային տաղերի) հետ՝ որպես դրանց գործնական արտահայտություն: Երաժշտությունն օգտակար է. փարատում է տրտմությունը և զվարճացնում սիրտը, բարեպաշտական շարժումներ արթնացնում մարդու մեջ. այսինքն՝ «ի գթութիւն առ յաղքատ, եւ յարտասունս եւ ի յողբս առ զղջումն եւ յապաշխարութիւն վասն մեղաց. ի գովասանութիւն եւ ի դրուատումն աստուածային անուան... եւս մխիթարեն զհոգիս մեր աստուածային գովասանութեամբ»<sup>11</sup>: Նույն նպատակն է հետապնդում նաև «Տաղարանը»: Ճիշտ իր հանճարեղ նախորդների՝ Մեսրոպ Մաշտոցի, Ներսես Շնորհալու, Սայաթ-Նովայի պես՝ որպես դասական բանաստեղծ, Մխիթար Սեբաստացին ստեղծում է «եղանակաւոր բանաստեղծութիւն»՝ դիդակտիկ ուղղվածությամբ<sup>12</sup>:

### **Տաղերի հյուսվածքի առանձնահատկությունները**

«Տաղարանում» գետեղված են 24 երգեր, որոնք դառնություններ և դժվարություններ տեսած, սակայն հոգու լույսը պահպանած

---

<sup>10</sup> Ս. Ճեմճեմեան, Նշվ. աշխ., էջ 137:

<sup>11</sup> Մխիթար Սեբաստացի, Յաղագս երաժշտութեան, Գլուխ առաջներորդ. տե՛ս Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, Նշվ. աշխ., էջ 16, ծնթ. 14:

<sup>12</sup> Մխիթար Սեբաստացին հորինել է իր որոշ երգերի եղանակները, որոշներին էլ հարմարեցել ամեն առանձին տաղին կցված խազագոյալ շարականների եղանակներ: Յավոք, պահպանվել են միայն 5 երգի (1. Աղաչեմք զքեզ Աստուածածին, 2. Ըզբեզ սուրբ հայր Անտոնիէ, 3. Գովեալ դասուց, 4. Երանուիի Մարիամ կոյս դրուատելի, 5. Անճառին խորան) հեղինակային եղանակները. տե՛ս Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, Մխիթար Աբբահայր երաժիշտ, էջ 24, 26:

հեղինակի կյանքի տարբեր դրվագներ ներկայացնող այլաբանական պատկերներ են: Խորագրերն արտացոլում են տաղերի խրատական, դրվատական-գովասանական, աղերսական բնույթը<sup>13</sup>:

Ուսումնասիրողները Մխիթարի տաղերի գրության ժամանակի մասին կարծիքը բխեցնում են առաջաբանում հեղինակի մի հուշումից, ըստ որի՝ դրանք իր պատանեկության շրջանում գրած քերթվածներն են<sup>14</sup>: Ուշագրավ է «Երգ եւ աղերսանք առ ամենասրբուհի Կոյսն...»<sup>15</sup> քերթվածը, որտեղ պահպանված է տաղի գրության թվականը՝ 1152 (1703). այսինքն՝ բանաստեղծը եղել է 27 տարեկան<sup>16</sup>: Հեղինակն իր կյանքի տարբեր հատվածներ անաչառ ինքնազննումի է ենթարկում և յուրաքանչյուրի համար խնդրում բարեխոսություն և ինքնագիտակից լինելու կամք. հատկանիշներ, որոնց երբեք չդավաճանեց Մխիթարյան միաբանության հիմնադիրն ու ուսուցիչը:

Բանաստեղծությունն ունի «Տանն իմոյ լե՛ր խարիսխ յուսոյ, ո՛վ Կոյս սըրբուհի»<sup>17</sup> կրկնակը:

---

<sup>13</sup> Օրինակ՝ «Երգ եւ աղերսանք առ ամենասրբուհի Կոյսն», «Երգ խրատական վասն խորշելոյ մեղաց», «Երգ պաղատանաց առ Յիսուս Քրիստոս» և այլն:

<sup>14</sup> «Եւ զի զայս փոքրիկ գործ մինչ վասն մանկանց փոքրկանց շարադրեցի... առադրիցեմ ի վերջն սորին նաեւ զայնս տաղս, զորս ի բազմաց ամաց հետէ եւ ըստ մեծի մասին ի տիս **պարանեկութեան իմոյ** շարադրեալ էի, եւ օրինակքն նոցին յայնմանէ ժամանակէ ի բազումս տեղիս տարածեցեալք եւս էին: Արդ, գիտեմ, զի ի միջոցի այսքանեաց բազմաց ամաց ի ձեռն անհմտից գրչաց զոչ սակաւ սխալանս պարունակեն նոքին, վասն որոյ նաեւ որքան առ այս ետու տպագրել զսոսին, զի այնպիսիք սխալանքն բառնիցին», «Տաղարան», Բան առ ընթերցողս, էջ 5:

<sup>15</sup> «Երգ եւ աղերսանք առ ամենասրբուհի Կոյսն, յօրինեալ ըստ կերպի վերայիշման բարերարութեանցն Աստուծոյ, ընդունեցելոց ի կացութեանն կենի յիւրաքանչիւրում հասակի» (սկ.՝ Չորից տարերաց բաղադրեցեալ, եղեալ մարմին մի..., էջ 7-14):

<sup>16</sup> 1702 թ. Մխիթարը փախչում է մոլեռանդ հալածիչներից դեպի Չմյուռնիա և նավաբեկության ենթարկվում. Վարք Մխիթարայ Աբբայի, էջ 161, 304:

<sup>17</sup> Կետադրությունը փոխել ենք: Այսուհետև քառատողերի վերջում կրկնակները չենք արտահայտի, փոխարենը կնշենք՝ (կրկնակ):

*Չորրորդ հասակս երիտասարդ՝ յոր այժմուս մըրդի,  
Հազար հարիւր յիսուն երկու էր թին Հայկազնի (իմա՝ 1703)  
Ո՞հ, մինչեւ ի հինգերորդ հասակս, որ ծեր անուանի,  
Տանն իմոյ լեր խարիսխ յուսոյ, ով Կոյս սրբուհի (էջ 9):*

Ինքնակենսագրական դրվագի և կենսական դժվարությունների արձագանքը պիտի համարել հետևյալ տողերը.

*Ական հադին թշնամիքն իմ իսկ գաղտագողի,  
էր երեքկին ճանապարհաւ փորեալ խորակի,  
ներքոյ փանն իմ դիմեալ հասին, հիմըն դըղըրդի (կրկնակ, էջ 11)<sup>18</sup>:*

Սա Մխիթարի ամենաձավալուն տաղերից է: Կարծում ենք՝ այն գրվել է կարևոր գործ նախաձեռնողի և այդ պատասխանատվությունը կրողի գիտակցությամբ, հավանաբար այդ պատճառով էլ 27-ամյա հասակը շրջադարձային է համարում. չէ՞ որ չնայած անասելի առողջական, հոգեկան, կենցաղային խնդրիներին, Մխիթարին հաջողվել էր իրականացնել իր երազանքը՝ հիմնել միաբանություն:

Մխիթարը տեղից տեղ է երթևեկում՝ փնտրելով Միաբանության հաստատման համար կատարյալ պայմաններ: Այդ որոնումների ժամանակ՝ 1697 և 1702 թթ. վտանգավոր նավաբեկությունների է ենթարկվում, որոնց նվիրված է երկու երգ: Ճակատագրի քմահաճույքին հանձնված, սակայն մեծ երազանքը սրտում պահած հավատացյալը դիմում է իր միակ ապավեններին՝ Քրիստոսին և Մարիամ Աստվածածնին:

Հասկանալի է, որ մեծի մասամբ բանաստեղծության ատաղձը ստեղծագործողի ապրած կյանքն ու հոգեկերտվածքն են, սակայն հաճախ կյանքի դրվագները ձուլվում են բանաստեղծական հյուս-

---

<sup>18</sup> 1700 թ. Պոլսում հիմնադրում է սուրբ Անտոն Աբբայի միաբանություն, սակայն հալածանքների պատճառով հեռանում է դեպի Մեթոն՝ թողնելով իր և աշակերտների ջանքերով տպագրած գրքերը. Վարք Մխիթարայ Աբբայի, էջ 139-144: Այս հալածանքների անմիջական ազդեցությամբ է հյուսված «Երգ գովասանաց առ սուրբ հայրն Անտոնիոս» (սկ.՝ Զքեզ, սուրբ հայր Անտոնիէ... նկարը՝ էջ 36, տաղը՝ էջ 37-40):

վածքին այնպես, որ դառնում են հոգեկան ապրումներ կամ այլաբանական պատկերներ՝ կորցնելով այդ ապրումների համար ազդակ հանդիսացած դեպքերի հետքը: Այնուամենայնիվ, Մխիթարի որոշ տաղեր թույլ են տալիս հետևել հեղինակի կյանքում տեղի ունեցած և իրեն ցնցած դեպքերին, որտեղ գեղարվեստական պատկերներն առկայծում են իրենց կուռ և տպավորիչ ազդեցությամբ:

Ինքնակենսագրական ատաղձ ունի «Երգ, որով եղեալ է դիմումն առ Քրիստոս ի նաւաբեկութեան» քերթվածը, որտեղ նկարագրվում է Մխիթարի համար ճակատագրական դարձած 1697 թ. փոթորիկը<sup>19</sup>:

<p><i>Ալեկոծեցաւ նաւն իմ հողմովըն չարին.          Ի մէջ ալեաց կայ յերերմանի,          պատեաց խաւար գիշերոյն,          լոյս ոչ տեսանի.          ազատեա՛ գիս Տէր իմ, Տէր,          մի թողոր գերի (էջ 42):</i></p>	<p><i>Հնչէր հողմն սաստկագին,          վարէր զամայն երկնի,          մառախուղ ամպոյն          ծածկեալ էր զերեսս երկրի,          եւ ես փոքրիկ նաւ          նստեալ կամ ի մէջ ծովի,          ազատեա՛ գիս Տէր իմ,          Տէր, մի թողոր գերի (էջ 42):</i></p>
---	--

Նավաբեկյալը հասկանում է, որ մնացել է միայնակ. բացվում է մարդկային հուսահատության, միայնության տխուր պատկերը.

*Հեռացաւ նաւահանգիստն, եւ ոչ տեսանի.  
 ճանապարհ մեր է խաւար, սիրտս ահաբեկի.  
 ոչ մնաց ինձ յոյս արդէն, թէ անձն իմ ապրի... (կրկնակ..., էջ 43):*

Ինքը՝ Սեբաստացին զուգահեռել է այս տաղը Մեսրոպ Մաշտոցի հայտնի շարականի հետ:

1702 թ. նավաբեկության ահասարսուռ պատկերն է ներկայացնում «Երգ առ նոյն սուրբ կոյսն Մարիամ առ որ եղել դիմումն ի

<sup>19</sup> Այս տաղի վերլուծությունը տե՛ս Երկհարիւրամեայ գրականական գործունեություն եւ նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, գրեց՝ **Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան** Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, 1905, էջ 225-226:

նաաբեկութեան ծովու» տաղը: Նախորդից տարբերվում է նրանով, որ այստեղ կիզակետը հոգեբանական լարվածությունն է. նավաբեկ-յալները չգիտեն, թե որտեղ են գտնվում, նավավարներն ընդհարվում են, կորցնում հույսը, «ի յողբ եւ ի լաց կան», մարդիկ մահվան են նա-խապատրաստվում<sup>20</sup>.

*Հալեցան սիրտք մեր, երբ տեսաք  
եւ առ ի մահ պատրաստեցաք,  
գորդեգրաց զողբըն յիշեցաք միայն.  
յոյս մեր սրբուհի Կոյս ի քեզ մնաց (էջ 75):*

Մարիամ Աստվածածնին է նվիրված 12 քերթված, որոնք զե-տեղված են «Տաղարանի» վերջում՝ որպես ամփոփում և մեծապես բնութագրում են ժողովածուի բարեխոսական թեման՝ դարձնելով այն նուրբ անձնականության և «մարեմականության հոգեկանության»<sup>21</sup> արտահայտություն, իսկ Մխիթարին՝ «Հայ առաքեալը Սուրբ Վարդարանին»<sup>22</sup>: Ուսումնասիրողների կարծիքով 17-րդ դարակազմում Հայաստանում, հատկապես Սեբաստիայում, Բրզանիկում տարածված են եղել Աստվածածնին նվիրված թափորներ, որոնց ընթացքում Վարդարան եւ Մարիամին նվիրված այլ աղոթքներ են ասվել<sup>23</sup>: Թե-րևս այս աղոթքները եղել են նաև տպավորվող Մանուկի ականջին

---

<sup>20</sup> Զանթա նավահանգիստ հասնում են նավաբեկության 17-րդ օրը:

<sup>21</sup> «Կաթողիկէ հայերս ունինք իւրահատուկ մարեմական աղօթքներ, երգեր, բարեպաշտութիւններ ու հաւատալիքներ, որոնք ոչ միայն մեզ իբր այսպի-սիներ յստակօրէն կը բնորոշեն ու դրականօրէն կը զատորոշեն մեր ազգա-կիցներէն, այլ նաեւ մեր մէջ կը սնուցանեն լուսաւորչաւանդ մարեմահաւատ սէրը» («Պատգամաբեր» տարեգիրք-2019, Գիւմրի, 2020. «Հ. Մեսրոպ Ծ. վարդապետ Թօփալեանի բանախօսութիւնը կաթողիկէ հայուն պատկանե-լիութեան ամենէն ցայտուն եւ գործօն ցուցանիշներէն մին՝ մարեմասիրութի-ւնը, մարեմականութիւնը», էջ 61):

<sup>22</sup> Մ. Հայունի, Նշվ. աշխ., էջ 17 եւ այլուր:

<sup>23</sup> Կազմեց՝ Տ. Յովսէփ քահանայ Գալստեան, Աստուածամօր սուրբ Վարդա-րանը. Տիրամօրը նուիրուած երգեր, էջ 4:

Կայք՝ <https://armenianchurchco.com/12098.html> (10.04.2026):

հասած մրմունջներ, որոնք էլ խթանել են երիտասարդ բանաստեղծի գրական փորձերը:

Մի նոր փորձություն է հասնում Մխիթարին Մեթոնում հաստատվելուց հետո (1701-1715 թթ.): Անողոք հարկը թույլ չի տալիս այստեղ շարունակել միաբանության գործունեությունը, և նա հրաժեշտ է տալիս տասնյակ տարիների իր նվաճումներին<sup>24</sup>: Մխիթարը սրտի գորովանքով և հուսահատի տրտմությամբ հյուսում է Մարիամ Աստվածածինն նվիրված հայ գրականության գեղեցիկ հյուսվածքներից մեկը՝ «Երգ գովասանաց եւ պաղատանաց առ ամենասուրբ Աստուածածինն» (սկ.՝ Աղաչեմ գքեզ Աստուածածին..., էջ 53): Բարեխոսական այս տաղը հյուսված է այբբենական կարգով, որի առաջին վեց տների վերջին տողերը կազմում են «Մխիթար» ծայրակապը<sup>25</sup>: Տաղն ունի «Տէր ողորմեայ, Տէր ողորմեայ, Աստուածածին բարեխօսեա՛կ» կրկնակը: Մխիթարը ներբողում է Կոյսին սրտի անկեղծ պոռթկումով, Արևելյան բանաստեղծություններին բնորոշ հարուստ պատկերներով. նա տաճարն է անեղ Բանին, արեգակի պես բարձր ու պայծառ, լուսածին մայր է.

<p><i>Կոյսըդ մաքուր եւ հրաշալի, դու գեղեցիկ, գեղ գովելի: Հոփով նըման ես դու վարդի, Շուշան հովկրաց, ծաղիկ դաշտի... (էջ 55):</i></p>	<p><i>Սափոր ոսկի զարմանալի, լցեալ ի քեզ մանանայ լի: Վեհ, քան զերկին գըփար յերկրի... (կրկնակ..., էջ 56):</i></p>
--	---

<sup>24</sup> Եւ ապա առեալ զամենեսին՝ եմուտ յեկեղեցին եւ ծունր եղեալ յաղօթս ընդ երկար յորդահոս արտասուօք յանձն արար զանձն եւ զհօտ իւր փոքրիկ ի խնամս ամենագութ փրկչին Յիսուսի եւ ի հզօր պաշտպանութիւն օրինաբանեալ մօր նորա՝ սուրբ Աստուածածին... եւ գորովալից խանդաղատանօք տուեալ մնացելոց ընդ հրաժարական ողջունի... մեկնեցաւ ի նոցանէ», Վարդ Մխիթարայ Աբբաօր, էջ 202:

<sup>25</sup> Այս տաղը հյուսվել է Ս. Ղազարում «Աստուածածին մայր Քրիստոսի» տաղի փոխարեն երգելու նպատակով և կատարվել է նաև նեղության պահերին. տես **Հ. Ղեւոնդ Վ. Տայեան**, Նշվ. աշխ., էջ 26:

Մխիթար Սեբաստացին երկու անգամ (1691, 1693 թթ.) ծանր հիվանդանում է՝ կանգնելով կուրանալու վտանգի առաջ: Այս ժամանակ են ծնվում Մարիամին ուղղված գործվագութիւն և սրտի քնքշանք ու նրբությունն արտահայտող տաղեր<sup>26</sup>՝ «Երգ առ նոյն Երանուհի Կոյսն՝ յօրինեալ բանիւք դրուատականօք եւ պէսպէս խնդրուածովք» (սկ.՝ Անճառին խորան..., էջ 57), «Երգ առ ամէնասրբուհի Կոյսն, յօրինեալ ըստ կերպի պէսպիսաց աղերսանաց եւ հայցուածոց» (սկ.՝ Երանելի մայր անարատ..., էջ 61): Բանաստեղծական գյուտ է անում Մխիթար Սեբաստացին՝ արտասովոր ցանկության մեջ իր ողջ հայցվածը խտացնելով աչքի մի հայացքի մեջ:

*Համառօտեմ զհայցուածն իմ արդ ի մի ակ,  
տուր միշտ գնալ ինձ ըստ կամաց Որդուդ սիրունակ,  
ով, լուսաբու ակ (էջ 62):*

«Անճառին խորան» սկսվածքով դրվատական տաղը 5 վանկանի համաչափ տողերով ստեղծում է ծորուն մեղեդի, ուր առկայծում է որդիական սիրով դեպի մայրը հակվածի հույսն ու սպասումը:

<i>Թագուհի վերին: Ժառանգ երկնային: Ի քեզ պաղապրիմ, Տալիթայ: Լոյս տուր իմ ակին (էջ 58):</i>	<i>Յաւեցաւ ակն իմ: Իւսմամբ մեղաց իմ: Փարաւրեա՛ գգան իմ, Մարիամ: Քաղցր Աստուածածին (էջ 58):</i>
--	--

Մխիթարի մարեմերգության պսակը «Ննջեա՛ որդեակ քաղցր եւ անուջ» սկսվածքով գործվագթական տաղն է<sup>27</sup>. այն կարող էր հյուսվել ցանկացած հայ մոր բերանում՝ սիրասուն զավակի քունը հանգիստ ու ապահով դարձնելու համար: Տաղի բովանդակությունն

<sup>26</sup> «Երբեմն եւս յորժամ առանձին լինէր՝ զերգս գովեստից ամենօրինեալ Աստուածամօրն ոտանաւոր չափով յօրինէր, զոր ոչ կարելով ինքն ընդ գրով արկանել՝ պահէր ի մտի, եւ յետոյ ի դէպ ժամանակի՝ յորժամ գրագէտ ոք առնըթեր լինէր, տուն առ տուն ասէր նմա, եւ տայր գրել», Վարք Մխիթարայ Աբբայի, էջ 71:

<sup>27</sup> «Երգ գործվագթական եւ դրուատական ի դիմաց սրբուհոյ կուսին Մարիամու՝ առ մանկացեալ աստուածորդին իւր», էջ 85-89:

արտացոլված է քերթվածին նախորդող տպագիր նկարի մեջ<sup>28</sup>: Տաղն ունի «...Աստուածորդոյս իմ օր, օր» կրկնակը:

Հայ ժողովրդական բանահյուսության ամենաքնքուշ երգերն օրորոցայիններն են. իր ակունքներով այս տաղն անկասկած կապված է ժողովրդական օրորների հետ և բացահայտում է մայրական խանդաղատանքի նուրբ դրվագներ<sup>29</sup>: Բ. Սարգիսյանը հնարավոր է համարում, որ այս օրորոցայինը Մխիթարը լսած լինի Սեբաստիայի մայրերից: Պարզ, խոր և բովանդակալից այս երգն արագորեն սիրվել և հայտնվել է ժողովրդի շուրթերին<sup>30</sup>: Չափազանցություն-նվազաբերություն զուգահեռներով մայր Աստվածածինը երգով դիմում է զավակ Քրիստոսին: Թվում է՝ ամբողջ աշխարհը մանկան հետ քուն է մտնում.

<p><i>Դու, որ ձեռամբ զաշխարհս ունիս, կայնուս զըստինս իմ եւ դիհս, օր օր: Աշխարհս բոլոր ի քում ձեռին, եւ դու բոլոր յիմում ձեռին, օր օր: Սուրբ Յոհաննէս, մանկիկ քաղցրիկ, շարժեա՛ զօրոցդ այդ հանդարտիկ, երգեա՛ դու օր օր օր օր, աստուածորդոյս իմ օր օր:</i></p>	<p><i>Մի՛ բարձրագոյ ձայնիւ երգեր, այլ քաղցր երգեա եւ հանդարտ լեր, Մինչ է ննջեալ, մի համբուրեր, մի ի քընոյ զարթուցաներ... (էջ 88-89):</i></p>
---	--

<sup>28</sup> Այստեղ երևում են Տիրամայրը՝ ցուցամատը շուրթերին մոտեցրած, մանուկ Հիսուսն օրորոցում, սերովբեներն ու քերովբեները վերևում երգում են մանուկի համար, իսկ Հովհաննեսն օրորում է: Նկարի տակ՝ «Աբրուիի Կոյսն յօրօրոցին, եղեալ օր[որ]է զԱստուածորդին», էջ 84:

<sup>29</sup> **Ա. Դոլուխանյան**, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 161-164:

<sup>30</sup> Գաբրել Պատկանյանը հիշում է. Ներսես Աշտարակեցին, տեսնելով, որ Սերովբե Պատկանյանի կինն իր Գաբրիել զավակի օրորոցայինը վրացերեն է երգում, սաստիկ բարկանում է՝ մեղադրելով Սերովբեին, որ թույլ է տալիս կնոջը վրացերեն երգել: Սերովբեն, որ Մխիթար Աբբահոր երգարանից այս օրորն անգիր գիտեր, այնքան է երգում, որ շուտով սովորում է նաև Ներսես Աշտարակեցին: Սակայն իմանալով, որ հեղինակը Մխիթարն է, պատվիրում է Սերովբեին հորինել նոր օրորոցային «նոր եւ այլ եղանակաւ»․ տե՛ս **Բ. Սարգիսեան**, Նշվ. աշխ., էջ 232-234:

Գորովագույթ մայրը սաստում է սրբերին՝ չաղմկել, համբույր-ներով չարթնացնել բալիկին.

*Յորժամ զարթնու, յայնժամ սիրես.  
զուրս եւ ըզձեռս իւր համբուրես...:*

### **Եզրակացություն**

1. Մխիթարի «Տաղարանը», հատկապես Մարիամին նվիրված երգերն աչքի են ընկնում հյուսվածքի նրբությամբ, պատկերավորությամբ և քնարականությամբ. «Երգ երգոցի» պատկերային համակարգի ճաշակավոր կիրառությամբ ստեղծված այս քերթվածները<sup>31</sup> լրացնում են Գրիգոր Նարեկացուց սկիզբ առած և միջնադարի սիրային քնարերգուների կողմից շարունակաբար հարստացվող մարեմերգության երգեցիկ փունջը՝ հավատացյալի հոգեկան իղծերի անկեղծ պոռթկումներով, հառաչանքի թրթիռներով:

2. Հանգավորման առանձնահատկություններով տաղերը հետևում են Ներսես Շնորհալու ավանդներին. Մխիթարը նախընտրում է -ի հանգով ձևավորված տաղերի երգեցիկ և թեթևասահ ընթաց-

---

<sup>31</sup> Մաշտոցյան Մատենադարանի հմր. 3263 գրչագիր «Տաղարանում» ընդօրինակված է Մխիթար Սեբաստացուն վերագրված մի տաղ՝ «Երգ երգոյն Սողոմոնի, շարադրեալ ի Մխիթարալ] Սեբաստաց[ւոյ վարդապետէ»

*Մենացեալ այրիմ սիրով, սէրն իմ փութով էջ ի բարձանց,  
Ջի գայր, կարի խանդաղապ եմ, լուր, էջ ի խնկաբեր լերանց,  
Շուշան հովարաց, ծաղիկ դաշտաց, եկ սիրելի իմ,  
Աղանի իմ գեղեցիկ, զի ծմեռն էանց..., էջ 71բ-72ա:*

Տե՛ս Մայր Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ժ., Ձեռագիրք 3001-3400, խմբ.՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Երեւան, 2019, էջ 1077: «Երգ երգոցի» ազդեցությամբ են հյուսված «Տաղ Սուրբ Երրորդութիւնն, ըստ կերպի աղերսանաց հանդերձ ըղծիւ ճանաչելոյ եւ սիրելոյ զնա» (սկ.՝ Անճառ, անհաս ստեղծող..., էջ 3), «Երգ գովասանական առ ամենասրբուի կոյսն Մարիամ» (սկ.՝ Երանուի Մարիամ, կոյս դըրուատելի..., էջ 67), «Երգ գովասանաց առ ամենասրբուի կոյսն Մարիամ» (սկ.՝ Զարմանալի վերնոց սուրբ Կոյս աննըման..., էջ 69) տաղերը:

քը<sup>32</sup>: Թերևս սրանով էր պայմանավորված այն, որ Մխիթարի տաղերը շատ էին երգվում և արագ տարածվում էին բերնից բերան: Մխիթարի ոճը պարզ է, սակայն հոգուն հասնող:

3. Քերթվածների երաժշտականությունը պայմանավորված է նաև կրկնակներով, որոնց մեջ առանձին գլխաբառերը տաղերն ընկալելու բանալի են<sup>33</sup>:

4. «Տաղարանում» դաստիարակ և խրատատու Մխիթարը պատգամներ է հղում ընթերցող մանուկներին և մեծահասակներին. քրիստոնեական պատվիրաններից բխած խորհուրդներ տալիս՝ լինել գիտակից, խոնարհությամբ կրթել անձը, լինել արդար, խարդախությունից հեռու մնալ, ձգտել հոգևոր կատարելության. չէ՞ որ Մխիթարի միակ նպատակն էր բարիք պարգևել մանուկներին, կրթել հայ ազգը և բարեկամացնել ամենքին Աստծո հետ:

Շատ է գրվել Մխիթար Աբբահոր մասին, բազմակողմանիորեն վերլուծվել են մշակույթի վերանորոգման նրա ծրագրի ամենատարբեր մասերը<sup>34</sup>, սակայն իր հյուսած երգերո՞ւմ են անկեղծորեն արտահայտվում խիզախող գիտնականի և հայրենասեր մարդու հոգու նրբին եւ «մանկունակ» երանգները:

---

<sup>32</sup> Մխիթար Սեբաստացին անգիր գիտեր Ներսես Ծնորհալու «Յիսուս Որդի» երկը:

<sup>33</sup> Այսպես՝ նավաբեկության դրվագի գեղարվեստական խտացումը տաղի՝ «Լե՛ր խարիսխ յուսոյ, ո՛վ Կոյս սրբուհի» կրկնակի մեջ կիրառված «խարիսխ» բառն է (էջ 10-14), կամ կուրության շրջանում հյուսված երգերից մեկի «Լո՛յս տուր իմ **ակին**» (էջ 58) կրկնակում՝ «ակն» բառի կիրառությունը, թշնամիների ամբաստանությունից խույս տալուց հետո «Երգ գովասանաց առ սուրբ հայրն Անտոնիոս» տաղի մեջ՝ «Պահեա՛ զմեզ, սուրբ Անտոնիէ ի թշնամեաց պատերազմէ» (էջ 37) և այլն:

<sup>34</sup> Մատենագիտությունը տե՛ս **Գ. Տէր-Վարդանեան**, Մխիթար Աբբահայր Սեբաստացու երկերը եւ իր ժամանակի հայ գրական մշակույթը, «Բազմավէպ», Վենետիկ, 2002, թ. 1-4, էջ 378-381:



## ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Արույանի անվան ՀՊՄՀ  
հայ հին և միջնադարյան  
գրականության և նրա դասավանդման  
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,  
Մանկավարժական գիտությունների  
թեկնածու*

### **ՄԻՒԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ**

*Իմ ժառանգությունը, որպես  
պատվիրաններ, ոսկուց էլ թանկ է.  
ոսկին գողը կտանի, պատվիրանները՝ ոչ:  
Խրիմյան Հայրիկ*

#### **Ներածություն**

Հայ դպրոցի հիմքերը գալիս են վաղնջական ժամանակներից: Այդպես ասելու կռվանները վերցնում ենք օտարազգի հայագետների վկայություններից: Միլանի համալսարանի սանսկրիտի և էտրուսկերենի ճանաչված պրոֆեսոր Ռադիվոյե Պեշիչը կազմել է ժամանակագրություն, թե որ ժողովուրդները, որ դարերում են ունեցել տառեր: Ըստ նրա՝ հայերը գիր ունեցել են մ.թ.ա. 1400 թ.<sup>1</sup>:

301 թվականից հետո, երբ ողջ Մեծ Հայքում քրիստոնեությունը դարձավ պետական կրոն, վերացվեցին մեհենական դպրոցները, հեթանոսական գաղափարախոսությամբ ստեղծված մեհենական

---

<sup>1</sup> Ա. Դոլուխանյան, Ինչպես դառնալ բացառիկ մանկավարժ, Երևան, 2025, էջ 12:

մատյանները, ու դրա փոխարեն բացվեցին օտարալեզու՝ հունարեն, ասորերեն դպրոցներ: Այդ գործընթացը տևեց շուրջ մեկ դար. մինչև Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, որից հետո ձևավորվեց հայ քրիստոնեական դպրոցը: Ըստ որում, Մաշտոցի և Սահակ Պարթևի ջանքերով բացվեցին ազգային դպրոցներ ողջ Հայաստանում, նաև Հայաստանի բյուզանդական մասում<sup>2</sup>:

Հինգերորդ դարը հայ ժողովրդի պատմության մեջ կոչվել է Ոսկեդար: Բազմաթիվ մեծարժեք փաստեր կան հայ միջնադարյան դպրոցների ու համալսարանների մասին: Հատկապես նշանավոր են եղել Նարեկա դպրոցը (X դար), Գրիգոր Մագիստրոսի հիմնած Տարոնի դպրոցը (XI դար), Կիլիկայում գործող Ներսես Շնորհալու դպրոցը (XII դար), Բարսեղ Գավառացու հիմնած Ամբղոլու դպրոցը (XII դար), Սյունյաց Մեծ անապատը (XII դար) և այլն: Գրքեր են գրվել Գլաձորի ու Տաթևի համալսարանների մասին, որոնց գլխավորներն են եղել Եսայի Նշեցին, Հովհան Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին:

Հայ կրթական համակարգին միջազգային փառք են բերել երկու նշանավոր դպրոցներ, որոնք հայալեզու էին, սակայն գործել են արտասահմանում: Դրանք են Լազարյան ճեմարանը՝ Մոսկվայում և Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը՝ Վենետիկում:

### ***Մխիթարյան միաբանությունը՝ լուսավորության կենտրոն***

Մխիթար Սեբաստացու կյանքը քրիստոնեության պատգամների, լուսավորությանը, իր ազգին անմնացորդ նվիրված, հիացմունքի արժանի հայորդու խիզախում է:

Արդեն շատ երիտասարդ հասակից Մխիթար Սեբաստացին իր շուրջն էր հավաքում ուսումնատենչ պատանիներ ու եռանդով սովորեցնում էր: Վենետիկում հաստատվելուց և Սուրբ Ղազար կղզում իր միաբանությունը վերջնականապես ցանկալի ընթացքի մեջ դնելուց հետո, նա առավել մեծ եռանդով է զբաղվում մանկավարժությամբ ու պատրաստում է իր լուսավորչական գործի փոխա-

---

<sup>2</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 55:

րինողներ: Հենց այդ փոխարինողներն էլ հետագայում դպրոցական գործը տարածում են աշխարհի բոլոր այն մասերում, որտեղ ապրում էին հայեր: Մխիթարյանների անունը հայտնի է դառնում հայկական տարբեր շրջաններում:

Ականավոր արքայանագետ Պիոն Հակոբյանը ներկայացնում է, թե ովքեր են եղել հանճարեղ Խաչատուր Աբովյանի ազգին նվիրվելու մեծ փափագի ուսուցիչները. «Ահա՛ թե ինչու, աչքի առաջ ունենալով, նաև ոգևորվելով նախորդ դարերի հայրենասնվեր գործիչների՝ Մխիթար Սեբաստացու, Սիմեոն Երևանցու, Ղուկաս Վանանդեցու և ուրիշների անձով ու գործերով, նա վճռում է՝ ինչ գնով էլ լինի, ուղևորվել Եվրոպա կամ Ռուսաստան, նախ՝ կրթվելու, իսկ ապա, որ պակաս կարևոր չէր, քրիստոնյա միապետներից Հայաստանի ազատության համար աջակցություն խնդրելու»<sup>3</sup>:

Մխիթար Սեբաստացու լուսավորչական գործունեության վերաբերյալ իր հիացմունքն է արտահայտել աշխարհաբար լեզվի մեծ ջատագով Ստեփանոս Նազարյանցը: Նրա կարծիքով ոչ մեկը հայ ժողովրդի նոր պատմության մեջ այնպիսի անվիճելի իրավունք, հարգանքի ու երախտագիտության ազգի կողմից չի արժանացել, քան Մխիթարը՝ գիտական միաբանության հիմնադիրը, որը պակաս հայտնի չէ Եվրոպայում, քան Հայաստանի արևելքում<sup>4</sup>:

Ինչպես երևում է, Ստեփանոս Նազարյանցը քաջատեղյակ էր բոլոր այն տառապանքներին, որոնցով անցել է Մխիթարն իր միաբանությունը կատարյալ դարձնելուց առաջ: Մխիթարը չի վախեցել դժվարություններից. նա պատկանում էր ներքին համոզմունք ունցող այն հերոսների թվին, որոնց ոգու արիությունն ավելանում է դիմադրության ժամանակ<sup>5</sup>: Զարմանալի է, որ իր ձգտումների մասին

---

<sup>3</sup> Վերք Հայաստանի: Ողբ հայրենասիրի: Պատմական վէպ բաժանեալ յերիս մասունս, Երևան, 2004, էջ 20:

<sup>4</sup> Ст. Назарянц, Собрание сочинений, Ереван, 1996, с.56.

<sup>5</sup> Նույն տեղում:

Մխիթարը հայտնել է ժամանակի նշանավոր գիտնականներին, սակայն նրանցից ոչ մեկը չի օգնել նրան:

Չնայած Մխիթարն իր միաբանությունը թեքեց դեպի կաթոլիկություն, սակայն նա մնաց խորապես ազգային մտածող, և հայերը մշտապես երախտագետ պետք է լինեն նրա սուրբ հիշատակին, ինչպես բողոքական Գերմանիան իր Վինկելմանի և Շլեգելի առաջ<sup>6</sup>:

Մխիթարյան միաբանության մասին հիացնունքով է խոսել նաև Վալերի Բրյուսովն իր «Поэзия Армении» ժողովածուի ընդարձակ առաջաբանում:

Հայ գրականության վերածնունդը նա սերտորեն կապում է Մխիթարյան միաբանության հետ, որը հիմնել է Մխիթար Սեբաստացին: Այդ միաբանության ծոցից դուրս են եկել գիտնականներ, գործիչներ և, ընդհանրապես, լուսավորության գործիչներ:<sup>7</sup>

Մխիթարյանները հրատարակել են բառարաններ, հայոց լեզվի քերականություն, աշխատություններ հայոց պատմության, թարգմանել են եվրոպական դասականներին հայերենով և այլ գործեր, որոնք հզոր ազդեցություն են ունեցել<sup>8</sup>:

Ստեփանոս Պալասանյանն իր «Պատմութիւն Հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը» դասագրքում ուշագրավ դիտարկումներ ունի Մխիթարյանների կրթական համակարգի վերաբերյալ:

Նա շատ բարձր է գնահատում Հնդկաստանի հարուստ հայերի նպաստը Մխիթարյան վարժարաններին: Սամվել Մուրադյանը Մադրասի հարուստ վաճառական էր: Նա մի մեծ գումար է կտակում Մխիթարյաններին, որի տոկոսներով գիշերօթիկ դպրոց է բացվում հայ որբ ու աղքատ երեխաների համար: Սկզբում վարժարանը բացվում է Իտալիայի Պադովա քաղաքում, ապա տեղափոխվում է Փարիզ: Ռաֆայելի կտակով մեծ գումար է տրվել Մխիթարյան վարժա-

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 57:

<sup>7</sup> Поэзия Армении, Ереван, 1987, с.65-66.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 66:

րանին. այդ գումարով է գործում Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը<sup>9</sup>:

Մխիթարյանների մասին հանգամանալի հետազոտություն ունի պատմաբան Լեոն: Հայտնի է, որ Մխիթար Սեբաստացին վայելում էր Հռոմի պապի հովանավորությունը: Նույնքան հայտնի է, որ երկար դարեր հայ եկեղեցին պայքար էր մղում հունական և Հռոմի եկեղեցիների ձեռնարկած միարարական (ունիթորական) շարժման դեմ: Այդ գործում շատ մեծ ու ազգային շահերից ելնող գործունեություն են ծավալել Ներսես Շնորհալին, Խաչատուր Կեչառեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշ շատ նվիրյալներ:

Ստացվում էր, որ Մխիթարը կաթոլիկ դառնալով՝ դավաճանեց իր ազգային եկեղեցուն, բայց իր ճկուն դիվանագիտությամբ Մխիթարը կարողացավ լուծել անլուծելի թվացող խնդիրը. «Նրա հիմնադրի մեծությունը ամենից շատ այս հանգամանքի մեջ է. նա հասկացավ և գործադրեց այն ճշմարտությունը, թե կարելի է Հռոմինը Հռոմին տալ, ազգինը՝ ազգին»<sup>10</sup>:

Լեոյի կարծիքով իր առաջընթացով Մխիթարյան միաբանությունը հաղթահարեց ամբողջ ազգին, հպատակացրեց իր հեղինակությանը, դարձավ մտքերի տերն ու հրամանատարը:<sup>11</sup>

Լուսավորչական առաջընթացը Եվրոպայում պատկերացնելու համար Լեոն անդրադառնում է XVIII դարի նշանավոր ֆրանսիացի լուսավորիչ Մոնտեսքիոյի «Պարսկական նամակներ» վեպին: Այս վեպում երկու պարսիկներ՝ մեկը Փարիզից, մյուսը Պարսկաստանից, ծաղրի էին ենթարկում Ֆրանսիայի հասարակական, պետական կարգերը, պապականությունը, վանքերը: Իսկ դպրոցները գործում էին վանքերին կից. «Մոնտեսքիոն հռոմեացիների օրինակով դաս էր տալիս իր հայրենակիցներին, սովորեցնում էր, թե ինչ է ճշմարիտ

---

<sup>9</sup> Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 668-669:

<sup>10</sup> Լեո, Երկերի ժողովածու, հտ. V, Երևան, 1986, էջ 362:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 363:

հայրենասիրությունը, թե ինչպես է մի ազգ բարձրանում, երբ ազատ է, և ընկնում է, երբ բարբարոս բռնակալությունն է տիրում»<sup>12</sup>:

Մեզ ծանոթ է, որ Մխիթար Սեբաստացու անունը մտել է աշխարհի մի շարք հանրագիտարանների մեջ, այդ թվում նաև ռուսալեզու: «Большая советская энциклопедия» հանրագիտարանի XVIII հատորում Մխիթարյանների մասին գրված հոդվածը հարմարեցված է խորհրդային գաղափարախոսությանը. «Մխիթարյանների գործունեությունը հիմնականում ծառայելը Վատիկանի ազդեցությանը Մերձավոր Արևելքում, մեծ վնաս է հասցրել արտասահմանի հայերի սոցիալական և ազգային-ազատագրական պայքարին»<sup>13</sup>:

Սա միանգամայն սխալ մեկնաբանություն է, որովհետև Մխիթարյան դպրոցն ավարտած շատ հայ գրողներ ու մտավորականներ եղել են ազգային-ազատագրական պայքարի ջատագովներ: Բավական է հիշել Մկրտիչ Պեշիկթաշյանին ու Դանիել Վարուժանին, որոնք եղել են Մխիթարյանների սաները:

Մկրտիչ Պեշիկթաշյանի «Զեյթունի երգեր» բանաստեղծական շարքը ազգային-ազատագրական պայքարի բացահայտ կոչ է: «Մահ քաջորդւոյն» բանաստեղծությունն ունի հետևյալ ազդու մարտակոչը.

*Դու գո՞վ խնդրես, մա՛յր իմ անոյշ.*

*Ե՛կ, մի դողար, մօտեցի՛ր հոս,*

*Անլաց աջօք դիպե՛՛ գորդիդ*

*Ու իւր վերքերն արինահոս:*

*Թրքաց մայրեր թող լան, ու դուն*

*Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն՝<sup>14</sup>:*

Դանիել Վարուժանի «Զոն» բանաստեղծությունը, որը սեղմ տողերի մեջ Հայաստանի՝ հինավուրց քաղաքակիրթ հայրենիքի ան-

---

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 374:

<sup>13</sup> Большая советская энциклопедия, т. 17, Москва, 1974, с.150.

<sup>14</sup> Մ.Պեշիկթաշյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1987, էջ 44:

ցած դժվարին ճանապարհին է պատկերում, իր վերջին տան մեջ հայերին կանչում է ազգային-ազատագրական պայքարի.

*Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.*

*-Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ –*

*Գրիչըս եղավ անթրոց սըրտերու հընոցի...*

*-Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ-*

*Եղեզնյա գըրչով վըրեժ երգեցի.*

*Ընդ եղեգան փող բոց ելաներ<sup>15</sup>:*

Ֆրանսիացի նշանավոր հայագետ, Մխիթարյան ակադեմիայի անդամ Վիկտոր Լանգլուան աշխատություն ունի՝ նվիրված Մխիթարյան միաբանությանը, որը լույս է տեսել 1869 թ.: Նա հիացմունքով է խոսում Ս. Ղազար կղզում հաստատված դպրոցական կանոնադրության մասին: Բացատրում է, թե դպրոցական դասընթացները բաժանված են երեք խմբերի միջև՝

Առաջին բաժնում (մինչև 17 տարեկան) անցնում են հումանիտար առարկաներ, եվրոպական լեզուներ, մաթեմատիկա, պատմություն, կրոն:

Երկրորդ բաժինը նրանց համար է, որոնք ուզում են դառնալ հոգևորական: Նրանք սովորում են լատիներեն, ճշգրիտ գիտություններ, հռետորաբանություն:

Երրորդ բաժինն ավարտելու ժամանակ կա խիստ քննություն, որից հետո ավարտողները ստանում են հայր կոչվելու իրավունք<sup>16</sup>:

Տարբեր առիթներով շեշտվում է, որ Մխիթարյան միաբանության անդամները պարտադիր ձևով յուրացնում էին եվրոպական լուսավորիչների, հանրագիտակ մտածողների ու փիլիսոփաների երկասիրությունները: Նրանք գիտեին Մոնտեսքիոյի, Դիդրոյի, Վոլտերի,

---

<sup>15</sup> Դ. Վարուժան, Երկերի ժողովածու, կազմ.՝ Վ. Գաբրիելյան, Երևան, 2004, էջ 36:

<sup>16</sup> V. Langlois; Notice sur le couvent Arménien de l'île S. Lazare de Venise, Venise, 1869, p. 30.

Ժան-Ժակ Ռուսոյի հիմնական գործերը, որոնց շնորհիվ հարստանում էին Մխիթարյան միաբանության անդամների գիտելիքները: Նրանք կարդում էին Կանտ, Ֆիխտե, Շելլինգ, Հեգել, թեպետ այդ փիլիսոփաներն ունեին հակոտնյա գաղափարներ<sup>17</sup>:

«Բազմավէպ» հանդեսի 1936 թ. թողարկումը նվիրված է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանների հարյուրամյա հոբելյանին (1836-1936)<sup>18</sup>: Նրանում ասվում է, թե հայերն իրենց դարավոր պատմության ընթացքում շատ բարերարներ են ունեցել, սակայն նրանցից երկուսը՝ Էդվարդ Ռաֆայել Ղարամյանը և Սամվել Մկրտիչ Մուրադյանն արժանի են հավերժ հիշատակի: Նրանց թողած կտակների շնորհիվ են գործել գրեթե բոլոր Մխիթարյան վարժարանները: Այդ կտակները կապեր են ստեղծել հայ մտավորականների միջև:

Էդվարդ Ռաֆայելը նոր-ջուղայեցի էր և աղայական տոհմի շառավիղ: Նրա հարուստ հայրը մահանում է 1745 թ. մայրը զավակների հետ տեղափոխվում է Հնդկաստան՝ իր հոր մոտ: Էդվարդը հաճախում էր Հնդկաստանի ֆրանսիական դպրոցը, որը դադարում է գործել ֆրանս-անգլիական պատերազմի պատճառով: Մայրը նրան ուղարկում է ավելի հեռվում գտնվող մեկ այլ դպրոց, սակայն ճանապարհին գողերը տղային կողոպտում են, սաստիկ ծեծում, կոտրում ձեռքը: Կարծելով, թե նա մեռած է՝ թողնում են, հեռանում: Ձկնորսները տղային գտնում են, տանում, հանձնում են մորը: Էդվարդի ընտանիքն այդ դեպքից հետո կորցնում է ամեն ինչ ու տեղափոխվում

---

<sup>17</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1950, թ. 1-2, էջ 31:

<sup>18</sup> «Բազմավէպ» հանդեսի տարբեր համարներում տպագրված մանկավարժական, բարոյախոսական հոդվածներին անդրադարձ ենք կատարել մեր տպագրած երեք գրքերում. Ռ. Դոլուխանյան, Մխիթարյանների մանկավարժական և բարոյախոսական դասերը «Բազմավէպ»-ում (1843-1863 թթ.), Երևան, Լուսակն, 2015; Ռ. Դոլուխանյան, Մանկավարժական, բարոյախոսական և հայրենասիրական դասերը «Բազմավէպ»-ում (1866-1885 թթ.), գիրք II, Երևան, Լուսակն, 2017; Ռ. Դոլուխանյան, Մանկավարժական և բարոյախոսական դասերը «Բազմավէպ»-ում, (1896-1906 թթ.), մաս Գ., Երևան, Լուսակն, 2020:

Մադրաս: Էդվարդը 1784 թ. սկսում է առևտրական գործունեություն ծավալել Չինաստանի, Մանիլայի ու այլ երկրների հետ: Նա ամուսնանում է հայուհի Մարիամի հետ, ունենում երեք որդի և երկու աղջիկ: Եղել է շատ հոգատար ու ջերմ հայր և նվիրյալ ազգասեր<sup>19</sup>:

Էդվարդի կրթությունը կրում էր անգլոսաքսոնական ազդեցությունը, և նա որոշում է կրթության միջոցով հայերին դարձնել հպարտ, հայրենասեր, ազատ, ձերբազատված ասիական խավարից ու տգիտությունից<sup>20</sup>: Նա համոզված էր, թե Հայաստանը վերջապես կազատագրվի իր անվերջ տառապանքներից գիտության ու կրթության միջոցով: Մանուկ հասակից Էդվարդ Ռաֆայելը ծանոթ էր հռոմեական գրականությանը և երազում էր հռոմեացի գրողների երկերը տեսնել հայերեն թարգմանված:

1789 թ. կտակ է կազմում ու 65.000 ֆրանսիական ֆրանկ նվիրում է Մխիթարյան միաբանությանը, որպեսզի հայերեն թարգմանեն Ռոլենի պատմությունը և հնախոսության հատորները: Բացի այդ, դրամատան տոկոսների միջոցով բացվի դպրատուն աղքատ հայ երեխաների համար: Ս. Ղազար վանքի միաբաններն անմիջապես թարգմանում են Հռոմի պատմությունը (1815 թ.), իսկ հնախոսությունները լույս են տեսնում 1825 թ.<sup>21</sup>: Դրանք կազմում են 12 հատոր:

Դպրատուն բացելու գործում կարևոր դեր է խաղում Սամվել Մուրադյանը: Նա ծնվել էր Փոքր Ասիայի Եվրոկիա քաղաքում: Նրա հայրը երկու որդիների հետ 1775 թ. չորս ամիս ապրել է Ս. Ղազար կղզու միաբանների հետ՝ արժանանալով միաբանների ջերմ ընդունելությանը: Այդ ջերմությունը հիշելով՝ Սամվել Մուրադյանը հետագայում դառնում է Մխիթարյան դպրոցի հովանավորը: Նա էլ համոզված էր, թե հայ երեխաները պետք է ընթերցեն պատմական գրքեր,

---

<sup>19</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1936, էջ 170:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>21</sup> Նույն տեղում:

որոնք կներկայացնեն ազգային դյուցազուններին, կարթնացնեն թմրած, ստրկության վարժված հայերին<sup>22</sup>:

1846 թ. Փարիզում սկսում է գործել Սամվել Մուրադյան վարժարանը<sup>23</sup>: Այն այնքան մեծ հեղինակություն է վայելում ֆրանսիացիների շրջանում, որ նրանցից շատերը ցանկություն են հայտնում, որ իրենց երեխաները նույնպես սովորեն հայկական վարժարանում:

1859 թ. Ղևոնդ Ալիշանը Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանի տեսուչն էր: Վարժարանը, որն արդեն 33 տարեկան էր, նրա տեսչության օրոք պարզևատրվում է մրցանակով: Ալիշանը հանդես է գալիս հայ ժողովրդի պատմությունն ու գրականությունը փաստերով ներկայացնող ուշագրավ ճառով, որը 1883 թ. լույս է տեսնում Ս. Ղազար կղզում: 49 էջից բաղկացած այդ ճառում ասվում է, թե Հայկի գավակները պատմության դաժան ընթացքի հետևանքով դարձել են ամենատարածվածն աշխարհում: Սակայն աշխարհի որ անկյունում էլ նրանք հայտնվեն, թողնում են իրենց հիշատակն ու հուշարձանները<sup>24</sup>: Ալիշանը նշում է, որ Հիսուս Քրիստոսի ծնունդից II դարի միջին մասում հայերի պատմությունն ավելի ու ավելի է պայծառանում. հայ ժողովուրդը համաշխարհային պատմության մեջ ստանձնում է նշանակալի դեր<sup>25</sup>: Անցնելով հայ ժողովրդի պատմության դարերով՝ Ալիշանը հասնում է Ս. Ղազար կղզի՝ Մխիթարյան միաբանության հաստատման պատմությանը: Նա Լյուդովիկոս XIV-ի գահակալության ժամանակները համարում է առաջադիմության ժամանակահատված<sup>26</sup>: Նա չի մոռանում երախտագիտության խոսքեր ուղղել Էդվարդ Ռաֆայելի և Սամվել Մուրադի հասցեին, որոնց ֆի-

---

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>24</sup> P.L.M. Alishan, Tableau succinct de l'histoire et de la litterature Arme'nienne, Venise, 1883, p. 6.

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>26</sup> Ես 2025 թ. ամռանը Փարիզի շքեղ ճարտարապետության մեջ տեսա Լյուդովիկոս XIX-ի առաջադիմությունը - Ռ.Դ.:

նանսական օգնությամբ գործում են Մխիթարյանների վարժարանները:

«Բազմավէպի» 1936 թ. հատորում թվարկվում են հայաբնակ այն վայրերը, որոնցում գործում են Մխիթարյան վարժարանները՝

ա. Նախակրթարան Տրանսիլվանիայում,

բ. Նախակրթարաններ Պոլսում,

գ. Բարձրագույն նախակրթարան Հունգարիայում,

դ. Վարժարաններ Կ.Պոլսի Բերա և Ղալաթիա հատվածներում,

ե. Վարժարան Տրապիզոնում,

զ. Վարժարան Ռուսաստանի Սիմֆերոպոլ քաղաքում,

է. Մխիթարյան դպրոցներ Մուշում և շրջակա գյուղերում,

ը. Վարժարան Խարբերդում,

թ. Վարժարան Մերտինում<sup>27</sup>:

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանները ամենից առաջ խնամքով և խիստ պահանջով դասեր են անցել, որոնց նպատակն էր հայրենիքի խորը ճանաչումը, սերն առ հայրենիք և ազգային ինքնությունը չկորցնելու գիտակցությունը<sup>28</sup>:

Հետաքրքիր փաստ՝ իտալերեն և ֆրանսերեն լեզուներն ու այդ ազգերի գրականությունը ուսուցանել են այդ ազգի ներկայացուցիչները: Նույնը եղել է նաև անգլերենի ու գերմաներենի դեպքում:

Մխիթարյան միաբանները, գրաբարից բացի, իրենց սաներին ուսուցանում էին աշխարհաբարը: Մեծ տեղ էր տրված գիտական բնագիտությանը, տոմարագիտությանը, քաղաքական տնտեսագիտությանը, գծագրությանը, երգ-երաժշտությանը և այլն: Մխիթարյան դպրոցների աշակերտները ստացել են նաև մարզական կրթություն:

«Բազմավէպի» այդ համարում արժեքավոր հոդվածներ կան՝ նվիրված Մխիթարյան դաստիարակություն ստացած նշանավոր հա-

<sup>27</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1936, էջ 197:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 299:

յերին: Նրանցից մեկն է աշխարհահռչակ դերասան Պետրոս Ադամ-յանը, որին ռուսական մամուլը Շեքսպիրի դերում համարեց առավել գերազանց, քան Սալվենին ու Ռուսին<sup>29</sup>: Հոդված կա՝ նվիրված Էդգար Շահինին և նրա զմայլելի նկարներին: Առանձին հոդվածով Արշակ Չոպանյանը հիացմունքով ներկայացնում է Մկրտիչ Պեշկոպաշվյանին, որի «Եղբայրք եմք մեք»-ը համարում է հայերի «Մարսելեզը»<sup>30</sup>:

*-Ընդ աստեղօք ի՞նչ կա սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:*

Հիանալի հոդված է նվիրված արևմտահայ նշանավոր գրող Արփիար Արփիարյանին<sup>31</sup>:

Շեշտվում է, որ Վենետիկն է հասունացրել Դանիել Վարուժանին, որը Վարդգես Ահարոնյանին ուղղված նամակում նշում է, թե Վենետիկը զգում է ամբողջովին. այն ազդել է իր վրա գույների, ստվերների և լույսերի հարափոփոխ գանձերով: Քաղաք է, ուր առանց պատկերի մտածել կարելի չէ<sup>32</sup>:

Հարություն վրդ. Պզտիկյանն իր գրքում նշում է, թե համաշխարհային գրականության ինչ գլուխգործոցներ են Մխիթարյանների շնորհիվ թարգմանվել հայերեն ու հասանելի դարձել ընթերցողներին՝ «Ողիսական» (Հոմերոս), «Էնեական» (Վիրգիլիոս), «Սիդի երգը», «Ռիլանդի երգը», «Աստվածային կատակերգություն» (Դանթե), «Ազատագրված Երուսաղեմ» (Տորկվատո Տասսո), «Էդիպ արքա» (Սոֆոկլես), «Անձի դաստիարակություն» (Բլեք Ջոն Ստյուարտ) և բազում ուրիշ գրքեր<sup>33</sup>:

---

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 265:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 297-300:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 309:

<sup>33</sup> Հարություն վրդ. Պզտիկյան, Մխիթարի և Մխիթարյանների նպաստը հայ մշակույթին, Երևան, 2003, էջ 67-69:

### ***Եզրակացություն***

Մխիթար Սեբաստացին մեծ մանկավարժ էր: Դա է ապացուցում նրա տառապանքներով լի կյանքի ընթացքը: Նա անձաձիր ուսուցանել և սեփական օրինակով դաստիարակել է իր սաներին: Իսկական մանկավարժին հատուկ մղումով նա շարունակ հարստացրել է իր գիտելիքները: Խստապահանջությունը և նվիրումը եղել են նրա մանկավարժական հայացքների առանցքը:

Մեծ նպատակները պահանջում են անմնացորդ նվիրում, որն անպայման պսակվում է ցանկալի արդյունքներով: Դա ապացուցեց Մխիթար Սեբաստացին:

Մխիթարյան միաբանության կրթական համակարգը XVIII, XIX և XX դարերում համընթաց է քայլել ժամանակի առաջադեմ ազգերի մանկավարժության հետ: Մխիթարյանների դպրոցը հայ կրթական համակարգի փայլուն ձեռքբերումներից է:



## **ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ**

*Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ  
հայ հին և միջնադարյան գրականության  
և նրա դասավանդման մեթոդիկայի  
ամբիոնի դոցենտ,  
Մանկավարժական գիտությունների  
թեկնածու*

## **ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳՆՈՒԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

*Հայերի մեջ Մխիթարյանները  
Եվրոպացու լավագույն մտքերը մտցրին:  
Արշակ Չոպանյան*

### **Ներածություն**

Վենետիկի Սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան միաբանության մասին էլ մեր օրերում գրվում են ուշագրավ մենագրություններ թե՛ հայերի և թե՛ օտարների կողմից: Մխիթարյան միաբանությունը կամուրջ է եղել տարբեր ազգերի՝ հատկապես Եվրոպայի ժողովուրդների ու հայերի միջև: Սա մշակութային այն փոխազդեցությունն էր, որի շնորհիվ Եվրոպայում զարգացավ հայագիտությունը, որի փայլուն օրինակն է ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենի ողջ հայագիտական ժառանգությունը:

Տորոնտոյում գործող հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի աշխատակից Էդիկ Բաղդասարյանը Սեն-Մարտենի մասին բոլորովին վերջերս գրել է. «Ժան Սեն-Մարտենը գուցե լայն հանրությանը հայտնի անուն չէ, բայց իր գործն ապրում է յուրաքանչյուր հայագետի աշխատանքում: Նա առաջինն էր, որ ասաց Եվրոպային. «Նայեցե՛ք դեպի Հայաստան, այնտեղ կա պատմություն, գե-

ղեցկություն և իմաստ»<sup>1</sup>: Փաստորեն ֆրանսիացի բոլոր հայագետները՝ Վիկտոր Լանգլուա, Մարի Ֆելիսիտե Բրոսսե, Էդվարդ Դյուլորիե, Ֆրեդերիկ Մակլեր, Ֆրեդերիկ Ֆեյդի, Ժան-Պիեռ Մահե, սերում են Սեն-Մարտենի հիմնադրած հայագիտական ակունքներից:

Վիկտոր Լանգլուան, ցավոք, կարճ կյանք ունեցավ (1829-1869 թթ.) և չկարողացավ իրականացնել հայ պատմիչների ժողովածուի հինգ հատորների հրատարակումը: Լույս տեսան միայն երկուսը, երկրորդը՝ հետմահու<sup>2</sup>:

Դրամագիտության վերաբերյալ նրա աշխատություններն այսօր պատմաքաղաքական առումով արդիական են: Մինչ Լանգլուան, հայկական դրամների մասին գիտական հետազոտություն ունի Սեն-Մարտենի նվիրյալ աշակերտ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, որը լույս է տեսել Սանկտ-Պետերբուրգում՝ 1839 թ.: Այդ աշխատության մեջ կան դրամների նկարներ և դրանց բացատրությունները<sup>3</sup>: Կա նաև Կյուրիկե Ա Բագրատունու (XI) պղնձե դրամը, որը Կյուրիկյան հայկական թագավորության պերճախոս ապացույցն է (972-1113թթ): Բրոսսեի «Monnaie Arméniennes» աշխատության մեջ վերջինս գրում է՝ պետք է հայ պատմիչների հետ ընդունել, որ աղվանական թագավորական գերդաստանն ունեցել է հայկական ծագում:

Լանգլուան հայկական դրամներին նվիրել է երկու աշխատություն<sup>4</sup>: Հետաքրքիր է, որ հայ դրամներն ուսումնասիրելու հարցում Կոստանդնուպոլսում նրան օգնել է երիտասարդ Քերովբե Ալիշանյանը (Ղևոնդ Ալիշանը), որն իր ձեռքի տակ ուներ Կիլիկյան հայկական թագավորության Ռուբինյան գերդաստանի դրամների ամենահարուստ հավաքածուն<sup>5</sup>:

---

<sup>1</sup> «Հայկագուններ», Երևան, 2025, N 10, էջ 57:

<sup>2</sup> Collection des historiens anciens et modernes de l'Arménie, T. II, Paris, 1869.

<sup>3</sup> M. Brosset, Monographi des monnaie Arméniennes, S.-Petersbourg, 1839, p.34.

<sup>4</sup> V. Langlois, Numismatique de général de l'Arménie, Paris, Londres, 1859.

<sup>5</sup> Ա. Դոլուխանյան, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 68:

Վիկտոր Լանգլուայի ապրած ժամանակահատվածում Մխիթարյան միաբանության հրապարակած գրքերի, փաստաթղթերի, բառարանների, թարգմանությունների շնորհիվ ֆրանսիական հայագիտությունը մեծ առաջընթաց ունեցավ: Մխիթարյանները մեծապես օգնում էին Լանգլուային գիտական որոնումների և հայերեն երկերը ֆրանսերեն թարգմանելու ժամանակ: Դրա լավագույն արտահայտությունը դարձավ XI դարի նշանավոր պետական գործիչ, գրող, գիտնական, թարգմանիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսին նվիրված աշխատությունը: Մագիստրոսը գրում էր շատ բարդ գրաբարով, և առանց Մխիթարյանների օգնության ֆրանսիացի հայագետի համար շատ դժվար կլիներ նրա գործերը գրաբարից ֆրանսերեն թարգմանելը:

Հայագիտությանը մատուցած Լանգլուայի ծառայություններից մեկն էլ նրա շուրջ մեկ տարի տևած գիտական ուղևորությունն էր Կիլիկյան Հայաստան, որը գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ: 1852-1853 թթ. Լանգլուայի այցելությունը Կիլիկյան Հայաստան ֆինանսավորում էր ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդը, որը նպատակ ուներ Կիլիկյան Հայաստանից բերված պատմական ցուցանմուշները ցուցադրել Լուվրի պատկերասրահում: Լանգլուան ցավով արձանագրում է, որ հայկական հին հուշարձանները ավերվում են թուրքերի ձեռքով, «...որոնք երկիրը գրավելու պահից սկսած՝ կործանել են քրիստոնեական հուշարձանների մեծ մասը, որովհետև դրանք նրանց հիշեցնում էին նախկին տերերին»<sup>6</sup>:

Ինչպես տեսնում ենք թուրքական պետական քաղաքականությունը չի փոխվել. հիմա էլ Արցախում են ջնջում հայկական հուշարձանների վրայի հայերեն արձանագրությունները՝ դրանք ապօրինաբար հայտարարելով աղվանական, իսկ Անիի Կաթողիկե Մայր տաճարն արդեն վերակառուցում են որպես մզկիթ:

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 49:

Վիկտոր Լանգլուան անվերապահորեն Մովսես Խորենացուն համարում է V դարի պատմիչ՝ ելնելով հայ պատմահոր «Հայոց պատմության» մեջ օգտագործված աղբյուրներից. «Նա համոզված է, որ Խորենացին V դարի պատմիչ է, նրա «Հայոց պատմության» արտասովոր լինելու մեջ տեսնում է ինքնատիպ վավերականություն և համոզված է, թե հետագա հայագետները նրան կկոչեն ՄԵԾ պատմիչ»<sup>7</sup>:

Բացի Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագիրը ֆրանսերեն թարգմանելուց ու հրատարակելուց, հայագետը հայ պատմիչների ժողովածուների երկու ստվար հատորներում (1867-1869 թթ.) զետեղել է Ոսկեդարի հայ մատենագրությունը ներկայացնող բազմաթիվ նյութեր: Նա նաև թարգմանել է Միքայել Ասորու ժամանակագրությունը, որը տպագրել է 1868 թ.<sup>8</sup> Վենետիկում:

#### ***Վ. Լանգլուան «Մխիթարի ու նրա հիմնած միաբանության մասին***

Վիկտոր Լանգլուան առաջին օտարերկրացիներից էր, որ առանձին գրքով անմահացրեց Մխիթարին ու նրա հիմնած միաբանությունը: Հայր Լևոն Զեքիյանն իր «Վենետիկ եւ հայեր» արժեքավոր գրքում ներկայացրել է Մխիթարյան միաբանության վերաբերյալ բազմաթիվ հայերեն ու օտարալեզու գրքեր, սակայն Լանգլուայի գիրքը չի նշել: Իտալացի հեղինակների՝ Ալերամո Հերմետի և Պաոլա Կոնի Ռատտի դի Դեզիոյի «Հայերի Վենետիկը» գրքում ևս նշված չէ Լանգլուայի 1869 թ. Վենետիկում լույս տեսած և Մխիթարյաններին ներկայացնող գիրքը: Դրա փոխարեն շատ հարուստ մատենագիտական ցանկում հիշատակված է Կիլիկիայի վերջին Լուսինյան թագավորներին նվիրված աշխատությունը. «Langlois Victor, Documents pour servir l'histoire des Lusignans de la Petit Arménie, Paris, 1868»<sup>8</sup>:

---

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>8</sup> Ա. Հերմետ, Պ. Կ. Ռատտի դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000, էջ 278:

Լանգլուայի՝ Մխիթարյան միաբանությանը նվիրված գրքի շապիկի վրա գրված է, որ հեղինակը եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության հայկական ակադեմիայի անդամ, նաև Ֆրանսիայի արքայական շքանշանի ասպետ<sup>9</sup>: Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասի վերնագիրն է «Մխիթարի պատմությունը, Մխիթարյան միաբանությունը և Սուրբ Ղազար կղզու նկարագրությունը»<sup>10</sup>:

Ինչպես երևում է, Ջորջ Բայրոնի նման, Լանգլուան էլ հիացած է եղել Սուրբ Ղազար կղզում եղած կարգ ու կանոնով և վերջինիս գեղեցկությամբ: Բայրոնը երեք տարի շարունակ այցելել է Սուրբ Ղազար կղզի: Մխիթարյաններից ստացած տպավորություններն առկա են իր ընկերոջը՝ Մուրեին գրած նամակներում. «...իմ կյանքը մտնում է կանոնավոր հունի մեջ: Առավոտները ես նավակով մեկնում եմ Սուրբ Ղազար կղզի, որպեսզի հոգևորականներից սովորեմ հայերեն և օգնեմ Մխիթարյաններից մեկին (խոսքը Հ. Ավգերյանի մասին է-Ա.Բ.) ուղղել անգլերենը անգլերեն-հայերեն քերականության մեջ, որը շուտով կիրատարակվի»<sup>11</sup>: Բայրոնին հատկացվել է առանձին սենյակ: Ահա, թե ինչ ձևով է անգլիական գրականության փառքերից մեկն ընկալվել Մխիթարյաններից. «Եվ հիսուն օրվա ընթացքում նա այցելեց կղզի, երկու-երեք ժամ հատկացնում էր հայերեն լեզվի պարապմունքներին, մնացած ժամանակը մենք անց էինք կացնում ջերմ զրույցներում... նա երիտասարդ էր, եռանդուն, ուրախ բնավորությամբ, և, չնայած մի ոտքից կաղում էր, սակայն շատ գեղեցիկ էր»<sup>12</sup>:

Հենց սկզբից Լանգլուան Սուրբ Ղազարի միաբանությունը պատկերում է որպես Աստծու դրախտ. «Երբ արագասլաց և վայելչագեղ գոնդոլը, որը տեղափոխում է այցելուներին Սուրբ Ղազար կղզի,

---

<sup>9</sup> V. Langlois, Notice sur le couvent Arménien de l'île S. Lazare de Venise, 1869, Venise, գրքի շապիկ:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>11</sup> А. Бекарян, Армения в судьбе Джорджа Байрона, Ереван, 2023, с. 23.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 21:

այն երևում է իր աղյուսագույն կառույցներով ու կանաչի իր փնջերով, որը նրան նմանեցնում է որպես մի օազիս անապատում»<sup>13</sup>:

Հայագետը ճշգրտորեն է բնորոշել Մխիթարյան միաբանության դերը հայ ժողովրդի կյանքում. «Եվրոպայի ոտքի տակ հիմնադրված այդ միաբանությունը իր աչքերը շրջել է դեպի Արևելք ու դարձել հայ ցեղի օրրանը»<sup>14</sup>: Կարծում ենք՝ Մխիթարյանների հայրենասիրությունը, նվիրումը, տիտանական աշխատասիրությունն իր մեջ ամբարած Արշակ Չոպանյանը ծանոթ էր Լանգլուայի այս գրքին, երբ գրում էր. «արվեստագետ» ու «եվրոպացի» էին Մխիթարյաններն ու նրանց աշակերտները: Մեր թրքախառն բարքերի, մանավանդ պոլսահայերի բարքերի թանձր գոեհկության մեջ, նրանք ազատության ու գեղարվեստի մթնոլորտի մեջ զարգացող ազգերի հոգին, ոճը, ձևերը բերեցին մեր մեջ, դյուցազնական տարր մտցրին հայերի մեջ»<sup>15</sup>: Լանգլուան ուսումնասիրել է Սուրբ Ղազար կղզու պատմությունը. վերջինս սկզբում եղել է Աֆրիկայից ու Ասիայից եկած բորոտների կղզի, որոնց վերանալուց հետո այնտեղ բնակություն են հաստատում Ադրիատիկի մի քանի աղքատ ձկնորսներ:

Բավականին մանրամասն հայագետը վերաշարադրում է Մխիթար Սեբաստացու կյանքը՝ ըստ Ագոնց Գյուվերի գրքի: 1717 թ. սեպտեմբերի 8-ին սենատը շնորհում է Մխիթարին ու նրա ընկերակիցներին Սուրբ Ղազար կղզին՝ հիմնելու իր միաբանությունը<sup>16</sup>: Կառուցվում են բազմաթիվ շինություններ, միաբանությունը սկսում է մեծանալ և դառնում ազգի մտավոր լուսավորության աղբյուր, որը տանում է դեպի քաղաքակրթության առաջընթացը<sup>17</sup>:

Մխիթարն օրինակ էր միաբանների համար: Սկսում է թարգմանություններ կատարել այլ լեզուներից, հիմնում է տպարան: Իր

---

<sup>13</sup> V. Langlois, Նշվ. աշխ., p. 6.

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Ա. Չոպանյան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 52:

<sup>16</sup> V. Langlois, Նշվ. աշխ., p. 13.

<sup>17</sup> Նույն տեղում:

հրատարակած գրքերն ուղարկում է Կ.Պոլիս, Ասիա, բոլոր այն վայրերը, որտեղ կային հայեր: Մխիթարյան միաբանության կառուցապատման ավարտը համարվում է 1740 թ.<sup>18</sup>:

Լանգլուան նշում է, որ Մխիթարի վախճանվելուց հետո նրան փոխարինում է Մելքոն Կոստանդնուպոլսեցին, որը վախճանվում է 1800 թ.<sup>19</sup>: Նրան փոխարինում է Տրանսիլվանիայից եկած Ագոնց Գյուվերը: Այս արբահոր աշխատանքային ժամանակահատվածը համընկնում է քաղաքական ծանր ժամանակների հետ: Նապոլեոնը հաղթանակած մտնում է Իտալիա, գրավում Վենետիկը: Փակվում են Իտալիայի կրոնական միաբանությունները, սակայն հայերն իրենց ազգային պատկանելիությամբ և միաբանության գիտական ուղղվածությամբ ոչ միայն պահպանում են միաբանությունը, այլև դառնում ակադեմիա<sup>20</sup>:

Ագոնցին փոխարինում է Սուքիաս Սոմալը, որը մեծ ներդրում ունի ակադեմիայի զարգացման գործում: Հենց նրա արբահայր եղած ժամանակ հիմնվում են Մխիթարյանների երկու վարժարանները՝ Վենետիկում և Պադովայում: 1846 թ. Սուքիաս Սոմալին փոխարինում է Գևորգ Հյուրմուզյանը:

Լանգլուան բացատրում է, թե ինչպես կարելի է գնալ Սուրբ Ղազար կղզի: Նկարագրում է միաբանության կարգ ու կանոնը: Միաբանությունն ունի վաթսուն վարդապետ ու մի քանի եղբայրներ:

Արբահայր Հյուրմուզյանն ունի վեց հոգուց բաղկացած խորհուրդ, որն օգնում է արբահորը տարբեր բնագավառներում՝ կրթության, գիտության և գրականության, տպագրության և այլն<sup>21</sup>: Միաբանների մի մասն ապրում է Վենետիկում, Կ. Պոլսում, Փարիզում և այլն, որտեղ նրանք ղեկավարում են վանքեր, շրջում են աշխարհում՝ շարունակելով միաբանության հիմնադրի գործը:

---

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 22:

Լանգլուան մանրամասն նկարագրում է Սուրբ Ղազար կղզու տեսարժան վայրերը: 1800 թ. միաբանություն է այցելել Հռոմի Պիոս VII պապը: Հայագետն իրավացիորեն նշում է, որ Սուրբ Ղազար միաբանության վանքը չունի այն հոյակապությունը, ինչ կարելի է տեսնել Վենետիկի Սուրբ Մարկոս եկեղեցում:

Ահա թե ինչ սքանչացումով է պատմում Վենետիկի Սուրբ Մարկոս տաճարի մասին XVIII դարի սկզբին այն այցելած Սիմեոն Լեհացին. «Եվ այնպիսի արվեստ, փորվածք և քանդակներ են, որ գրչով չեն կարող այլ տեղ գրել կամ նկարել: Մարդ ինչքան նայեր, չէր կշտանա գեղեցկությունից: Եվ այն ծուլած ձիերը ոսկու նման փայլում էին և իրար նայում որպես կենդանի: Եվ ավելի վերև՝ գմբեթի շուրջը, սպիտակ մարմարից կոփած ու քանդակած էին տասներկու առաքյալները և չորս ավետարանիչները, և այլ սքանչելի բաներ»<sup>22</sup>:

Սուրբ Ղազարի տաճարի խորաններից մեկում, որը հատուկ ուշադրություն է գրավում, ներկայացված է Տրդատ արքան՝ Հայաստանի առաջին քրիստոնյա թագավորը, որին մկրտել է Գրիգոր Լուսավորիչը: Նրա հետ ներկայացված են Սուրբ Մեսրոպը՝ հայ գրերի ստեղծողը, սուրբ գրքերի թարգմանիչ, Հայաստանի կաթողիկոս Սուրբ Սահակ Պարթևը:

Մխիթարյանների Սուրբ Ղազարի տաճարում թվում է, թե լսում ես գողթան երգիչներին, որոնք իրենց բամբիռների նվագակցությամբ երգում են սրբազան բալլադներ, որոնք դեռևս հինգերորդ դարում հիացմունք էին պատճառում Մովսես Խորենացուն, և նա դրանք պահպանեց իր «Հայոց պատմության» մեջ<sup>23</sup>:

Մխիթարյաններն ունեն նաև մի փոքրիկ եկեղեցի Վենետիկում, որը կոչվում է Սուրբ Խաչ<sup>24</sup>: Միաբանությունն ունի շատ հա-

<sup>22</sup> Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, թարգմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Արշակ Մադոյանի, Երևան, 1997, էջ 45:

<sup>23</sup> V. Langlois, V. Langlois, Նշվ. աշխ., p. 23.

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 25:

րուստ գրադարան, որի դռան վերևում կարելի է տեսնել հայ ծովա-նկարիչ Հովհաննես Այվազովսկու նկարը: Ձեռագրատանը պահպանվում է շուրջ 2000 ձեռագիր: Այն ամենահարուստն է ողջ Եվրոպայում, սակայն զիջում է Մեծ Հայքում գտնվող Էջմիածնի ձեռագրատանը: Բոլոր ձեռագրերը պահպանվում են հատուկ խնամքով: Տաճարի այդ հատվածում կարելի է տեսնել Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդի դիմանկարը՝ որպես հարգանքի նշան՝ նվիրված Ֆրանսիայի կառավարության կողմից:

Միաբանությունն ունի հրաշալի տպարան, որտեղ հրատարակված գրքերն ուղարկում են Թուրքիա, Ռուսաստան, Պարսկաստան, հասնում մինչև Հնդկաստան: Տպարանը մեղալներ է ստացել Փարիզում (1855-1867 թթ.), Ֆլորենցիայում (1861 թ.), Լոնդոնում (1862 թ.):

Մխիթարյան ակադեմիան մեծապես նպաստել է այնպիսի նշանավոր գիտնականների, արևելագետների, գրողների կայացմանը, ինչպիսիք են՝ Բրոսսեն, Պետերմանը, Բայրոնը, Սլիվեստեր դը Սասին և ուրիշներ: Մխիթարյանները պատրաստում են հայոց լեզվի մի ծավալուն բառարան՝ ֆրանսիական ակադեմիայի օրինակով<sup>25</sup>:

Միաբանության տարածքում ապրող միաբանների, նրանց հետ՝ նաև արքահոր բնակատեղին համեստ է: Եթե որևէ մեկն այցելում է Սուրբ Ղազարի միաբանություն, խորհուրդ է տրվում գնալ այգի, որը զարդարված է խաղողի խիտ թփերով<sup>26</sup>: Միաբաններն այդ խաղողից պատրաստում են սպիտակ գինի, որն օգտագործում են պատարագի ժամանակ: Եվ այդ գինին արտոնություն ունի կոչվելու Արարատ<sup>27</sup>:

---

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 29: Խոսքը «Նոր բառգիրք հայկական լեզուի» երկհատոր բառարանի մասին է, որի հեղինակներն են Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմեյանը, Մկրտիչ Ավգեոյանը: Բառարանի կազմման աշխատանքները տևել են հիսուն տարի - Մ. Գ.:

<sup>26</sup> V. Langlois, Նշվ. աշխ., p. 31.

<sup>27</sup> Նույն տեղում:

Կղզում կան գերեզմաններ, որտեղ թաղված են հայրենաբաղձ ուխտավորներ:

Մխիթարյանների տպարանում հրատարակվել է Ներսես Շնորհալու «Հուսատով խոստովանիմ» հռչակավոր աղոթքը աշխարհի երեսունից ավելի լեզուներով<sup>28</sup>: Նրանց գրադարանում դրված է մատյան, որում այցելուները թողնում են իրենց տպավորությունները: Մատյանը շատ հետաքրքիր է, այնտեղ կարելի է տեսնել արքաների, կայսրերի, համեստ այցելուների ստորագրություններ<sup>29</sup>:

Արժեքավոր են լորդ Բայրոնի տպավորությունները: Գրքի երկրորդ բաժինը նվիրված է Հայաստանի պատմությանն ու գրականությանը: Մեծ Հայքի աշխարհագրական տեղանքը նկարագրելիս Լանգլուան Հայաստանը պատկերում է որպես ընդարձակ երկիր, որը Կովկասյան լեռներից ձգվում է մինչև Միջագետք, մինչև Եփրատ գետը<sup>30</sup>:

Երկրի կենտրոնում աստվածաշնչյան Արարատ լեռն է, որի գագաթին կանգ է առել Նոյի տապանը ջրհեղեղից հետո: Հայագետը նշում է Հայաստանի հարևան երկրները, խոսում է Կիլիկիայի հայկական թագավորության մասին<sup>31</sup>: Մեծ Հայքի նահանգները թվարկելիս հիշատակում է Ուտիքը և Արցախը: Նա չի մոռանում նշել, որ Մեծ Հայքի մի մասը գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ, իսկ պարսիկները վերցրել են Հայաստանի զգալի մասը: Նրանք տիրում են Երևանին ու Նախիջևանին, Աստապատին, Շաքիին, Շիրվանին, Շամախիին, Բարդային ու Էջմիածնին: Նշվում են Հայաստանի քաղաքները՝ Էրզրումը, որը կոչվել է Կարին, Անին՝ Բագրատունիների մայրաքաղաքը, որի ավերակները հիացնում են ճանապարհորդներին, Վաղարշապատը, որտեղ գտնվում է Էջմիածնի տաճարը, Ուռհան կամ Եդեսիան՝ Աբգար արքայի մայրաքաղաքը, Վանը, Մծբինը

---

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 36:

և, վերջապես, Երևանը<sup>32</sup>: Հայկին համարելով հայկական պետականության հիմնադիր՝ Լանգլուան նշում է, թե Տիգրան Երվադյանը հզորացնում է Հայաստանը: Հատուկ շեշտվում է, թե Տիգրան Մեծը կրել է արքայից արքա տիտղոսը<sup>33</sup>:

Հիշատակվում է Աբգար արքայի քրիստոնյա լինելը և Տրդատ Մեծի ժամանակ քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն ընդունելը: Մեսրոպ Մաշտոցը՝ Ներսես Մեծի աշակերտը, հայոց ազգին տալիս է մի այբուբեն, որով ազգը հասնում է մինչև մեր օրերը, ասում է Լանգլուան<sup>34</sup>: Խոսում է Ավարայրի ճակատամարտի, մարզպանական Հայաստանի, IX դարում Հայաստանի պետականության վերականգման մասին, որը հետո կործանում են բյուզանդացիները, վերջին՝ Գագիկ Երկրորդ թագավորին գերի վերցնում, հետո՝ սպանում: Հայերը Ռուբեն իշխանի ջանքերով Կիլիկիայում հիմնում են հայկական նոր թագավորություն<sup>35</sup>: Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն VI-ը գահազրկվում է թուրքերից և վախճանվում Փարիզում՝ 1393 թ.<sup>36</sup>:

Շատ արժեքավոր են գրքի այն հատվածները, որոնք վերաբերում են հայ գրականությանը: Լանգլուան հիացմունքով է խոսում Ոսկեդարի գրականության մասին, որի ներկայացուցիչներ է համարում Եզնիկ Կողբացուն, Մովսես Խորենացուն, Մամբրեին, Դավիթ Անհաղթին, Գյուտին, Հովհան Մանդակունուն, Եղիշեին, Ղազար Փարպեցուն: Լանգլուան նշում է՝ հայ գրականության ստեղծագործություններով այդքան առատ V դարին փոխարինում է վեցերորդ՝ անպտուղ դարը, որից հայտնի է պատմիչ Պետրոս Այունեցին<sup>37</sup>: Յոթերորդ դարի գրողներից հիշում է Կոմիտաս Կաթողիկոսին՝ «Ան-

---

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>36</sup> Մենք տեսել ենք Լևոն VI Լուսինյան թագավորի գերեզմանը Փարիզի մոտ գտնվող Սեն-Դենի տաճարում՝ Ֆրանսիայի թագավորների կողքին - Գ.Մ.:

<sup>37</sup> V. Langlois, Նշվ. աշխ., p. 52.

ծինք նուիրեալք» շարականով, Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը», Անանիա Շիրակացուն և Մովսես Կաղանկատվացուն: Ութերորդ դարից հայագետին ծանոթ են Ստեփանոս Սյունեցին, Հովհան Օծնեցին, Ղևոնդ պատմիչը: Տասներորդ դարը ներկայացնում են Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին՝ իրենց պատմություններով, Մեսրոպ Երեցը, որը գրել էր Ներսես Մեծի պատմությունը և, իհարկե, Գրիգոր Նարեկացին՝ Հայաստանի Պինդարոսն՝ իր 95 մասից բաղկացած սուրբ էլեգիաներով, իր տաղերով, որոնք երգվել են Հայաստանի եկեղեցիներում<sup>38</sup>: XI դարում հանդես է գալիս Գրիգոր Մագիստրոսը, որը երեք օրում գրում է իր «Հազարատողեան» քերթվածը՝ Հին ու Նոր Կտակարանների բովանդակությամբ: Նա բազմաթիվ թարգմանություններ է կատարել հունարենից: Հիշատակվում է նաև Պետրոս Գետադարձը՝ որպես նշանավոր շարականագիր: Գրքի այդ հատվածում տրվում են միջնադարյան հայ գրականությունը ներկայացնող բազմաթիվ անուններ: Մենք համառոտ անդրադառնում ենք դասական մատենագիրներիին: Արիստակես Լաստիվերցի պատմիչը նկարագրել է 989-1071 թթ. Հայաստանի պատմական դեպքերը և Անիի կործանումը թուրքսելջուկ Ալպ-Արսլանի կողմից 1064 թ.<sup>39</sup>: XII դարի հայ գրականության փառքը Լանգլուան համարում է Ներսես Շնորհալույն, որին անվանում է Ֆրանսիայի քրիստոնյա հոգևորական բանաստեղծ Ֆենելոն<sup>40</sup>: Հիշատակվում են Շնորհալու թղթերը և «Ողբ Եդեսիոյ» պատմական քերթվածը: Լանգլուայի կարծիքով ոչ մեկը Շնորհալու նման կատարյալ չի գրել: Գրքում համառոտ խոսք է ասվում շատերի մասին: XII դարում Մխիթար Գոշը գրում է «Դատաստանագիրքը» և 190 առակները, մեծ բժշկապետ Մխիթար Հերացին իր «Ջերմանց Մխի-

---

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 55: Պինդարոսը հույն քնարերգու է (թ.ճ.ա 518-438), ողջ կյանքը նվիրել է բանաստեղծություններ գրելուն: Իր ներբողյաններում փառաբանել է հերոսներին ու ազգային մրցախաղերի հաղթողներին:

<sup>39</sup> V. Langlois, Նշվ. աշխ., p. 56.

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 58:

թարրությունը»: Իհարկե, հիշատակվում են այնպիսի դասականներ, ինչպիսիք էին Հովհան Վանականը, Վարդան Մեծը կամ Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Հովհաննես Երզնկացին, Ստեփանոս Օրբելյանը: XIV դարում Հեթում պատմիչը գրում է Չինգիզ խանի պատմությունը, իսկ Խաչատուր Կեչառեցին կաֆաներ է նվիրում Ալեքսանդր Մակեդոնացուն: Միջնադարյան մատենագիրներից հետո հիշատակվում է Ոսկան Երևանցին, որը Ամստերդամում տպագրում է Առաքել Դավրիժեցու պատմությունը<sup>41</sup>: Արդեն Սեն-Մարտենը նշել էր, որ ժողովուրդների պատմության մեջ եզակի դեպք է, երբ որևէ ազգ արտասահմանում այդքան շատ տպարաններ բացեր, ինչը որ արեցին հայերը<sup>42</sup>: Գրքի վերջում ներկայացնում է, թե ինչ գրքեր են տպագրել Մխիթարյանները:

### ***Եզրակացություն***

Վիկտոր Լանգլուան XIX դարի ֆրանսիական հայագիտության նշանավոր դեմքերից է, որն իր կարճատև կյանքում հասցրել է թողնել մեծարժեք հայագիտական ժառանգություն: Նրա բոլոր գրվածքներից երևում է մի առանձնահատուկ սեր հայ ժողովրդի ու նրա մշակութային ժառանգության նկատմամբ: Լանգլուան շրջել է Եվրոպայի արքայական արխիվներում և գտել Կիլիկյան թագավորների հրովարտականներն ու դրանք ներկայացրել գիտությանը: Նրա դրամագիտական աշխատությունները եզակի փաստեր են պարունակում հայ ազգի անցյալի մասին: Սերտորեն համագործակցել է Վենետիկի Մխիթարյանների հետ, հիացել նրանց կատարածով ու իր կողմից, որպես գնահատանքի խոսք, գրել Մխիթար Սեբաստացու և նրա լուսավոր աշակերտների հիասքանչ գործերի մասին:

Վիկտոր Լանգլուայի՝ Մխիթարյան միաբանությունը ներկայացնող գիրքն ունի գիտական ու ճանաչողական մեծ արժեք:

---

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>42</sup> Ա. Դյուլիսանյան, Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014, էջ 41:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին  
և միջնադարյան գրականության և  
նրա դասավանդման մեթոդիկայի  
ամբիոնի դասախոս*

## ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՅՈՒ ՄԱՍԻՆ

### **Ներածություն**

1701 թ. սեպտեմբերի 8-ին Կոստանդնուպոլսում Մխիթար Սեբաստացին իր ինը աշակերտների հետ ստեղծեց մի հոգևոր կառույց, որը դառնալու էր դարեր շարունակ պետականություն չունեցող հայ ժողովրդի գիտության և մշակույթի վերածննդի կարապետը: Անցնելով բազմաթիվ փորձությունների միջով, դիմակայելով տարատեսակ զրկանքներին՝ 25-ամյա նպատակասլաց երիտասարդը ձեռնարկեց մի գործ, «տնկեց մի այգի», որի արգասաբեր պտուղների համն ու հոտը դեռ երկար պիտի վայելեն եկող սերունդները:

«Մխիթար նոր ուղղութիւն մը գծեց վանական հաստատութեան, որ թերևս շատ յարմար չէր արևելցի բնաւորութեանց, բայց փրկութեան միակ միջոցն էր այն: Նա իրեններուն սրտին խորը քանդակեց սէր և միութիւն, ներքին առնչութիւն մը առաջնորդին և հպատակին մէջ, և մանաւանդ՝ անձնուրացութեան հոգին, անձին նուիրումը, անհատին ոչընչացումը այն գերբնական սիրոյ վառարանին մէջ, ուր հալելով, ի մի ձուլելով, դուրս պիտի ելնէր ամուր, վիթխարի զանգուած մը կամաց, կարծիքներու, զգացմանց, որ ունենար մի և նոյն

գոյնը, մի և նոյն ուղղութիւնը, ձկտէր մէկ նպատակի, և այնպիսի ուժ մ'ունենար իրէն մէջ, որ հրաշքներ գործէր, փշրէր ամէն խոչ և խութ, և մնար անտեղիտալի ո՛ր և է արտաքին ուժոյ կամ բռնութեան առջև»<sup>1</sup>:

Կրոն, գիտություն և կրթություն. սա էր Մխիթար Սեբաստացու միաբանության նշանաբանը, որը մինչ օրս ուղեկից է այդ հաստատության յուրաքանչյուր անդամի համար:

Իր գաղափարը իրականություն դարձնելու ճանապարհին բազմաթիվ խոչընդոտները՝ կրոնական հալածանքներ, տեղից տեղ փոխումներ, միաբանության գործերի համար «արժող-չարժողից» պարտքով զումար ուզելը, բնույթով ուրախ, լավատես, շարժուն ու ակտիվ Մխիթարին տարբեր ժամանակահատվածներում հասցրեցին ֆիզիկական հյուժվածության և տարաբնույթ հիվանդությունների պատճառով մի քանի անգամ երկրային կյանքը շուտ ավարտելու շեմին, մի պահ՝ նաև տեսողությունից ընդհանրապես զրկվելու վտանգին: Հայ ժողովրդի մտավոր կյանքի այս վառ ներկայացուցիչը, ճիշտ է, «...իր բացառիկ կամքի, տոկունության և հայրենիքի հանդեպ նվիրվածության շնորհիվ դարձավ բնագրագետ-աղբյուրագետ, Աստվածաշնչի հրատարակիչ ու մեկնիչ, նորոգող լատինաբանությամբ աղճատված գրաբարի, բնական գիտությունների կարևորությունը խորապես գիտակցող և շեշտող»<sup>2</sup>, իսկ միաբանության առաջին անդամները «...դարձան ԺԸ դարի եվրոպական հանրագիտակ մտածողության ազգային կրողները»<sup>3</sup>, սակայն առավելապես արգասավոր նախահիմքեր ստեղծողները եղան իրենց հետնորդների համար: Իսկ

---

<sup>1</sup> Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացոյ, գրեց Հ. Յովհաննէս վ. Թորոսեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 21:

<sup>2</sup> Վ. Դերիկյան, Ալիշանը և հայ հին գրականությունը /ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար/, Երևան, 1986, էջ 4: (Ատենախոսության բացառիկ տպագիր տարբերակներից մեկը մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում երջանակահիշատակ Վարդան Դերիկյանի դստերը՝ Շողակաթ Դերիկյանին: Հ.Ս.):

<sup>3</sup> Նույն տեղում:

ով, եթե ոչ Ղևոնդ Ալիշանն էր այդ ավանդույթների և «...առաքելության խորհրդանիշը, Մխիթարյան հայագիտությունը ժամանակի եվրոպական գիտության ընձեռած հնարավորություններով ավարտուն մի համակարգի վերածողը և նրան ազգային առավել շեշտված դրոշմ ու գեղարվեստականություն հաղորդողը...»<sup>4</sup>:

19-րդ դարի հայ բանաստեղծության, գիտության ու մտավոր կյանքի առաջամարտիկներից մեկը իր բազմահատոր աշխատությունները գրելու, տարաբնույթ աշխատանքներով զբաղված լինելու ընթացքում չի մոռացել հոգևոր հորը, որդիական աղոթքներն է ուղղել առ Մխիթար Սեբաստացին՝ իրեն հատուկ լեզվական բառապաշարով հրաշագեղ քերթվածներ և արձակ տողեր ծոնելով նրան:

Սույն հոդվածի շրջանակում Ղևոնդ Ալիշանի բազմահատոր երկերից քննության առարկա ենք դարձրել հիմնականում «Նուագք»-ի հինգհատորյակը, 1843-1847 թթ. գրված նամակները, ինչպես նաև «Բազմավէպ» հանդեսի 1843 թ. բոլոր համարները:

### ***Հիմնական մաս***

Ղևոնդ Ալիշանի բանաստեղծական տաղանդը հիմնականում դրսևորվել է ստեղծագործական գործունեության առաջին շրջանում՝ 1840-1852 թթ.<sup>1</sup> այս ընթացքում գրելով ավելի քան երեսուն հազար տող: Իր պոեզիան գրեթե ամբողջությամբ ամփոփել է «Նուագք» (Նվագներ) ժողովածուում և հինգ հատորով հրատարակել 1957-1958 թթ.: Ալիշանի բանաստեղծությունների մեծ մասը «...խրթին գրաբարով գրված կրոնամիստիկական չափածո խորհրդածություններ են, որոնք ընթերցող լայն հասարակության համար մնացել են որպես «մեռյալ տառ» և որևէ դեր չեն կատարել հայ գրականության պատմության մեջ»<sup>5</sup>: Նվագների երրորդ՝ «Հայրունի» խորագրով հատորում են ամփոփվել պատմահայրենասիրական բանաստեղծություն-

---

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Ղ. Ալիշան, Նվագներ, կազմ. և առաջաբ.՝ Ա. Ինճիկյան, Երևան, 1957, էջ 5:

ներն ու պոեմները, ինչպես նաև «Երգք Նահապետի» շարքը կազմող այն գործերը, որոնք մեծ հռչակ են բերել Ալիշան բանաստեղծին:

Վերը նշված կրոնամիստիկական չափածո գրվածքների մեջ, ուշադրության արժանի բազմաթիվ քերթվածներ կան: «Նուագք»-ի 5 հատորներում կան բազմաթիվ բանաստեղծություններ, որոնք կամ նվիրված են Մխիթար Սեբաստացուն, կամ էլ դրանցում հիշատակվում է Աբբահայրը:

1841 թ. գրված «Ի յոբելեան քահանայութեան Հօր իմոյ հոգետորի» քերթվածը, որը գետեղված է «Նուագք»-ի Բ. հատորում, ամենայն հավանականությամբ, նվիրված է հենց Մխիթար Սեբաստացուն: Բովանդակության մեջ հեղինակը կոչ է անում իր հոգևոր հորը ուրախ լինել, քանի որ նրա պատգամները կատարվում են, նոր լույս և շող է գալիս.

*Ուրախ լեր հայր իմ, ի կէս քո սուրբ դարուն,  
հնձ քափչ, քեզ յաղթից է այդ յոբելեան՝:*

Իհարկե, միանշանակ չէ՝ բանաստեղծությունը նվիրված է Սեբաստացուն, թե ոչ, քանի որ ժամանակագրական առումով չի համապատասխանում նրա ծննդյան հոբելյանական և ոչ մի տարվան: Հիշենք, որ Մխիթար Սեբաստացին ծնվել է 1676 թ., իսկ բանաստեղծությունը թվագրված է 1841 թ.: Ցավոք, Ալիշանը չի նշել՝ իր հոգևոր հայրերից ու՞մ է նվիրված տվյալ ստեղծագործությունը:

«Մաղթունի»-ի հաջորդ բանաստեղծություններից մեկն էլ՝ «Ի նորընտիր», ունի «Գահակալ Մխիթարայ Գ.Գ.Վ.Հ.» տիտղոսագիրը, որն ամբողջությամբ գովաբանում է Տիրամոր կողմից ընտրված Մխիթարին: Սեբաստացու կենսագիրները պատմում են Սևանավանքի Սուրբ Տիրամոր պատկերի առջև տեղի ունեցած հրաշքի մասին. Մխիթարը, գիշերը մտնելով եկեղեցի, ծնկաչոք սկսում է աղոթել Տիրամոր պատկերի առաջ, և Տիրամայրը, լսելով նրա սրտի ձայնը, տեսիլքի կերպարանքով հայտնվում է նրան: Աստվածամայրը հարց-

---

<sup>6</sup> Ղ. Ալիշան, Նուագք, հտ.. Բ, Մաղթունի, Վենետիկ, Ս. Ղազար, 1857, էջ 22:

նում է, թե ի՞նչ է ուզում Մխիթարը: Վերջինս, պատկերից զմայլված և խառնված, չիմանալով՝ ինչ պատասխանել, ասում է. «Այն կ'ուզեմ, Տիրուհի, ինչ որ Դու կ'ուզես».- «Եղիցի՛», կը պատասխանէ Տիրամայրը՝<sup>7</sup> նախանշելով այդ Մանուկի (Մխիթար անվանակոչվել է սարկավագ ձեռնադրվելու ժամանակ) հետագա ճակատագիրը.

*Եւ յանուանէդ մեծ եւ սուրբ  
Պատկանեսցին տիեզերք,  
Կամ թէ հրաշիցդ հարեալ հուրք  
Կհագեն ըզքնարս իմ եթերքս՝:*

Բանաստեղծությունը գրվել է 1846 թ.:

Վերը նշված տեսիլքին նվիրված մի բանաստեղծություն էլ գտնում ենք «Նուագք»-ի Բ. հատորում՝ վերնագրված «Հայցուած Մխիթարայ»՝ գրված 1945 թ..

*Ոգիք խնամողք եւ գըթութիւնք երկնային  
Ձեռն ի ճակատ Մըխիթարայ կընքեցին՝:*

Բանաստեղծությունն ավարտվում է՝ ինչպես տեսիլքի պատմությունը.

*«Եղիցի». Մայրն ասաց, եւ ել ի յերկինս՝:*

Նույն հատորի հաջորդ բանաստեղծությունը ևս գրված է Մխիթար Աբբահոր մահվան 100-ամյա տարելիցին՝ 1849 թ. և վերնագրված է «Ի հարիւրեմեակ լուսանորոգն Մխիթարայ»: Ալիշանն այստեղ Մխիթար Սեբաստացուն համարում է լուսանորոգող, որը, լցված երկնային լույսով, փարատում է մեր հին եպիսկոպոսապետերին, որոնց վաստակը միջնադարում մարել էր.

---

<sup>7</sup> Վարք Մխիթարայ արքայի Սեբաստացոյ, էջ 75:

<sup>8</sup> Մաղթունի, էջ 28:

<sup>9</sup> Ղ. Ալիշան, Նուագք, հտ.. Գ, Հայրունի, Վենետիկ, Ս. Ղազար, 1867, էջ 172:

<sup>10</sup> Նույն տեղում:

*«Աւա՛ղ, ըզԳրիգորին եւ Սահակեանց խամրեր վաստակ,  
եւ անբարին աճէր ծընունդ եւ ժամանակըն վայրապար...»<sup>11</sup>:*

Բայց Մխիթարի լույսը եկել է փարատելու տարածված խավարը, և հեղինակը ուրախանալու կոչ է անում նախնիներին.

*Հայրապե՛տք Հայոց, արիք ի սըրբութեան սրըսկապանից...  
Ուրախ լերուք երկինք, ուրախ լերուք Հայոց սուրբ Հայրապետք,  
Զի հաճեցաւ Տէր նոր ծագել ինեւ զայս լոյս Հայոց մեծաց<sup>12</sup>:*

Մխիթարն իր գործունեությամբ նոր լույս է սփռել հայ դարավոր մշակութային ժառանգության վրա՝ բազմաթիվ փորձությունների միջոցով անցնելով, մրցելով մշուշի և խավարի հետ և հաղթել նրանց.

*Նոր արդարեւ տըւար Հայոց դու Մըխիթար Լուսանորոգ.  
Դու՛ որ ընդ խիստ մըրցեալ միգի՛ լուսով լուծեր զերկն անհընար<sup>13</sup>:*

Մխիթար Սեբաստացուն Ղևոնդ Ալիշանը շատ է անդրադարձել իր բազմաթիվ նամակներում: Միաբանությունը յուրաքանչյուր տարի ապրիլի 27-ին՝ Աբբահոր հիշատակի օրը, նշում է մեծ հանդիսավորությամբ. այդ օրվան նախորդող կամ հաջորդող նամակներից շատերում, որոնք ուղղված են միաբանության այս կամ այն անդամին, Ալիշանն անդրադառնում է Մխիթար Սեբաստացուն: Դիցուք, 1844 թ. մայիսի 18-ին Հայր Բարսեղ վրդ. Մարտիրոսյանին ուղղված նամակից իմանում ենք, որ Ալիշանը Մխիթար Սեբաստացու հիշատակի օրը Մայրավանքում տեղի ունեցած միջոցառման ժամանակ բանախոսությամբ է հանդես եկել, որը լավ է ընդունվել միաբանների կողմից. «Ի 27 ապրիլի ինձ վիճակեցաւ ներբողել զՄխիթար, եւ ոչ սակաւ հաճութիւն ցուցին ընդ ճառն»<sup>14</sup>:

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 175:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>14</sup> Ղ. Ալիշան, Նամականի, հտ. I. աշխատասիր.՝ Հ. Վահան ծ. վրդ. Օհանես-նի, խմբ.՝ Վարդան Դեփիկեան, Երևան, 2020, էջ 21:

Ալիշանի նամակներում հանդիպում ենք ընծայական բանաստեղծություններ, որոնք հեղինակը չի ներառել «Նուազք»-ի հինգ հատորներից և ոչ մեկում: Այդպիսին է 1945 թ. նոյեմբերի 9-ին գրված «Առ եղբարս պատուականս յորժամ միաբան զվարդապետական ընկալաք գաւազան» բանաստեղծությունը, որ գրված է միաբանության անդամների օժման արարողությանը: Ալիշանը քերթվածում ներկայացնում է օժման ընթացքում կատարվող մի քանի կարևոր գործողություններ, թվարկում կարգին մասնակցող միաբանների անունները, և, բնականաբար, հիշում Մխիթար Աբբահորը.

*Յամենակալ աջոյն քո աջ զօրասցի  
Մխիթարայ՛րեւ ի քեզ յամայր ծագեսցի...  
Հար երդմնեցո՛ ցըպովդ ըզվէմ տապանի  
Որ աստ ըզմեծ քարոզին յինքն ըզնըշխար  
Ձաստուածախօս լեզուն տանի ըզՄըխիթար...<sup>15</sup>:*

Բանաստեղծության վերջին մասի համար Ալիշանը որպես բնաբան ընտրել է Պողոս առաքյալի խոսքերը և զուգահեռ է տարել Աբբահոր խոսքերի հետ, թե ինչպես վարդապետական գավազան ստացողները «...միաբանութեան մէջ ձրի ստացան իրենց գիտելիքները ու հոգևոր շնորհները, այնպէս ալ հաւատարիմ Մխիթարեան առաքելութեան, ձրի բաշխեն գայն»<sup>16</sup>:

1843 թվականից՝ «Բազմավէպի» առաջին համարներից սկսած, հանդիպում ենք աշխարհաբարին վերաբերող հոդվածների շարքի, որոնցում բազմիցս հիշատակվում է Սեբաստացու անունը: Եթե հիշենք, որ այս ամսագրի հիմնադրման ակունքներում կանգնած է Ղևոնդ Ալիշանը և յուրաքանչյուր հոդված առանց նրա «ձեռքի տակով անցնելու» չէր տպագրվում, ապա, կարող ենք ասել, որ հոդվածներում հենց Ալիշանն է հիշատակել իր մեծահամբավ նախորդին: Դիցուք՝ 1843 թ. «Բազմավէպի» ապրիլի 1-ի 7-րդ համարի «Աշ-

<sup>15</sup> Նույն տեղում, հտ. 1, էջ 26,27:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 670:

խարհաբառ լեզուի վրայ» հողվածում կարդում ենք. «Այսպիսի բաղ-  
ձանքով նաև մեր երջանիկ նախահայրը Մխիթար Աբբահայր՝ հար-  
կաւոր և օգտակար ճանչցեր է աշխարհաբառ լեզուի քերականութիւն  
մը շինել՝ չափաւոր ընդհարձակութեամբ 1726-ին, որ ձեռագիր պա-  
հուած է իր գրուածներուն մէջ. և ինքը 1727-ին անոր համառօտը  
տպած է՝ տաճկերէն բացատրութեամբ, որ հիմա քիչ կը գտնուի»<sup>17</sup>:

Նույն համարն ավարտվում է Մխիթար Սեբաստացու մահ-  
վան տարելիցին միաբանության ներսում հնչեցված «Տաղերգութիւն  
ի մեծն Մխիթար Աբբայ» բանաստեղծական տաղերգութեան նախա-  
բանով, որից առաջ գրված է. «Վասն զի ան օրը (ապրիլի 27-ին)  
հանդէս կըլլայ, ու միաբաններէն մէկը հրաւիրելոց առջին ներբող  
կըխօսի իրենց երջանիկ հիմնադրին վրայ, մէջ բերելով իր զանազան  
կատարելութիւններն ու առաքինութիւնները, որոնցմով բոլոր կենա-  
ցը մէջ աշխատեր է յօգուտ եկեղեցւոյ և՛ ի սէր ազգին, և մեր միաբա-  
նութիւնը հաստատելով՝ իր աշխատանքն ու արդիւնքը մէկ կերպով  
մը մշտընջենաւոր ըրեր է»<sup>18</sup>:

1843 թ. օգոստոսի 1-ի թիվ 15 համարում ներառված է բա-  
նաստեղծութեան շարունակությունը, սակայն, կրկին անանուն.  
«Օրագրիս 7 թուին մէջ երջանիկ նախահօրը ներբողին սկիզբը դնե-  
լէն ետև, հոս մնացած կտորը դնենք քաղելով: Բանաստեղը առջի հո-  
դուածին ետևէն Հայաստանի ուրիշ պարձանքներն ալ քերթողական  
ոճով կըհամառօտէ. Այսինքն մեր ազգին լուսաւորութիւնը, մեծին  
Ներսիսի արդիւնքը, սրբոց թարգմանչաց ժամանակը, և այլն...»<sup>19</sup>:  
Պարզ չէ՝ տողերի հեղինակը ով է, քանի որ, ինչպես գիտենք, հան-  
դեսի առաջին համարների հողվածները հիմնականում անանուն էին:  
Ենթադրում ենք, որ տողերի հեղինակը կամ այդ շրջանի խմբագիր  
Գաբրիել Այվազովսկին է, կամ՝ նրա օգնական Ղևոնդ Ալիշանը:  
Ապացուցելու համար, իհարկէ, պետք է հետազոտութեան առարկա

<sup>17</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1843, թ. 7, էջ 109:

<sup>18</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1843, թ. 7, էջ 112:

<sup>19</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1843, թ. 15:

դարձնել երկու գործիչների, ինչպես նաև այդ շրջանում հանդեսին թղթակցած մյուս միաբանների արխիվները, որը, սույն հոդվածի շրջանակներից դուրս է:

1843 թ. հոկտեմբերի 15-ի համարում սկսված և նույն թվականի նոյեմբերի 1-ի համարում շարունակվող «Եղծ կարծեաց անմիաբանութեան Հայոց» հոդվածաշարում, որտեղ հեղինակը փորձել է հասկանալ հայ ժողովրդի անմիաբանության խնդիրներն ու պատճառները՝ սկսած հայ ժողովրդի կազմավորման ժամանակներից, բազմաթիվ դեպքերում մեջբերելով պատմահայր Մովսես Խորենացուն և միջնադարյան մեր մյուս մատենագիրներին, հասնելով մինչև իր ապրած ժամանակահատվածը, խոսում է Մխիթար Սեբաստացու ձեռնարկած գործի կարևորության մասին. «Յայս և ի սոյն նպաստ առաքեցաւ ի միջի մերում Մխիթար մեծ, պատրաստել զսիրտս որդւոց առ հարս իրեանց, աճել զանհաւանս ի գիտութիւն ճշմարտութեան, բժշկել զբեկեալս սրտիք ի կարծեաց անմիաբանութեան՝ որ զսիրտս և զմիտս և զբազուկս միանգամայն լքուցանէ յազգասիրութեան ջանից»<sup>20</sup>:

### ***Եզրակացություն***

Ամփոփելով, կարող ենք ասել, որ մեր կողմից ուսումնասիրված գեղարվեստական ստեղծագործություններում, նամակներում և «Բազմավէպ»-ի 1843 թ. մի շարք համարներում Ղևոնդ Ալիշանը բազմիցս անդրադարձել է Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացուն: Կարծում ենք, Ղևոնդ Ալիշանի բազմահատոր աշխատությունների ամբողջական ուսումնասիրությունը տվյալ հարցի շուրջ մի ամբողջական հետազոտության թեմա կարող է դառնալ, որի արդյունքում կապացուցվի Ղևոնդ Ալիշանի նվիրվածությունն ու Մխիթար Սեբաստացու հիմնական առաքելությանը անթաքույց հետևելու, նրա գործը բարձր մակարդակով շարունակելու կամքը:

---

<sup>20</sup> «Բազմավէպ», Վենետիկ, 1843, թ. 20, 21:



## **ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*«Հ ԳԱԱ Հիմնարար գիտական  
գրադարանի տնօրեն  
Բանասիրական գիտությունների  
թեկնածու»*

## **ՄԻԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ**

### ***Ներածություն***

Վենետիկի Մխիթարյան միաբանությունն աշխարհի խոշորագույն հոգևոր, հայագիտական, մշակութային և կրթական կենտրոններից մեկն է: Հիմնադրման օրվանից առ այսօր նա շարունակում է գործել այն սկզբունքների հիման վրա, որոնք ձևավորվել են Մխիթար Սեբաստացու ջանքերով ու պահանջներով: Միևնույն ժամանակ, երեք հարյուրամյակների ընթացքում միաբանությունը յուրացրել է տվյալ ժամանակաշրջանի նորությունները, դարձրել համահունչ ավանդական պահանջներին և գործել ի շահ սեփական ազգի ու ժողովրդի բարօրության: Այսինքն, հոգևոր այս կենտրոնը երբեք «քարացած» չի եղել, միշտ շարժվել է ժամանակին համընթաց, ինչի շնորհիվ ոչ թե գոյատևել է դարերի ընթացքում, այլ դարձել առաջատար մի շարք ուղղություններում: Վերջին տասնամյակներն, այս առումով, բացառություն չեն: Թվայնացման ու տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում միաբանության գործունեությունը ձեռք է բերել նոր ուղղվածություն. ինչը, կարծում ենք, հնարավորություն է տալիս ներկայանալ աշխարհին նոր լույսի ներքո:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Մխիթարյան միաբանության գործունեությունը վերջին տասնամյակներում՝ հիմնվելով հեղինակային դիտարկումների և փորձի վրա: Ցավոք, ներկա շրջա-

նում միաբանության գործունեության վերաբերյալ գիտական կամ վերլուծական աղբյուրներ գրեթե չկան:

Ուսումնասիրության ընթացքում փորձ է արվել բացահայտել միաբանության արդի դերակատարությունը հայկական մշակութային, կրթական և հոգևոր կյանքում՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերներն ու զարգացումները: Այս համատեքստում միաբանության գործունեությունը վերլուծում ենք երեք ուղղություններով.

ա) որպես հոգևոր կենտրոն՝ ընդգծելով նրա առաքելությունը հավատքի պահպանման, քարոզչության և համայնքային կյանքի կազմակերպման ոլորտներում,

բ) որպես գիտակրթական կենտրոն՝ ներկայացնելով կրթական ծրագրերը, գիտահետազոտական աշխատանքները և հրատարակչական գործունեությունը,

գ) որպես հայագիտական կենտրոն՝ կարևորելով նրա ներդրումը հայ մշակույթի պահպանման, զարգացման և միջազգային ճանաչման գործում:

Նման բազմակողմանի մոտեցումը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել միաբանության ներկայիս գործունեության, առաջնահերթությունների և ապագայի զարգացման հնարավոր ուղղությունների մասին:

### ***Միաբանությունը՝ հոգևոր կենտրոն***

Մխիթարյան միաբանությունը գործունեության սկզբից ի վեր առանձնացել է որպես հոգևոր կենտրոն, որի համահայկական հնչեղությունը տարածվել է աշխարհասփյուռ հայության տարբեր համայնքների վրա: Պատմական դիտարկումը ցույց է տալիս, որ միաբանության ձևավորումն ու կայացումը սերտորեն կապված են նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացու գաղափարական և կազմակերպչական տեսլականի հետ: Վերջինիս կողմից կաթոլիկ եկեղեցու սկզբունքների ընդունումը ոչ միայն գաղափարական ընտրություն էր, այլև ռազմավարական քայլ, որը հնարավորություն տվեց հաստատել հարաբերություններ Վատիկանի հետ և ապահովել գործունեության

հարաբերական ինքնուրույնություն՝ հատկապես այն պատմական պայմաններում, երբ հայությունը գտնվում էր քաղաքական և մշակութային տարբեր ազդեցությունների ներքո:

Գիտական գրականության մեջ բազմիցս ընդգծվում է, որ այս հանգամանքը վճռորոշ դեր է խաղացել միաբանության կայացման և հետագա զարգացման գործում, քանի որ դրա շնորհիվ ստեղծվեց բարենպաստ միջավայր կրթական, մշակութային և հոգևոր գործունեության ընդլայնման համար<sup>21</sup>: Միաժամանակ, միաբանությունը, չսահմանափակվելով զուտ դավանաբանական շրջանակներով, իր գործունեության մեջ աստիճանաբար ներառեց համաքրիստոնեական արժեքների տարածման և պահպանման խնդիրը: Այս մոտեցումը հնարավորություն տվեց համադրել ազգային և համընդհանուր արժեքները՝ ձևավորելով յուրահատուկ հոգևոր-մշակութային համակարգ, որը բնորոշ է Մխիթարյան ավանդույթին:

Ժամանակի ընթացքում Մխիթարյան միաբանությունն ընդլայնեց իր գործունեության աշխարհագրական և բովանդակային սահմանները՝ դառնալով ոչ միայն հայ կաթոլիկ համայնքների, այլև ընդհանրապես հայության համար կարևոր հոգևոր հենարան: Այս գործընթացը հատկապես տեսանելի է 18–19-րդ դարերում ձևավորված կենտրոնների գործունեության մեջ, որոնք միաժամանակ հանդես էին գալիս որպես կրթական և մշակութային օջախներ՝ նպաստելով հայ ինքնության պահպանմանը օտար միջավայրերում:

Արդի շրջանում միաբանությունը շարունակում է իր պատմական առաքելությունը՝ հանդես գալով որպես հայ կաթոլիկ եկեղեցու կարևորագույն կառույցներից մեկը: Նրա գործունեությունը միտված է կաթոլիկ հայերի հոգևոր կյանքի կազմակերպմանը, հավատքի ամրապնդմանը և ազգային-կրոնական ինքնության պահպանմանը:

---

<sup>21</sup>Նշենք այդ աղբյուրներից երկուսը. Ստեփանոս Ազոնց Գիւլէր, Պատմութիւն կենաց եւ վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացոյ լաբունապետի եւ աբբայի, Վենետիկ, 1810, 366 էջ: Մխիթար Սեբաստացի, Վենետիկ, 1976, 40 էջ:

Միաբանությունը, սակայն, չի սահմանափակվում միայն ներ-եկեղեցական գործունեությամբ, այլև ակտիվորեն ներգրավված է միջկրոնական և միջմշակութային երկխոսության գործընթացներում: Տարբեր դավանական և մշակութային շերտերի հետ ազատ շփումները հնարավորություն են տալիս հաստատել կայուն հարաբերություններ այլ քրիստոնեական համայնքների հետ: Այս հանգամանքը կարևոր է հատկապես այսօր, երբ կրոնական կառույցների դերակատարությունը հաճախ պայմանավորված է նրանց երկխոսության կարողությամբ և համագործակցության պատրաստակամությամբ:

Ինչպես միշտ, այնպես էլ այսօր, միաբանության հոգևոր գործունեության հիմքում ամենօրյա եկեղեցական արարողություններն են, որոնք ներառում են պատարագներ, ժամերգություններ, քարոզներ, պսակադրության և կնունքի արարողություններ և այլն: Դրանք ոչ միայն կրոնական կյանքի անբաժանելի մասն են, այլև կարևոր սոցիալ-մշակութային գործառույթ ունեն՝ համախմբելով համայնքը և ապահովելով հոգևոր շարունակականությունը: Միաբանությունը փորձում է պահպանել ավանդական ծիսակարգը՝ միաժամանակ այն հասանելի դարձնելով ժամանակակից հավատացյալին: Այսօր միաբանությունում ամեն օր սահմանված կարգով իրականացվում են ժամերգություններ, որոնց մասնակցում են տարբեր տեղերից ժամանած հավատացյալներ: Օգտագործելով թվային դարաշրջանի հնարավորությունները՝ պատարագները, հոգևոր տոների ժամանակ կազմակերպված արարողությունները տարածվում են նաև Դիմագրքի միջոցով՝ հնարավորություն տալով հավատացյալներին դառնալ այդ արարողության մի մասը, մասնակցել հեռահար ձևով, տարածության միջով լսել և զգալ քարոզչի խոսքը: Աշխարհի տարբեր ծայրերից միաբանություն են այցելում աշխարհասփյուռ հայեր՝ պսակադրվելու, մկրտվելու կամ մկրտելու իրենց զավակներին կամ պարզապես ստանալու միաբանների օրինությունը:

Հոգևոր գործունեության համատեքստում, ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, առանցքային տեղ է զբաղեցնում հոգևոր

կրթության կազմակերպումը: Իրականացվում են տարբեր ծրագրեր՝ ուղղված թե՛ հոգևորականների պատրաստմանը, թե՛ աշխարհիկ հավատացյալների կրոնական գիտելիքների խորացմանը: Ժամանակակից պայմաններում հաճախ օգտագործվում են թվային հարթակները, ինչը հնարավորություն է տալիս ընդգրկել ավելի լայն լսարան և ապահովել կրթության շարունակականություն աշխարհագրական սահմաններից դուրս: Մշակված է հատուկ ծրագիր, որով կազմակերպվում է կրթական գործընթացը տարբեր վայրերում գործող Մխիթարյան դպրոցներում:

Միաբանությունը կարևորում է հավատացյալների հետ շարունակական կապի պահպանումը, ինչը հատկապես նշանակալի է սփյուռքյան պայմաններում: Տարբեր համայնքներում իրականացվող հոգևոր ծառայությունները, խորհրդատվությունները և մշակութային միջոցառումները նպաստում են համայնքային կյանքի ակտիվացմանը և ազգային ինքնության ամրապնդմանը:

### ***Միաբանությունը՝ գիտահետազոտական կենտրոն***

Մխիթարյան միաբանության գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը գիտահետազոտական աշխատանքն է, որը պատմականորեն ձևավորվել է դեռևս նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացու կողմից սահմանված սկզբունքների հիման վրա: Սեբաստացին կրթությունն ու գիտությունը դիտում էր ոչ միայն որպես լուսավորության միջոց, այլև որպես ազգային ինքնության պահպանման և զարգացման կարևորագույն գործիք<sup>22</sup>: Այս ավանդույթը շարունակվում է նաև արդի փուլում՝ նոր ձևաչափերով և մեթոդաբանական մոտեցումներով:

Վենետիկում գործող միաբանության կենտրոնն այսօր հանդես է գալիս որպես միջազգային նշանակության գիտահետազոտական միջավայր, որտեղ համադրվում են ավանդական հայագիտա-

---

<sup>22</sup> Բ. Ֆերիաթյան վրդ., Մխիթար. մարդը, հայը, սուրբը, Վիեննա, 1976, 167 էջ; Յ. Պզտիկեան վրդ., Մխիթար վրդ. Սեբաստացիի և Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին, Երեւան, 2003:

կան ուսումնասիրությունները և ժամանակակից գիտական մոտեցումները: Միաբանության գիտական գործունեությունը ներառում է ինչպես ներքին՝ միաբանների կողմից իրականացվող հետազոտությունները, այնպես էլ արտաքին՝ միջազգային գիտական հանրության հետ համագործակցությունը: Գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են դարերի ընթացքում միաբանությունում ամբարված ձեռագիր և տպագիր ժառանգության, ինչպես նաև պատմական վավերագրերի, արխիվային փաստաթղթերի հիման վրա: Միաբանության անդամների հետազոտական աշխատանքներն ընդգրկում են տարբեր ոլորտներ, բայց առանցքը մնում է սեփական պատմության, միաբանների կյանքի և գործունեության ուսումնասիրությունը: Հենց այս տեսանկյունից են այսօր առաջնահերթ միաբանների նամակների վերծանումն ու հրատարակությունը: Կարծում ենք՝ Չամչյանի, Ալգերյանի, Սեբաստացու և մյուսների գրությունները նոր լույս կսփռեն միաբանության պատմության վրա: Օգտագործվում են թվային տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս տեսածրել նյութերը, մշակել, նիշաճանաչել և պատրաստել հրապարակման:

Միաբանության գիտահետազոտական ներուժի առանցքային բաղադրիչներից է նրա հարուստ մատենադարանը, որը դարերի ընթացքում ձևավորվել է որպես հայկական և համաշխարհային մշակույթի արժեքավոր հավաքածու: Այն բաժանվում է երկու հատվածի՝ ձեռագիր և տպագիր: Մխիթարյան մատենադարանը հազարավոր ձեռագրեր, հնատիպ և նորատիպ գրքեր, պարբերականներ, որոնք ընդգրկում են հայագիտության գրեթե բոլոր ոլորտները՝ լեզվաբանությունից և պատմությունից մինչև աստվածաբանություն և արվեստագիտություն: Այստեղ ամբարվել են ինչպես Միաբանության տպարանում հրատարակված գրքերը, այնպես էլ աշխարհի տարբեր ծայրերում տպագրված նյութերը, որոնք պարտադիր առաքվել են միաբանություն: Ակտիվ գրավաճառ ցանցի շնորհիվ այսօր միաբանու-

թյունում պահպանվում են այնպիսի տպագիր նյութեր, որոնք եզակի են, առկա են միայն այստեղ:

Յուրաքանչյուր տարի միաբանություն են այցելում անհատ գիտնականներ, գիտական տարբեր խմբեր՝ տեղում հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար: Միաբանների հետ ակտիվ համագործակցության շնորհիվ հենց այս նյութերի հիման վրա յուրաքանչյուր տարի գրվում են գիտական հոդվածներ, մենագրություններ, որոնք ծառայում են հայագիտության զարգացմանը:

Բացի ուսումնասիրություններից, միաբանության գիտահետազոտական աշխատանքների առանցքում են գտնվում գիտաժողովները, որոնք կազմակերպվում են հենց Ս. Ղազար կղզում: Թեմաները տարբեր են, սակայն բոլորի հատման կետը Մխիթարյան միաբանությունն է: Միաբաններն իրենց հերթին մասնակցում են Հայաստանում և աշխարհի տարբեր վայրերում կազմակերպված միջազգային գիտաժողովներին՝ ներկայացնելով իրենց գիտական տարբեր թեմաներ:

Վերջին տասնամյակում Մխիթարյան միաբանությունը զգալի առաջընթաց է արձանագրել ձեռագիր ու տպագիր ժառանգության պահպանության ուղղությամբ՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաների հնարավորությունները և տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունները: Այսօր քայլեր են ձեռնարկվում ձեռագիր ու տպագիր ժառանգությունը թվայնացնելու, էլեկտրոնային քարտարաններ ստեղծելու, միջազգային արխիվային և գրադարանագիտական չափանիշներին համապատասխան գործառույթներ մշակելու ուղղությամբ: Այս ուղղությամբ միաբանությունը համագործակցում է Հիմնարար գիտական գրադարանի, «Իրական դպրոց»-ի, «Ինսթիտյուտ» գիտահետազոտական կենտրոնի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և այլ կազմակերպությունների հետ: Թվայնացման ծրագրերը կարևոր նշանակություն ունեն հայագիտության զարգացման տեսանկյունից: Դրանք հնարավորություն կտան աշխարհի տարբեր համալսարանների և հետազոտական

կենտրոնների գիտնականներին օգտվել այն աղբյուրներից, որոնք նախկինում հասանելի էին միայն սահմանափակ շրջանակի համար:

***Միաբանությունը՝ հայագիտական կենտրոն***

Անհնար է չնշել, որ Մխիթարյան միաբանությունը ժամանակի ընթացքում վերածվել է յուրօրինակ «փոքրիկ Հայաստանի», որտեղ համադրվում են ազգային ինքնության պահպանման, գիտական մտքի զարգացման և մշակութային ժառանգության ներկայացման կարևոր գործառույթները: Միաբանության գործունեությունը վաղուց արդեն դուրս է եկել զուտ կրոնական շրջանակներից՝ վերածվելով համահայկական նշանակության մշակութային առաքելության:

Հոգևոր այս կենտրոնն առաջին հերթին կարևոր դեր ունի հայագիտության զարգացման գործում: Այստեղ ստեղծված գիտական միջավայրը նպաստել է լեզվաբանական, պատմագիտական, գրականագիտական և արվեստագիտական հետազոտությունների իրականացմանը: Միաբանության անդամները դարեր շարունակ կազմել են բառարաններ, հրատարակել դասագրքեր, ուսումնասիրություններ և բնագրեր՝ ձևավորելով գիտական այնպիսի ժառանգություն, որն այսօր էլ մնում է արդիական: Այս առումով միաբանությունը ոչ միայն պահպանել է անցյալի գիտելիքը, այլև դարձել է այն փոխանցող և զարգացնող հաստատություն, որն իրար է կապում սերունդներին:

Մխիթարյան միաբանությունը առանձնահատուկ նշանակություն ունի որպես հայկական ինքնության խորհրդանշական տարածք Եվրոպայում: Նրա վանական համալիրները, գրադարանները և կրթական կառույցները ստեղծում են մի միջավայր, որտեղ հայկական լեզուն, ավանդույթները և մշակույթը ոչ միայն պահպանվում են, այլև ապրում են իրենց բնական ընթացքով: Սա հատկապես կարևոր է սփյուռքի պայմաններում, որտեղ ինքնության պահպանությունը հաճախ բախվում է ճուլման գործընթացների հետ: Միաբանությունը այս իմաստով հանդես է գալիս որպես մշակութային դիմադրության և ինքնության պահպանման հենարան:

Ս. Ղազարն այսօր Վենետիկի ամենայցելու կղզիներից մեկն է: Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, երբ մտնում է Վենետիկ, անպայման այցելում է Ս. Ղազար: Այցելությունների համար նախատեսված են հատուկ ժամեր, սակայն հաճախ մարդիկ, հատկապես հայերը, հայտնվում են Ս. Ղազար կղզում տարբեր ժամերի: Ոչ ոք ձեռնունայն ետ չի վերադառնում: Տարբեր երկրներից գիտնականներ, ուսանողներ, մշակութային գործիչներ և զբոսաշրջիկներ բազմիցս այցելում են միաբանություն՝ ծանոթանալու հայկական մշակույթին, պատմությանը և գիտական ժառանգությանը: Այս այցելությունները նպաստում են ոչ միայն հայկական մշակույթի ճանաչմանը, այլև միջմշակութային երկխոսության խորացմանը: Այստեղ ստեղծվում է մի հարթակ, որտեղ Հայաստանը ներկայանում է իր մշակութային ամբողջականությամբ՝ անկախ աշխարհագրական սահմաններից:

Միաբանության կարևորագույն բաղադրիչներից է նաև նրա թանգարանը, որը հանդիսանում է հայ մշակույթի նյութական ժառանգության պահպանման և ցուցադրման կարևոր կենտրոն: Թանգարանում պահվող ձեռագրերը, հնատիպ գրքերը, արվեստի նմուշները և պատմական արժեքները վկայում են հայ ժողովրդի հարուստ անցյալի մասին: Թանգարանը, կարելի է ասել, կենդանի վկայությունն է այն բանի, թե ինչպես կարելի է սփյուռքում պահպանել և ներկայացնել ազգային ժառանգությունը բարձր մակարդակով:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Մխիթարյան միաբանությունը, թեև պաշտոնապես չունի պետական կամ դիվանագիտական կարգավիճակ, իրականացնում է յուրօրինակ «փափուկ դիվանագիտություն»: Իր գործունեության միջոցով այն ներկայացնում է Հայաստանը միջազգային հանրությանը՝ որպես մշակութային, գիտական և պատմական հարուստ ավանդույթներ ունեցող երկիր: Միաբանության հրատարակությունները, գիտական կապերը և մշակութային նախաձեռնությունները նպաստում են Հայաստանի դրական կերպարի ձևավորմանը արտերկրում: Այս

առումով այն կարելի է դիտարկել որպես ոչ պաշտոնական դիվանագիտական առաքելություն իրականացնող կառույց, որը կամրջում է Հայաստանը և եվրոպական մշակութային տարածքը:

### ***Եզրակացություն***

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Մխիթարյան միաբանությունը պահպանել է իր հիմնադիր սկզբունքները՝ միաժամանակ հարմարվելով ժամանակակից աշխարհի փոփոխվող պայմաններին: Նրա գործունեությունը բնութագրվում է ավանդույթի և նորարարության համադրմամբ, ինչը հնարավորություն է տալիս միաբանությանը պահպանել իր ազդեցությունն աշխարհում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	5
<b>ПРЕДИСЛОВИЕ</b> .....	7
<b>FOREWORD</b> .....	9
<b>ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԿԱՆՅԱՆ</b>	
Մխիթար Սեբաստացու կյանքն ըստ Ստեփանոս Ազոնց Գյուլերի.....	11
<b>ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ</b>	
Մխիթար Սեբաստացու Աշխարհաբարի քերականությունը.....	24
<b>ՆԱԻՐԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ</b>	
Պատրանքի և իրականության ժամադրավայր. Սուրբ Ղազար կղզին.....	29
<b>ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ</b>	
Մխիթար Սեբաստացու «Տաղարան»-ը.....	40
<b>ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԿԱՆՅԱՆ</b>	
Մխիթար Սեբաստացու դերը հայ իրականության մեջ՝ մանկավարժական դիտակետից.....	53
<b>ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ</b>	
Վիկտոր Լանգլուան Վենետիկի Մխիթարյան միաբանության մասին .....	66
<b>ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ</b>	
Ղևոնդ Ալիշանը Մխիթար Սեբաստացու մասին.....	79
<b>ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ</b>	
Մխիթարյան միաբանությունն այսօր.....	88



# ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ

Հոդվածների ժողովածու

Ստորագրված է տպագրության 21.04.2026:  
Չափսը՝ 60X84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպ. 6.25 մամուլ:

**«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ**

**Հրատարակչություն**

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 055-52-79-74

Էլ. փոստ [lusakn@ramble](mailto:lusakn@ramble)